



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



60



1999



ԽԱՉ ՏԱՆՈՂ

ՏԵՍԻԼ

Ե Ի

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳՈՅ

ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳԼԻԵՐԷՆԷ

Ե Ի ՀԱՒԱՔԵԱՅ

ՏԻԿԻՆ Շ. ՀՈՒՓՈՒՄԷ ՇՄԱԻՈՒԵԱՆ



1978

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتیہ طبع اولتشد  
۷ جازالاول ۳۰۰ و ۲ نیسان ۹۹ نومرو ۹۰

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՅԱՅԵԱՆ

1883





Թէ՛ Սուրբ գիրքէն և Թէ՛ փորձառութենէ կը սորվինք Թէ մեր կեանքը կարճ և թշուառութեամբ լի է, և Թէ ամենէն փայլուն վիճակներն անգամ իրենց յատուկ ցաւերն ու նեղութիւններն ունին. ուստի զարմանք չէ որ Աստուածպաշտութիւնն ևս իւր յատուկ նեղութիւններն ու ցաւերն ունի. քանզի «Նեղ է այն դուռը ու նեղուացք է այն ճամբան, որ դէպ ՚ի կեանք կը տանի»:» Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Նեղութիւններու մէջ կը պարծինք» և «գիտենք Թէ նեղութիւնը համբերութիւն կը գործէ և համբերութիւնը փորձառութիւն և փորձառութիւնը յոյս և յոյսը ամօթով չի ձգեր»:» Անվեհեր առաքեալը կը սիրէր մանաւանդ իւր մարմինի խայթոցը յիշել քան այն տեսիլքներն որոց համար պարծելու իրաւունք ունէր, քանզի նա գիտէր Թէ Տէրօջը զօրութիւնը տկարութեան մէջ կը կատարուի: Ահա՛ այս է ԽԱՉ ՏԱՆԵԼ և այս է խաչակրութեան վախճանը: Մարդկային բնութիւնն տկար և անզօր է մանաւանդ նեղութիւն կրելու մէջ. ուստի նեղութենէ ազատելու համար այլ և այլ ճամբաներ կը փնտռէինչպէս յետագայ պատկերաց և տեսիլքի ըն-

4 804-ա

28. 806



Թացքէն պիտի տեսնուի : Աստ անդ մէկ քանի կտոր թարգմանել զանց եղած է և անոնց տեղ ողջամիտ ընթերցողաց արդէն ծանօթ մի քանի երգեր գրուած են և մի քանի ևս որք յատուկ գրուեցան : Եթէ վասն սիրոյն ֆրիստոսի տառապանաց և խաչակրութեան մէջ եղող ընթերցողն այս տեսիլքիս վերծանութենէն իրեն սիրովանք և առաջնորդութիւն գտնէ , Անգլիական լեզուէն 'ի Հայկականն թարգմանելու համար իւր վատնած աշխատանքը բիւրապատիկ վճարուած կը սեպէ :

Թարգմանիչն

## ՅԱՆԿ

### ԳԼ. Ա

ՕՐԻՆԱԿԱԿԱՆ ԽԱՉ ՏԱՆՈՂԸ . . . . .	1
Ետուն ըմպել քեզ զեղին . . . . .	4
Յիսուս ֆրիստոս տեսայ քուկին . . . . .	5
Ահաւոր տեսարան . . . . .	6
Երբ այն խաչին ես կը նայիմ . . . . .	7
Մէկը տեսայ փայտէն կախուած . . . . .	8
Փառաւորեալ Աստուածորդի . . . . .	9
Ո՛րչափ քաղցրը է այն ժամը . . . . .	10
Թէ որ զքեզ, ո՛հ, Տէր Յիսուս . . . . .	10

### ԳԼ. Բ

ԽԱՉԸ ԿԸ ՄԱՏՈՒՅՈՒԻ . . . . .	11
Վկայութիւն Ֆէնէլոնէն . . . . .	15
“ Թովմաս Գեմրացիէն . . . . .	15
Այս աշխարհիս ունայնութիւն . . . . .	16
Յիսուս նախ ինք խաչ մը վերցուց . . . . .	17
Միթէ Յիսուս լոկ խաչն տանի . . . . .	18

### ԳԼ. Գ

ԽԱՉԸ ԿԸՆՏՐՈՒԻ . . . . .	19
Վկայութիւն Ֆէնէլոնէն . . . . .	22
“ Թովմաս Գեմրացիէն . . . . .	23
Թէև սիրտս ընտրեց “այն աղէկ բաժինն” . . . . .	23
Ազատ, անկախ, Տէ՛ր, չեմ՝ ուզեր . . . . .	27
Հայրը որդւոյն կը կամի՞ չար . . . . .	28
Ճամբաս դուն , Տէր , ընտրէ . . . . .	28



ԳԼ. Ե

ԽԱԶԸ ԿԸ ԿՐՃԱՏՈՒԻ	29
Վ. կայու-թիւն Պէքոգրէն	30
"    Պընեանէն	31
"    Թովմաս Գեմբացիէն	31
Տրամած ատենս երբ կարենամ	32
Խռովեալ Հոգիս Հանդարտ կեցիր	33
Յիսուս, դու ինձ եղիր Հովիւ	34
Ո՛ր կողմ դառնամ լացով ողբով	35

ԳԼ. Ե

ԽԱԶԸ ԿԸ ՊԱՇՏՈՒԻ	36
Վ. կայու-թիւն Ֆէնէլոնէն	41
"    Թովմաս Գեմբացիէն	41
Խաչ ի՞նչ է	42
Խաչդ առ ինձի հետեւէ	44
Ով մեղաւոր մարդ, խեղճ, թշուառ	45
Ո՛վ տառապանաց աշխարհը	45
Նեղ է ճամբան	46

ԳԼ. Զ

ԽԱԶՆ ԱՄԹԹ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ	48
Վ. կայու-թիւն Պընեանէն	50
"    Թովմաս Գեմբացիէն	53
ԶՅիսուս ամօթ չհամարեւ	54
Վ. կայէ՛, վ. կայէ՛ Յիսուսի համար	55
Այն ուրբ գլուխն ժամանակաւ	56
Եթէ զինուոր եմ խաչին	57
Ով Տէր Յիսուս, քեզ կը սիրեմ	57

ԳԼ. Է

ԽԱԶԸ ՊԱՐԹԱՆՔ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ	58
Վ. կայու-թիւն Պընեանէն	61

Մահուան տանող լայնկէկ ճամբէն	62
Փրկիչ իմ, երբ ըլլայ պիտի	63
Ոմանք կը պարծին հարստութիւնսով	63
Թափառական Հոգիս	64
Մի թողուր զիս, ով Աստուածս	65

ԳԼ. Ը

ԽԱԶԸ ԿԸ ՏԱՐՈՒԻ ԸՏ ՔՄԱՅ	66
Վ. երջին երեք հրաւերներն	72
Արթնցիր ել, ո՛վ մեղաւոր	74
Տէր այցելութեամբդ երկիրը	74
Մոլոր ոչխար էի	76
Ո՛ւր կայ հանդատութիւն	77
Երբ հաւատքով կարող ըլլամ	78

ԳԼ. Թ

ԽԱԶԸ ԿԸ ՏԱՐՈՒԻ ԶՀԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ	79
Յիսուս, աշխարհքը եմ ձգած	84
Ես կը լեմ՛ ձայնդ, ով Յիսուս	85
Անթիւ մեղքերս երբ յեշեցի	86
Տէրոջը ձայնը լսեցի	87
Տէր Յիսուսի երակներէն	88
Ինչպէս որ իմ մեղքով լեցուած	89
Այո, լոյս ես, Տէր սիրելի	90

ԳԼ. Ժ

ԽԱԶԸ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ ԴԺՈՒԱՐԱՏԱՐ	91
Վ. կայու-թիւն Ըբհամէն	101
"    Թովմաս Գեմբացիէն	102
Կոիեալ զնայի ես զըւարթ	102
Վ. երջն հանգիւր	103
Ով Քրիստոսի օրհնեալ զինուորն	106
Քեզ ի՞նչ եղաւ. մի քնանար	107
Հոգիս զգոյշ կեցիր	108





ԳԼ. ԺԱ

ԽԱՁԸ ԿԸ ԹԵԹԵԽԻՅՈՒԻ	108
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՊԸՆԵԱՆԷՆ	114
ՈՎ ՓՐԿԻՆՆԱՍ, ՕՐՆ ԻՂՏԾ Է	117
Խոր խաւարի մէջ ես կը խարխափեմ	118
Հոգիս, լուռ կեցիր, Տէրը կը խօսի	119
Օրէնք անգուժ գոռ Սինայի	120
Շընորհաց ակթոռն փնտռող	120
ՈՎ մարդ, հոգե՞ր, վիշտե՞ր ունիս	121


ԳԼ. ԺԲ

ԽԱՁ ՊՍԱԿ	122
Յաւերս շատ են, իսկ ես շատ տկար	130
Քաղցրիկ ազգու խորհուրդ մը կայ	131
Գետին եղերքն ես կ'սպասեմ	132
Երուսաղէմ, տուն փառաւոր	133
Արդեօք այն գետին եղերքը	134
Քանի մը տարիէն	135
Հարկ է մեռնիլ, պիտի մեռնիմ	136
Ի՞նչ գեղեցիկ ու զարդարուած	137
Սիրելիներս, եկէք	138
Ես չեմ ուզեր հեռու անդրիլ երկիրքէն	139
Երբ կը նայիմ գերեզմանին	140
Ինչո՞ւ վազեն մեր արցունքներն	141
Տէրոջն հետ յաւիտեան	141





## ԽԱԶ ՏԱՆՈՂ



Ս. ՕՐԻՆԱԿԱԿԱՆ ԽԱԶ ՏԱՆՈՂԸ

Անոր երեսը մարդու երեսին, ու կերպարանի մարդու  
արդարացին առել աւրած էր : Եսայի :

Մտաւոր յուզմանց զորս պահ մի կրեցի՝  
յաջորդեց մի ժամ հանգստեան, և ես տակաւ  
առ տակաւ սկսայ նիրհել խռովեալ քնով :

Ինձ այնպէս թուեցաւ թէ միջօրեայ  
ժամն էր ճիշդ, և ես Երուսաղեմայ փողոց-  
ներէն միոյն մէջ կանգնած էի խռնեալ ամ  
բոխի մը մէջտեղ, որ մի և նոյն զգացմամբ  
յուզեալ յառաջ կ'ընթանար դէպ հիւսի-  
սային կողմ քաղաքին :

Ո՛հ, ի՛նչ տեսարան բացուեցաւ աչացս  
առջև : Իմ Տէրս հոն էր, բայց ի՛նչ վիճակի  
մէջ, և որո՛ց հետ : Արդէն զնա սիրողք սա-  
կաւք էին, բայց հիմա սիրելիք և բարեկամք,  
բոլորն անկէ հեռու, տկարացած, ճնշուած և  
յուսահատ են, և չարչարուողին կարեկցու-  
թեան խօսք մը անգամ ըսել կարող չեն :



Երբ ի մահ կը վարուէր նա, բիրտ և անգութ զինուորը ընկերացած էին անոր: Իբրև փոխարինութիւն, հայհոյանք և նախատինք կը տեղային մարդկութեան շրթունքներէն, հանդերձ խուժանի հրճուանօք և երգիծական դառն կատակաբանութեամբ, Անոր վերայ՝ որ եկած էր յերկնից փրկել զնա: Զինուորներէն ետքը քահանաները, դպիրները և վարիսեցիներն ատելութեան և անգթութեան մթնոլորտ մը կը կազմէին անոր բոլորտիքը:

Երբ աչքս դարձուցի, տեսայ որ այն հիանալի էակը կը դողդղար և կը մարէր կոշտ գերանին տակ, զոր անոր վերայ բարձած էին: Յայտնի էր թէ այլ ևս չէր կրնար անոր ծանրութիւնը կրել: Տառապանաց և անքուն դիշերին յաջորդած էին առտուան այն ահարկու տեսարաններն, և այն սուրբ մարմնոյն ոյժը բոլորովին սպառած էր: Եւ ինձ կը թուէր թէ հոն, այն փողոցին մէջ զոր հիմա փրանկները Տօլորօզա կ'անուանեն, գետնատապալ ինկաւ:

Անտան միտքս եկաւ որ ըսուած է թէ, «Մեր մեղքերուն ծանրութիւնը անոր վրայ դրուեցաւ:» Նա խաչը կրեց, խաչն զնա կրէլէն առաջ. բոլոր իւր ուժով կրեց. մեղձ մարդկային ցեղիս և մեր մեղքերուն համար կրեց:

Կայնեցայ, և առջևս բացուած տեսարանը դիտեցի: Արդեօք շիտակ կը տեսնեմ, գոչեցի: Իմ Տէրս է այս, — իմ Առտուածս, — տկար մարմինս հաղած, մեղքերուս ծանրութեան տակ ճնշեալ: Մարմնացեալ Սէր, և այս բոլորն ինձի համար: Համբերող, հեղ և տանջուելու պատրաստ: Անտարակոյս բնաւ առաջ այս տեսարանը մտքիս վրայ այսպէս տալաորութիւն ըրած չէր:

Եթէ հասարակ բարեկամներէս մին իմ սխալմամբս խոր տրտմութեան մէջ իյնայ, իմ սիրտս կը վշտանայ. և սոյն զգացումս երթալով կ'աւելնայ տեսնելով սխալանացս ծանր հետեանքը, նեղութիւնը կրողին մեծութիւնը, անոր նեղութեան սաստկութիւնը, մանաւանդ այս նեղութիւններն յօժարութեամբ և զուարթ դիմօք ինձի համար կրելը. ուրեմն իմ Տէրոյն ինձի համար խաչ կրելը տեսնելով իրաւամբ պատճառ ունեցայ այլայլելու:

Այո, ահա՛ այս մասին մէջ իմ բարեպաշտութիւնս աւելնալու է: Պէտք է որ շարունակ, օրէ օր, աւելի աղէկ ըմբռնեմ Քրիստոսի սիրոյն բարձրութիւնը, խորութիւնը, լայնութիւնը և երկայնութիւնը որ ամէն դիտութենէ գերազանց է: Իմ կեանքս բո-



լորովին ֆրիատոսի սիրով կառավարուելու ,  
կենդանանալու , ձևակերպուելու և առաջ-  
նորդուելու է :

Այսպէսով է որ պիտի կարող ըլլամ սրբա-  
նալ — ամենուն տիպարը եղող խաչակիրը  
յանձիս ընդօրինակելով, — մինչև որ հաս-  
կընամ զանիկա , և զանիկա դիտելով՝ նոյն  
պատկերին փոխուիմ փառքէ 'ի փառք , Տէ-  
րովը Հոգւով : Այս , այս է իմ յաղթու-  
թիւնս , սիրելի Տէր , կրնամ ամէն բանէ  
հրաժարել , ամէն բան կրել , ամէն բան ը-  
նել , սպասել , չարչարուիլ , աղօթել , դոր-  
ծել քեզի համար :

Այս պիտի ըլլայ իմ երկինքս — տեսնել  
զանիկա որ խաչին տակ ինձի համար մա-  
րեցաւ :

Ետուն ըմպել քեզ զլեզին ,  
Եւ գրացալին 'ի ծարաւին :

Արբեր կամաւ զի քաղցրասցին  
ձաշակք պտղոյն դառնագունին :

Ձգառնութիւն թունաւորին ,  
Ձոր 'ի մասունս հոգւոյս արկին ,  
Հերքեա 'ի բաց հանդերձ սովին ,  
Եւ քաղցրասցի սէր քոյ 'ի սմին :

Ստեղնեալ ծառոյ մահաբերին ,  
Այնմ որ բուսաւ 'ի մէջ դրախտին՝  
Փոխան բարձեր զփայտ խաչին ,  
'ի Գողգոթայ հաներ տեղին :

Ձիմ առ 'ի մեզս անկեալ զողի  
Եւ ծանրագոյն բարձող բեռին  
Բարձ 'ի յուսոյդ ըստ ոչխարին ,  
Հան 'ի յերկինս յուխտեալ տեղին :

Ի յուրբաթու ժամ երրորդին  
Բեռեցար տէր 'ի խաչին .  
Լուծեր զկապանս նախաստեղծին ,  
Եւ կապեցեր զթշնամին . . . . . :

Երանեալ աւագակին  
Բացեր զգունն ազին դրախտին .  
Ըստ հաւատոյ սրտի նորին  
Կատարեցեր զինդրելին .  
Տուր և ի՛նձ , Տէր , ընդ նմին  
Լսել զնոյն պատասխանին .  
Այսօր ընդ իս իցես յազին ,  
'ի հայրենիս քո առաջին :

ՇՆՈՐՀԱԼԻ

Քրիստոսի Կառնական Տաղը .

Յիսուս Քրիստոս , տեսայ քուկին  
Մահուան ցաւերդ , սոսկաց հոգիս .  
Այո , մեռար դուն կամովին  
Վասն ապստամբ մեղաւորիս :

Դուն տանջեցար , և բընութիւն  
Ողբերգական հեծեց ձայնով .  
Արեն ծածկեց իւր լոյսն փայլուն ,  
Մուրբերն լացին քու մահդ ողբով :



Քու մահըդ, Տէր, զո՛հ սրբազան,  
Միշտ անքերնուս ըլլայ ներկայ.  
Քանզի արիւնըդ պատուական  
Մերին մեղքերն կը լուանայ :

Յիսուս քրիստոս, թող անդադար  
Սրտիս ազդէ սէրդ դերասպանծ.  
Դուն մեր մեղաց համար մեռար,  
Միայն դուն ես փրկիչ Աստուած :

Ահաւոր տեսարան  
Կ'երևայ Գողգոթան.  
Գառի պէս՝ Աստուծոյ սիրելին՝  
Փուշերով պսակուած,  
Իր մարմինը խոցուած՝  
Կապեցին, զահարան կը տանին :

Խաչախայտ կրելով,  
Մնարդանք քաշելով,  
Մեր փրկիչը այն լեռը կ'երլէ.  
Գթութեամբ կը հաճի,  
Ծանր բեռ կը տանի,  
Որ մեր բեռը մեղմէ վերջընէ :

Երևոյթ ահարկու,  
Զանդիկա տեսներու  
Ո՛րչափ խուռն բազմութիւն կը դիպուն.  
Թշնամիք անարդանք,  
Նախատիք, հայհոյանք  
Մեր անմեղ փրկչին դէմ կը խօսին :

Հողիով հոն ելլանք,  
Տեսնելով զարմանանք,  
Սէրը ի՛նչ պտուղներ կը բերէ.  
Այն ամէն տանջանքով,  
Այն ամէն արցունքով,  
Հողինիս դժոխքէն կ'ազատէ :

Ով փրկիչ բարերար,  
Կենսատուդ որ մեռար,  
Քու արիւնըդ սրսկէ մեր վրայ.  
Մեղքերնիս քաւելով,  
Սրտերնիս մաքրելով,  
Քու կողիդ աղբիւրէն մեղ լուա :

Քրիստոսի Խաչելութիւնը.

Երբ այն խաչին ես կը նայիմ,  
Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ,  
Իմին մեծ շահս վնաս կը սեպեմ,  
Հրպարտութիւնս ալ կ'անարդեմ :

Չը պարծենամ ուրիշ բանով,  
Այլ թէ միայն փրկչիս մահով.  
Բոլոր ոչինչ փափաքս իմին  
Ես կը զոհեմ իւր արիւնին :

Տես իւր գլխէն, ձեռքէն, ոտքէն  
Սէր, տրամութիւն մէկ կը վազեն.  
Ե՛րբ միացան ասոնք ասանկ,  
Ի՛նչպէս ըրին փուշերն պըսակ :



Փառքն արքայից ինձի արուէր ,  
Այն շատ պղտիկ պարգև մըն էր .  
Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն  
Արժան է տալ իմ կեանքս ողջոյն :

Քրիստոսի մահուան զօրութեանը .

Մէկը տեսայ փայտէն կախուած ,  
Նեղեալ արիւնջըւայ .  
Ինձ նայեցաւ աչքով տրտմամ ,  
Խաչին երբ մօտեցայ :

Անշուշտ բընաւ ես չեմ մոռնար  
Ի՛նչ նայուածքով կ'ըսէր .  
Իմ մահըս է քեզի համար ,  
Թէպէտ ինք չէր լսուեր :

Ո՛հ , ըզգացի արտամութիւնով  
Իմ մեղքս , ու շատ լացի .  
Տեսայ որ ես մեղանչելով  
Իմ Տէրըս մեռցուցի :

Աւա՛ղ , վա՛յ ինձ , ալ յոյս չունիմ .  
Ղալով ես կանչեցի .  
Ո՛ր կողմ երթամ , որո՞ւ փախչիմ ,  
Զի Տէրն ըսպաննեցի :

Երկրորդ անգամ դրթած աչքով  
Խաչէն ինձ նայեցաւ .  
Եւ իւր շնորհքը յայտնելով  
Սիրով ինձի ըսաւ .

«Չրի շնորհքով ես կը քաւեմ  
Մեղքերդ , սիրելիս .  
Յօժար կամքով մահ յանձն կ'առնեմ ,  
Որ յաւիտեան ապրիս» :

Քրիստոսի զօրութեանը .

Փառաւորեալ Աստուածորդի ,  
Սիրոյ աղբիւր , կեանք աշխարհի ,  
Դէմքիդ լուսոյն սիրտս կը զմայլի ,  
Ո՛վ սիրելիդ իմ Տէր Յիսուս :

Ո՛հ , այն ի՛նչ մեծ սէր ցուցուցիր ,  
Երբ դառն բաժակը խըմեցիր ,  
Որով աշխարհըս փըրկեցիր ,  
Ո՛վ պաշտելի Տէր իմ Յիսուս :

Դուն իմ հոգիս քեզի դարձուր ,  
Տըկար հաւատքըս զօրացուր ,  
Ու փրկութիւնդ ինձի ցուցուր ,  
Ո՛վ կենսատու Տէր իմ Յիսուս :

Ո՛հ , չեմ ուղեր որ սէրդ մոռնամ ,  
Դէմքիդ լուսէն ալ հեռանամ .  
Դուն զիս բըռնէ , Տէր բարեխնամ  
Եւ մարդասէր փրկիչ Յիսուս :



## Խաչի որսի նստիւն :

Ո՛րչափ քաղցրը է այն ժամը ,  
 Որ խաչին առջև կենամ .  
 Կատարեալ խաղաղութիւն մը ,  
 Քրիստոսի մահէն կ'առնեմ :

Հոն սիրով , ցաւով լեցուած եմ ,  
 Իմ արցունքըս կը վազեն .  
 Հաւատքիս մէջ հաստատուած եմ ,  
 Կեանք կ'առնեմ իւր մահուանէն :

Ո՛հ , այս տեղըն ի՛նչ օրհնեալ է ,  
 Երբ խաչիդ տակ կը նստիմ .  
 Գութն Աստուածային փայլած է  
 Շնորհալի աչքէդ , Տէր իմ :

Հոս նստած թող նայիմ մէյմը  
 Իւր զարմանալի սիրոյն .  
 Եւ իւր պատուական արեամբը  
 Գառնայի ես Աստուծոյն :

## Միայն Յիսուս :

Թէ որ զքեզ , ո՛հ , Տէր Յիսուս ,  
 Չունենայի բաժին հոգւոյս .  
 Եւ քու արիւնդ մեղաւորաց  
 Տեղ՝ չ'ստանար ներում մեղաց ,  
 Ամէն խեղճէ ես խղճալի ,  
 Այսօր որո՞ւն կը գիմէի :

ինձ եղկերոյս տեղ չէր ըլլար ,  
 Ձի սրտիդ պէս սիրտ ո՞ւր գտնար .  
 Միշտ գթառատ և զգայուն ,  
 Քեզ դիմողին , սիրով լեցուն .  
 Քեզմէ ուրիշ պէտք չէ ինձ բան ,  
 Յոյս , ապաւէն հոգւոյս միայն :



Բ. ԽԱՉԸ ԿԸ ՄԱՏՈՒՅՈՒԻ

Ան որ իմ երեւեա կոտորայ ընդ էր անշուք սարանայ ,  
 և էր իսպառ վերջիտ , ու իմ երեւեա գայ :

ՔՐԻՍՏՈՍ



Տեսարանը փոխուեցաւ , և ինձ թուեցաւ թէ , երեք սիրելի աշակերտներուն հետ , ահանատես վկայ կ'ըլլայի անոր վեհափառութեան որ առաջ խաչին տակ ընկճեալ երեցած էր : Անոր երեսն արևի պէս կը փայլէր , և հանդերձները լուսոյ պէս ճերմակ էին : Եւ արդ անոր առջև հաճելի դէմքով երիտասարդ մը կայնած էր ճամբորդի հանդերձներ հագած , և երեսը դէպ յերկնային քաղաքը դարձուցած : Տէրը իւր խաչին նման խաչ մը բռնած էր ձեռքը , միայն թէ շատ աւելի փոքր ու թեթև . և երիտասարդին մատուցանելով ըստաւ , « ԽԱՉԸ ԱՌ ԵՒ ԻՄ ԵՏԵՒԻՄ ԵԿՈՒՐ » Այս պատուէրը լսելուն պէս տրամու



Թեան թանձր շուք մը երիտասարդին եւրեսին վրայ երեցաւ, և իսկոյն նուիրեալ խաչէն մէկդի քաշուեցաւ: Ինձ այնպէս եւրեցաւ թէ Նուիրողին վրայ աստիճանաւ մը յարգանք ունէր. բայց իւր մէկդի դարձուցած երեսը և գետին տնկած աչքը կը ցուցունէին թէ ցաւալից պատերազմ մը կար անոր սրտին մէջ: Եւս առաւել համբերութեամբ և սիրով անոր Տէրը խաչը երկնցուց անոր և մեղմ խօսքերով անոր հետ բանակցութեան մտաւ:

Տէրը.— Սիրելի աշակերտս, ես սիրով և ուրախութեամբ չարչարուեցայ քեզի համար: Ես ամօթն արհամարհելով խաչը կրեցի քեզի համար. դուն չե՞ս կրնար զայս ընդունել և կրել ինձի համար:

Աշակերտը.— Ի՛նչ, Տէր, դուն հանգիստ չխոստացա՞ր բոլոր քեզի եկողներուն: Ես կը խորհէի թէ այսուհետև իմ կեանքս անխառն երջանկութեանց տեսարան մը պիտի ըլլար: Ես հաւատալու մէջ ուրախութիւն և խաղաղութիւն կ'ակնկալէի: Ես լսած էի թէ իմաստութեան ճամբաները զուարճութիւն են. բայց հիմա լոկ ԽԱՉ կը գտնեմ: Այնպիսի դժուարութիւններ դիս կը պաշարեն որ առաջ, երբ աշխարհօրէն կ'ապրէի, բնաւ չէի գիտեր: Փորձութիւնք փորձութեանց կը յաջոր-

դեն ովկիանոսի այեաց նման:

Տ.— Որդեակ իմ, քու երջանկութիւնդ հոս նեղութիւններու և վիշտերու մէջ կը գտնուի: Ինձ նմանելով և հնազանդելով է որ պիտի սրբանաս. խաչդ կրելով ուրախութիւն պիտի գտնես. ցածնալով պիտի բարձրանաս. զիջանելով պիտի յաղթես. կեանքդ կորսնցնելով պիտի ապրիս: Ինքզինքդ ուրանալու ես. կիրքերդ թոյլտուութիւն պիտի ուզեն, բայց մերժելու ես: Աշխարհ դքեղ պիտի հրաւիրէ իւր հանդատեան տեղերը, և իւր շողջողուն շքեղութեամբ աչքերդ պիտի չլայնէ, բայց դուն անոր փայլումներուն դէմ դնելու ես: Ես բուն իսկ իմ օրինակովս քեզի ցուցուցի թէ ի՛նչ կ'ուզեմ որ իմ աշակերտներս ըլլան. «սուրբ, անբիծ, անաւատ, մեղաւորներէն զատուած»: Դարձեալ կը կրկնեմ, որդեակ իմ, ԽԱՉ ԱՌ ՈՒ ԻՄ ԵՏԵԻՆՍ ԵՎՈՒՐ:

Ա.— Տէր, այս կերպով փորձուելէ զատ՝ ուրիշ որ և իցէ բանի կը համբերեմ:

Տ.— Դուն կանչուած ես բուն իսկ քու խաչդ կրելու, այն խաչը՝ որ քեզի կը տրուի:

Ա.— Բայց այս խիստ պայմաններուն երբէք մեղմացում չըլլար: Քեզի հետևել կը փափաքիմ. սովայն ի՛նչպէս կրնամ զոհել



դիրքս , հանգիստս և շահերս զոր ունիմ ,  
ընկերութեան մէջ :

Տ. — Իմ աշակերտս կրնաս ըլլալ միայն  
այս պայմանաւ , որ խաչդ առնելով ինձ հե-  
տևիս :

Ս. — Եւ իմ խորհուրդներս մոռնալով եմ :  
Մանկութենէս 'ի վեր սիրտս ուրախութեամբ  
լեցուած է կենաց ապառնի վայելքներու ա-  
կընկալութեամբ : Ինձ կ'երևնար թէ երբ ամէն  
սրտմաշուքէ ազատ ըլլալու չափ ստացուածք  
ունենայի , այնպէս որ իմ ախորժակս յագե-  
ցունէի , և իմ շուրջս գտնուած առարկա-  
ներն ինձ մխիթարական ըլլային , անատեն լա-  
ւագոյն կենաց վրայ ունեցած գաղափարներս  
պիտի իրականանային :

Տ. — Սիրելի որդեակ , քու ամբողջ մտա-  
ծութիւնդ սխալ է : Հանգիստ , զուարճու-  
թիւն և պատիւ չեն կենաց վախճանը . և ո՛չ  
իսկ էականապէս կարևոր են քու ճշմարիտ  
օգտիդ : Ճշմարիտ օգուտդ այն թագն է որ  
խաչով կ'ստացուի : Երբ Յակոբոս և Յով-  
հաննէս ինէ պատիւ խնդրեցին , ես անոնց  
իմ դառն բաժակէս և հրով մկրտութենէս  
բաժին խոստացայ : Ես քենէ առաջ քու  
եղբայրներուդ իմացուցի թէ աշխարհիս մէջ  
նեղութիւններ պիտի ունենային , բայց ինէ

գանելու էին իրենց մխիթարութիւնը : Ես  
յողնածները և բեռնաւորածներն աշխարհի  
խոստումները մերժելով ինձ գալ հրաւիրած  
եմ , որ ինձի համար և ինձի հետ չար-  
չարուելու մէջ հաճոյք զգան . նեղութեան  
մէջ՝ հանգիստ , արտմութեան մէջ՝ ուրախու-  
թիւն , բանտի մէջ՝ երգեր : Այս է խաչին  
գաղտնիքը որ զաշխարհ կը գայթակղեցունէ ,  
բայց քեզի նմանները գայթակղեցունելու չէ :

Դուն կ'ուզես Աստուծոյ օրէնք մը գնել  
որոշելով թէ ի՛նչ մահուամբ կորսնցընելու է  
նա քու անձնասիրութիւնդ , և այն սա պայ-  
մանաւ որ անձնասիրութիւնդ Զյմեգնի Ս. Ի. Ա.  
խաչէն զարհուրելու զգացումներդ յառաջ կ'ու-  
գան քու քաղցկեղէդ , որ վերաբուժի դա-  
նակին կը կարօտի :

«Մեռած մարմնոյն կտրուիլը ցաւ չպատ-  
ճաւեր . կենդանի և բորբոքեալ մարմինն է  
որ կը սոսկայ :»

ՖէնէլՈՆ

Կենաց և սրտի ճշմարիտ խաղաղութեան  
ուրիշ ճամբայ չկայ բայց միայն սուրբ խաչին  
և անընդհատ անձնուրացութեան ճամբան :  
Ո՛ւր որ կ'ուզես գնա , ինչ որ կ'ուզես փրն-  
տուէ , բնաւ պիտի չգտնես , ո՛չ վերը հան-



դիտտ և ոչ վարը ապահով ճամբայ , սուրբ  
խաչին ճամբայէն զատ :

Քրիստոսի բոլոր կեանքը խաչելութիւն և  
մարտիրոսութիւն էր , և դուն քեզի համար  
հանդիտտ և ուրախութիւն կը փնտռես :

Ձեզ՝ ուրեմն ինքզինքդ Քրիստոսի բարի ու  
հաւատարիմ ծառայի մը պէս . կրէ՛ք քաջու-  
թեամբ քու այն Տիրոջդ խաչը , այն Տիրոջդ՝ որ  
'ի սիրոյ ստիպեալ քեզի համար խաչուեցաւ :

Պատրաստէ ինքզինքդ շատ նեղութիւններ  
և վիշտեր կրելու այս ցաւալից աշխարհիս  
մէջ . քանզի այս բաները պիտի պատահին  
քեզ ո՛ւր որ ըլլաս , և ուր որ պահուիս  
պիտի գտնես զայն :

Տէրոջը բաժակէն սիրով սրտի խմէ , եթէ  
կը բաղձաս անոր բարեկամը և բաժանորդն  
ըլլալ :

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ

Այս աշխարհիս ունայնութիւն  
խաբեց , ո՛հ , ի՛նչ մեծ բաղմութիւն .  
Ձըլլայ մենք ալ անով խաբուինք ,  
Հոս մընայուն քաղաք չունինք :

Ազահութեան չար ծընունդներ՝  
Ատելութիւն , նախանձ ու հեռ  
Մէկզի ձրդենք , հեռու փախչինք ,  
Հոս մընայուն քաղաք չունինք :

Ամէն ինչ որ շահինք հոս մենք ,  
Անով մարդոց բարիք ընենք .  
Գանձ դիզելու թող չըզբազինք .  
Հոս մընայուն քաղաք չունինք :

Օ՛ն , ցնծումով դէպ 'ի երկինք  
Քալենք , նա է մեր հայրենիք .  
(Թէ որ հաւատք ու սէր ունինք)  
Հոս մընայուն քաղաք չունինք :

Բարի , խոհեմ ու դործունեայ  
կեանք մը վարենք , քանի լոյս կայ .  
Երբ մահը դայ հասնինք երկինք ,  
Հոս մընայուն քաղաք չունինք :

Գ. Մ. Ծ.

“Ե- որ ոչ առնու զեալ է-ր և իայ զի՛ն է՛ ,  
չէ ինչ արժանի :”

Յիտուս նախ ինք խաչ մը վերցուց ,  
ինձ ալ բառնալ խաչ սորվեցուց ,  
Տէ՛ր , շնորհէ , սիրով սրտի  
Առնեմ՝ յանձն կրեմ՝ զանի :

Թէ խաչս անարդ և անպատիւ ,  
Ես փառամնո՛ղ դիջող հազիւ ,  
Տէ՛ր , շնորհէ , սիրով սրտի  
Խոնարհութեամբ կրեմ՝ զանի :

Թէ խաչս հացի կարօտ աղքատ  
Ընէ , առնէ ոսկիս՝ Լարծաթ ,  
Տէ՛ր , շնորհէ , սիրով սրտի  
Անձս ուրանամ , կրեմ՝ զանի :

1978



Թէ խաչքս դառն՝ բաժակ լեղի ,  
 Դառնացունեն կեանքքս աստի ,  
 Տէ՛ր , շնորհէ , սիրով սրտի ,  
 Մեծ քաջութեամբ կրեմ՝ զանի :

Թէ խաչս ըլլայ սիրտ վիրաւոր ,  
 Նիհար , ցաւոտ մարմին բոլոր .  
 Տէ՛ր , շնորհէ , սիրով սրտի ,  
 Համբերութեամբ կրեմ՝ զանի :

Մնգութ մահուան պաղուկ թաթեր  
 Դեռ չը գոցած իմին աչեր ,  
 Տէ՛ր , շնորհէ , ի՛նչ ալ լինի ,  
 Գրկեմ խաչս , կրեմ՝ զանի :


Կ. Փ. Բ.

Խաչը գանել .

Միթէ Յիսո՞ւս լոկ խաչն տանի ,  
 Եւ մարդս ազա՞տ ըլլայ .  
 Ա՛չ . խաչ մը կայ ամէն մէկուն ,  
 Ինձի ալ խաչ մը կայ :

Ի՛նչ երջանիկ վերի սուրբերն ,  
 Որք հոս կը տրամէին .  
 Բայց հոն անխառն սէր կը վայլեն ,  
 Տնձում ալ լիովին :

Օրհնեալ է խաչս , պիտի տանիմ ,  
 Մինչև որ մահն ինձ դայ .  
 Ու վեր ելլեմ , պրսակս առնեմ ,  
 Ինձի պրսակ մը կայ :






Գ. ԽՍՉԸ ԿՂՆՏՐՈՒԻ

“Ու եւ ի՞նչ հաստիս այլ աստի՞ս լինուալս”

ԳՐԻՍՏՈՍ :



ՄԵԾԱՒ ԽՐՈՄՈՒԹԵԱՄԸ ԵՐԽՈՒՍՈՒՆԱՐՂՆՆ ԿՈՒՄԻՆՈՒԹ ԵՐ ՏԷՐՈՂՄԷ ԻՐԵՆ ՄԻԱՍՈՒՅՈՒՄԸ ԽԱՅՐ : ՆՈՐԱ ՍԱ ԲԱՅԱՅԱՅՈՒ Ե ԵՐՈՂ ԽՍՈՒՔԵՐՆ՝ ԹԷ “Ո՛վ որ մերժէ բառնուղ զիւր խաչ , չէ կտրող լինել իմ աշակերտ ,” հարկադրած էր զնա ընդու նեղ զայն : Բայց փոխանակ զուարթութեամբ իւր ճամբան երթարու՝ կամաց կամաց կը քալէր , և աչքը գետին տնկած հառաչելով կ'ըսէր ,

“Սւանղ որ այսօրէս ըլլալու է եղեր : Կ'ուզեմ քրիստոնեայ ըլլալ , կ'ուզեմ փրկուիլ :”

Ս.ՅԼ արդեօք այս բանին հասնելու համար ուրիշ ճամբայ չկա՞յ անձնուրացութենէ և անձս խաչելէ՞ ի՞նչապա : Արդարեւ գիտեմ թէ պէտք է որ մեզքէ ապաշխարեմ ու փրկչին և միայն անոր արդարութեանն ապաւինիմ : Ս.յս բաներն ըրած եմ և կը յուսայի թէ այսչափս բաւական էր : Բայց հիմա խաչս վերցնելու եմ : Եւ մանաւանդ ԱՅՍ խաչը : Ո՛րչափ ծանր է : Ինչո՞ւ աւելի թեթեւ մը չտուաւ ինձ : Ինչո՞ւ այնպիսի խաչ մը չտուաւ որ աւելի յարմարէր իմ հասակիս , պարագանե-







ծունէութիւնը կ'ընտրէ, քանզի իւր բնութեան աւելի կը յարմարի: Ռէրիշ մը իւր ազահութեան և հարգութեան բնաւ չըյաղթեր. բայց ֆրիստոս դաւանելու և անոր ժողովրդեան հետ աղօթելու դժկամակութեան կը յաղթէ: Նախանձութեան տեղի կը արուի առանց գիտնալու. զրպարտութիւն և շատախօսութիւն յառաջ կը տարուին աւմենայն ճարտարութեամբ: Ոմն կը քաշուի առանձին աղօթելէ, քանզի իշխանութիւններու և սրետութիւններու հետ սրատերազմելու պէս կը թուի անոր. ուստի այսպիսիք կ'ընտրեն ընկերական աղօթներն, ուր չեն ակնկալեր իրենց սրտին սրատերազմներն յայտնել: Այլ ոք կը փախչի իւր վիճակին տառապանքներէն որ Տէրովմէ բուն անոր վրայ գրուած խաչն են: Դարձեալ ուրիշ մը միայն այն բաներուն կը համոզուի որ իրեն հաճելի են: Անձնահաճութիւնը միշտ ամէն բանէ վեր կը դասուի:

«Աստուած ոմանց երկաթէ և ոմանց կապարեայ խաչեր կու տայ որք ինքնին ծանր են. խտտէ կը շինէ խաչերէն ոմանք, որ թէպէտ ծանր չեն երևար, բայց զանոնք կրելու աւելի դիւրին չէ: Աստուած խաչերէն ա-

մանք ոսկիէ և պատուական քարերէ կը շինէ: Եւ մեզի չկնար կապարեայն փոխանակ ոսկեղինին ընտրել, այլ ուզելու ենք որ մեր Տէրովմէ օրհնեալ կամքը կատարուի մեր մէջ, և մեղմով:

ՖԵՆԵԼՈՆ

«Եթէ դուն զուարթութեամբ կրես խաչդ, խաչն դքեղ պիտի կրէ, և առաջնորդէ քեզ վափաքելի վախճանին, այսինքն հոն՝ ուր նեղութեան վախճան պիտի ըլլայ, թէև այս աշխարհիս մէջ պիտի չըլլայ այն:

Եթէ խաչդ ակամայ կրես, դուն քեզի նոր բեռ մը կ'աւելցունես և կը ծանրացունես, և այսու ամենայնիւ կամայ ակամայ կրելու ստիպուած ես:

Եթէ քու խաչերուդ մին նետես, անտարակոյս ուրիշ մը պիտի գանես, թերևս աւելի ծանր մը:»

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԵԱՅԻ

Խաչ կ'ընտրուի.

Թէև սիրտս ընտրեց «այն աղէկ բաժինն»  
Բայց յանկարծ իւր մէկ տրամութեան ժամին  
Յողնեցաւ ինկաւ, երբ դիտեց կենաց  
Յաւն ու նեղութիւնն իւր վրայ ինկած:



Երբոր խորհեցայ թ'ասոնք են ինձի  
ձեռքս փորձաքարներ սիրոյ հաւատքի,  
ինձի անհնար թուեցաւ կրել,  
Հաւատարմութեամբ մինչ 'ի մահ տանել:

Ասանկով ալ ես չ'ապաւինեցայ  
Անոր զօրութեան որ պատուէր կու տայ,  
“Ոչ թէ տեսնելով, հաւատքով քալէ.”  
Մէկէն խորհեցայ թ'իմ խաչս ծանր է:

Անշուշտ իմննըս այլոց խաչերէ,  
Ես աղէկ գիտեմ, աւելի ծանր է.  
Երանի թէ ես ուրիշ մ'ընտրէի,  
Կարծեմ թէ պսակս պիտի շահէի:

Խոր լուծիւն մը չորս կողմը պատեց,  
Ամբողջ բնութիւնն իւր ձայնը կտրեց.  
Իրիկուան շուքը խաղաղ մօտեցաւ,  
Քունն ալ իմ յոգնած հոգիիս եկաւ:

Բոպէ մը այսպէս, ահա՛ երկնային  
Մեծ լոյս մ'երևցաւ աչքերուս իմին,  
Հրեշտակը անհամար ամէն կողմ տեսայ  
Անոյշ երգովին օդը կ'երերայ:

Մէկը գերադոյն տեսայ մէջերնէն  
Որուն ամէնքը ծունր կը կրկնեն.  
Հեղիկ մը ըսաւ, ինձ մօտ գալուն պէս,  
“Ինձի հետեւէ, զի ճամբան եմ ես:”

Ըսաւ, վեր ելաւ՝ զիս ալ հետն առած.  
Սիրոյ սահմաններն մտանք, ես ապշած  
Հոն շատ ձևերով մեծ պղտիկ խաչեր  
Հաւարթուած գտայ իմնէս տարբեր:

Փորրիկ խաչմը կար խիստ շատ պատուական,  
Գեղեցիկ ակեր կը փայլին վրան.  
Ասիկա, ըսի, բերկրութեամբ սրտի  
Կրնամ կրել ես ու կրեմ պիտի:

Շուտ մը ուսս առի այն խաչն պատուական,  
Բայց ծանրութենէն ծունկերս կը դողան.  
Գտայ որ ծանր են գոհարն ու ոսկին,  
Թէև աչքերնուս փայլուն կը թուին:

Այս չըլար, ըսի, ուրիշ մը գտնամ  
Որ նեղութենէ ազատ միշտ մնամ.  
Ես մէկիկ մէկիկ աչքէ անցուցի,  
Մինչև որ գտայ հաստ մը սիրելի:

Գոյնզգոյն ծաղկօք զարդարուած անանկ  
Որ գեղեցկութիւն կոչել զայն կրնանք.  
Մեծ զարմանքով մը ես ինձի ըսի,  
Ինչո՞ւ չ'ընտրեցին ուրիշներն զասի:

Բայց ո՞հ երբոր ես անոր մօտեցայ,  
Իւր ծաղկաց տակը շատ փուշեր տեսայ.  
Տեսածիս պէս ես այս պահուած փուշերն  
Կանչեցի, “Այս խաչն չեմ կրնար կրել:”

Բոլոր այն խաչերն զատ զատ փորձեցի,  
Յուսահատելով դառն արցունք լացի.  
Մանաւանդ երբոր Տէրս ըսաւ ինձի,  
“Առանց դառն խաչի չիք պսակ քեզի:”

Յայնժամ տրտմած սիրտս անոր վերցուցի  
Ինք հրաման ըրաւ որ կասկածս անցնի,  
“Մի վախնար,” ըսաւ, “թէ որ ինձ յուսաս,  
Իմ սէրըս անհուն շուտ պիտի տեսնաս:”



Երբ Տէրըս ինձի այս խօսքը ըսաւ ,  
Սչքիս ու սրտիս նոր լոյս ծագեցաւ .  
Ուստի արտօրնօք դարձայ իմ խաչիս  
Չայն սեփհականեւ դարձեալ իմ անձիս :

Արդ նոյն բողեքին երբ սիրտս էր յօժար  
Հնազանդելու ինչ հրաման ըլլար ,  
Աղէկ պարզ ձևով մէկ խաչ մը տեսայ  
Վրան փորագրուած սիրոյ խօսքեր կայ :

Սիրով այդ խաչը վերուցի գեանէն  
Շատ ուրախացայ , քանզի միւսներէն  
Աւելի դիւրին երևցաւ ինձի  
Կրեւ ու ասեւ միշտ սիրով սրտի :

Բայց երբ այդ խաչին ես իմըս ըսի ,  
Եւ ամէն կողմը լաւ մը դիտեցի .  
Երկնային լոյս մը ծագեցաւ վրան ,  
Տեսայ որ իմին բուն հին խաչս էր այն :

Այլ, ո՛հ , հիմա այն ո՛րչափ աւելի  
Քաղցր ու սիրելի երևցաւ ինձի ,  
Ձի ուրիշներուն հետ բաղդատեցի  
Այլ “Ուրիշն է լաւ” ըսել քաւ լիցի :

Նա այսուհետեւ ինձ ինչ կամենայ ,  
Ես պիտի ըսեմ իւր կամքը ըլլայ ,  
Քանզի ինքը իմ վախճանըս գիտէ ,  
Եւ իմաստութեամբ բաժին կը հանէ :

“Աւե՛ր զլ-՞ է՛ն յե՛ւ , զե՛ Լ-՞ է՛ն +աղցր է”

Այլատ , անկախ , Տէ՛ր , չեմ ուղեր  
Վարել իմ կորդ կենաց վայրեր .  
Վարժէ՛ իմին պարանոց խիստ ,  
Քաղցր լուծիդ խոնարհել միշտ :

Ինձի բաժին ելլէ թէև  
Փոթորկալից ամպոց ներքև ,  
Քարոտ երկիր պինտ ու կարծր ,  
Խոնարհիմ միշտ լուծիդ քաղցր :

Ձանքս ապարդիւն ելլէ թէպէտ ,  
Հովտէս կտրին առուակ ու գետ ,  
Փտին ամէն սերմանիք իմ ,  
Քաղցր լուծիդ միշտ խոնարհիմ :

Թէ ետ դառնամ դատարկ ձեռօք ,  
Չը լեցուի տունս աշնան բարեօք ,  
Սիրով տանիմ օրհնեալ կամքիդ ,  
Խոնարհիմ միշտ քաղցր լուծիդ :

Ամէն վիճակ—դառն ու բարի ,  
Խիստ յուսահատ և յուսալի ,  
Մինչև կենացն իմ վերջին կէտ  
Չդատեն հոգիս քաղցր լուծէդ :



Հայրը որդւոյն կը կամի՞ չար ,  
 Թէև պատժէ ալ չարաչար .  
 Խրատի համար պատիժ որդւոյն  
 Նշան է հօրն անկեղծ սիրոյն .  
 Թէ որ զՍտուած ինձ հայր ճանչնամ ,  
 Ի՞նչ պատիժէ պիտի վախնամ :

Գ. Մ. Ծ.


Ճամբաս դուն , Տէր , ընտրէ ,  
 Թող ինձ խաւար ըլլայ .  
 Ձեռքովդ առաջնորդէ ,  
 Ընտրէ ինձի ճամբայ :  
 Ես չեմ համարձակիր  
 Բընաւ վիճակս ընտրել .  
 Դուն կառավարս եղիր ,  
 Ուղղիչս շիտակ քալել :

Խնդրած արքայութիւնս  
 Է քուկըդ , ուլ Տէր իմ .  
 Քուկդ ալ ըլլայ շաւիղս ,  
 Այլուստ կը մտրտիմ :  
 Դուն որոշէ վիճակս  
 Անհուն իմաստութեամբ .  
 Առ և լեցուր բաժակս  
 Վիշտով կամ վայելմամբ :

Ընտրէ բարեկամներս ,  
 Ախտերս , առողջութիւնս .  
 Փորձանքրս ու հոգերս ,  
 Եւ կամ հանգստութիւնս :



ինծի խոստմունք տըւիր  
 Որ ազատես չարէն .  
 Տէր , առաջնորդս եղիր ,  
 Իմաստութիւնս . ամէն :



Դ. ԽԱՉԸ ԿԸ ԿՐՃԱՏՈՒԻ

Ե- անոր բնէն խորեց : ԳՈՐԾՈՅ :



ԱՇԱԿԵՐՏՆ այս յանդիմանութենէն խոնարհելով և զղջալով՝ կրկին Տէրոջմէ տրուած խաչն առաւ , ու թէև այլ ևս չէր համարձակեր մերժել զայն , բայց անոր ծանր ու խորտուբորտ ըլլալը մտածելով կը նեղուէր : Դեռ սորված չէր թէ ճշմարիտ ազատութեան ճամբան համբերութեամբ ու հաւատարմութեամբ խաչ կրենք էր : Չէր գիտեր այն շնորհաց ներդրածութիւնը որ յողնածը կը զօրացունէ և սկարութեան մէջ կատարեալ կ'ըլլայ : Առաջուան պէս շուտ մը սկսաւ մարմնէն խրատ լսել և պարտականութիւնները պայմանաւորել :

«Թէև ինծի համար որոշեալ խաչն ուրիշի մը հետ չեմ կրնար փոխել, բայց միթէ չեմ կրնար չափով իւրք կրճատել զայն , որով նեղութեան մէկ մասէն ազատած կ'ըլլամ ,» կ'ըսէր : «Պիտի հնազանդիմ ,» ըսաւ , «թէև



նեղութեան մէկ մասէն աղատած ըլլամ :  
Դեռ ևս իմ Տէրոյն խաչն է . քանզի Նա  
ինձի խոստացած չէ՞ թէ իւր լուծը քաղցր  
պիտի ըլլայ, և իւր բեռը՝ թեթև :”

Եւ ահա դիտեցի որ խաչը գետինը գրաւ,  
ու սղոցով և խարտոցով կ'ուզէր կարճցունել  
և խարտել զայն :

Ո՛րչափ կը դժկամակինք, երբ մեր անասնձ  
կիրքերն կը զգան այն վարժութեան խստու-  
թիւնը, զոր անհուն Սէրը մեզի համար  
կ'ընտրէ : Բուն այն վշտերը որոց համար  
կը գանգատինք, Աստուծոյ Հոգւոյն և Խօսքե-  
րուն զմեզ խստութեամբ քննելը, և նոյն  
իսկ այն պարտականութիւնները որոց կէսը  
չենք կատարեր, պիտի տեսնուէր որ ամենա-  
մեծ օրհնութիւններ են մեզի, եթէ, իբրև  
Աստուծոյ դժառատ ձեռքէն եկած՝ զուար-  
թութեամբ ընդունէինք զանոնք :

Երբ կը կանչուիս այնպիսի գործի մը որ  
քենէ տարօրինակ աշխատութիւն կը պա-  
հանջէ, փոխանակ քու ուսդ լուծէն մէկ դի-  
քաչելու՝ պէտք է որ նկատես զայն իբրև մաս-  
նաւոր արժէք մը քու ձեռքդ տրուած, նաև  
յատուկ արտօնութիւն և միջոց երջանկու-  
թիւնդ աւելցնելու :

ՊԵՐՍԻՐ

Աժան կրօնքէն ընդհանրապէս նշանաւոր

հանգիստ չի հետեիր, թէ և ընդունողն ան-  
կեղծ քրիստոնեայ ըլլայ : Նոյն :

Հաստատուն քրիստոնեայ նա է որ անձն-  
ուրացութիւնը իւր կրօնքին կէսը կը համարի :  
Նոյն :

Եթէ կ'ուզես հաւատարմութեամբ ընել այն  
գործը զոր Աստուած տուած է քեզ այս  
աշխարհին մէջ իւր անուան համար ընելու,  
ուրեմն երբ դժուարին գործ մը կայ ձեռքդ  
զդոյշ եղեր որ չըլլայ թէ պարսպ կենալով  
դժուարութիւնը հոգաս : Աստուծոյ Խօսքը և  
Հոգին երբեմն շղթայակապ ուռմբի պէս մեր  
վրայ կը հասնին, և այնպէս կը թուի թէ զմեզ  
հիմէն պիտի կործանեն — Աբրահամու գիսա-  
հակ զոհելու կանչուելուն պէս :

Ո՛հ, ո՛րչափ կամաւ մարմինը և արիւնը  
Քրիստոսի խաչէն կը խուսափեն : Եփրեմի  
պէս կը սիրենք ցորեն ծեծել, և լսել այն հա-  
ճելի երաժշտութիւնները որ աւետարանական  
քարոզները կը պատճառեն, երբ միայն շնորհք  
կը քարոզուի՝ և ո՛չ թէ մեր պարտուց և  
անձնուրացութեան գործերը : ՊԸՆԵԱՆ :

Արդ՝ խաչը միշտ պատրաստ է և ամէն  
տեղ քեզի կ'սպասէ :

Ուր որ երթաս անկէ չես կրնար փախչիլ .  
քանզի ուր որ երթաս ինքզինքդ հետդ կը



տանիս, և ամէն տեղ դուն զքեզ պիտի գտնես :

Թէ վեր , թէ վար , ներս ու դուրս , ո՛ր կողմ՝ որ դառնաս , ամենայն ուրեք ԽԱՉԻ կը գտնես . և ՚ի հարկէ միշտ համբերութիւնն ամուր բռնելու ես , եթէ կ'ուզես սրտիդ մէջ խաղաղութիւն ունենալ և յաւիտենական թագ մը ժառանգել :

Կը կարծես թէ կրնաս փախչիլ անկէ՞ յորմէ մահկանացու մը չէ կրցած խուսափել : Ո՛ր սուրբն աշխարհիս մէջ առանց խաչի և առանց տառապանաց էր :

Քանզի մինչև անգամ մեր Տէր Յիսուս Քրիստոս իւր կենաց մէջ ժամ մը առանց իւր չարչարանաց վշտին չանցուց : Պէտք էր որ Որդին մարդոյ չարչարուէր , մեռելներէն յաբութիւն առնէր և այնպէս իւր փառքը մտնէր . և ի՛նչպէս կրնաս ուրիշ ճամբայ գտնել քան զայս արքունի ճամբան որ սուրբ խաչին ճամբան է :

ԹՈՎԱՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ :

Նեղութեան մէջ մեղաբարութիւն .

Տրամած ատենս երբ կարենամ  
Իմ անձս Տէրոջ յանձնել ,  
Եւ ցած սրտով կարող ըլլամ  
Պատժող Աստուածս օրհնել ,  
Շուտով վրբաս ցնծում կու գայ ,  
Տըխուր հոգիս կ'ուրախանայ :

Եւ Փրկիչին ոտքերն էյնալ  
Դառն վիշտերով պատած ,  
Եւ հոն աղօթք ընել ու լալ  
Շատ արցունքներ թափած՝  
Անուշ կու գայ իմ հոգիս ,  
Զի Տէրն լըտող է իմ ձայնիս :

Օրհնեալ է ան երբոր կուտայ ,  
Օրհնեալ երբ ես կ'առնէ ,  
Սիրով ինձի այցել կուգայ ,  
Սիրով ալ կը պատժէ .  
Աստուած արդար է և բարի ,  
Իւր կամքը միշտ թող կատարուի :

Նեղութեան մէջ Աստուծոյ վրայ յոյս

Խռովեալ հոգիս , հանդարտ կեցիլ ,  
Երբ Տէրն քեզ կը խրատէ .  
Անոր կամքին հնազանդ եղիլ ,  
Թէպէտ ճամբադ մութ է :  
Տէր , չեմ կրնար գործքերդ քննել ,  
Հերկը է անձս քեզի յանձնել :

Ես քու սիրոյդ միշտ յուսարով ,  
Ուզած ճամբովդ կ'երթամ .  
Կորսընցուցածս չխորհելով՝  
Թէ շատ ալ զուրկ մընամ ,  
Ինձի անհուն բարիք ալ կան ,  
Քանզի դուն իմն ես յաւիտեան :



## Տէրւ ե՛ Հ-ի-ւ-ւ-ւ-ւ

Յիսուս, դու ինձ եղիր հավիւ,  
 Հսկէ՛ վրաս գիշեր և աիւ .  
 Ծառադ մոլար խառնէ հօտիդ,  
 Ապրիմ՝ քու քով խաղաղ հանդիսս ։

Սիրաբո սրտիդ կապէ սիրով,  
 Քեզ հեռելիմ՝ ամէն ջանքով .  
 Ուր արածես քո ոչխարներ,  
 Ես ալ բլլամ անոնց ընկեր ։

Լեռ ու անտառ, ձոր ահարկու,  
 Մարդազեռին պաղ ջրերու .  
 Ուր թափառիմ, Հովիւրդ քաջ,  
 Եղիր իմ հետս, անցիր առաջ ։

Մէզ ու մռայլ, ամպոս օրեր  
 Մեծ անապատ անջուր անբեր  
 Թէ մուրրիմ, Քա՛ջդ անմոլար,  
 Ուղղէ քայլերս, չունիմ՝ ալ ճար ։

Երբ պատառող դունդ թշնամեաց  
 Կտրեն ճամբաս իմին դիմաց,  
 Հասիր օղնէ, Փրկիչ, հօտիդ,  
 Կապաւինիմ կարող բազկիդ ։

Քանի հոգիս անմահ թուեր  
 Չառեր թուեր քոյդ սահմաններ,  
 Մի ձգեր դիս, Հովիւդ բարի,  
 Գովեալդ յերկինս և ՚ի յերկրի ։

## «Ինձի եկուր»


Ո՛ր կողմ դառնամ՝ լացով ողբով  
 Փոթորկալից կեանքս է մէկ ծով .  
 Յորժամ ողբամ, Տէրս սիրելի  
 Մեղմով կ'ըսէ, «Եկուր ինձի» ։

Ինձ ցոյց կուտայ տեղ հանդստեան,  
 Հողւոյս ստոյգ մէկ ապաստան,  
 Յոգնած մարած կրուսեալի  
 Քաղցր է լսել, «Եկուր ինձի» ։

Երբ բնութիւնս զատուիլ չուզեր  
 Վայելքներէ որ եմ սիրեր,  
 Երբ սիրաս կոխէ մահուան սարսուռ,  
 Գութով կ'ըսէ, «Ինձի եկուր» ։

«Եկուր, վուճ է վայելք ամէն,  
 Քեզի հանդիսա չիք աշխարհէն,  
 Արատաւալից տչդ վեր դարձուր,  
 Ես եմ բաժինդ, ինձի եկուր ։»

Ո՛հ ձայն սիրոյ, ձայն շընորհաց,  
 Ի մէջ սրբոյ, ցաւոյ, վշտաց,  
 Ըստփէ զիս, ձայնդ երկնաւոր,  
 Սիրով ըսէ, «Ինձի եկուր» ։





Ե. ԽԱՉԸ ԿԸ ՊԱՇՏՈՒԻ


Այս ժողովարդը շրջաններովը դեռ կը պարտէ Բայց իրենց սիրտը հեռացած զարոտած է ինչո՞ք ՔՐԻՍՏՈՍ

ՈՐՉԱՓ երկայնամութեամբ Տէրը իւր ժողովուրդին մոլորութեանց կը համբերէ ։ Որպիսի՛ դժութեամբ անոնց սխալմունքը կ'ուղղէ, յիմարութիւնները կը յանդիմանէ, և հնազանդութեան ճամբան անոնց կը սորվեցունէ ։

Մեղմ՝ յանդիմանութեամբ իմացուցած էր աշակերտին որ անսօգուտ տեղ չ'աշխատէր թեթեցունել կամ՝ որ և իցէ կերպով պակօնցունել իրեն տրուած խաչը ։ Աշակերտը կրեւոր էր խաչը ճշտ իրեն յանձնուածին պէս ։ Բայց, աւանդ որ մարմնոյն տկարութիւնը, և շնորհուած սրտին խաբէութիւնը դեռ պարտականութիւններէ վախուտտի ճամբաներ կը հնարէին ։

Երբ դարձեալ տեսայ զանիկա, խաչը բարձրրկէկ տեղ մը կանդնած էր, և դափնի պրտակներով զարդարելով, անոր առջև երկրպագելու ձևով խոնարհած էր ։

«Ո՛հ,» ըսաւ Յիսուս դարձեալ անոր մօտենալով, «ա՛յս է այն ծառայութիւնը զոր ես քենէ պահանջեցի ։ Քու պարտքդ է չե՛լ խաչը և ո՛չ թէ պաշտել ։ Քենէ պահանջուած երկ-





Նային որբութիւնը ծաղիկներով զարդարանք  
չէ . և ոչ հողիդ կը խոնարհի գլուխդ ծռե-  
լով և ծունկերդ ծալելով : Խաչը տրուած  
է քեզ քու մեղրալից բնութիւնդ խաչելու ,  
որ մեղաց մարմինը կորսուի : Այս բանն ա-  
ռանց ցաւի չըլլար : Պէտք է զգաս ծանրու-  
թիւնը , պէտք է չարչարուիս ինծի հետ , եթէ  
ոչ ինծի հետ բաժին չունիս : Ելի՛ր , որդեակ  
իմ , և դադրէ քու անձիդ բաղձանքներն յա-  
զեցունելէ : Խաչը ու՛ր և կրէ , է՛մ երեւո՛ւ  
գու՛լ :

Շատերը սխալմամբ բանաստեղծական ըզ-  
զացումները ճշմարիտ Աստուածապաշտութիւն  
կը կարծեն : Երկնային շնորհաց սքանչելիքը որ  
քառութեամբ յայտնուեցաւ՝ շատ անգամ բնա-  
կան խեղքէ գովազանք կ'ընդունի : Ո՛րչափ  
գեղեցիկ բացատրեց Ռուսոյ Քրիստոսի բնու-  
թեան գերազանցութիւնը , և անոր մահուան  
վեհմութիւնը : Ի՛նչ զմայելի կերպով ստու-  
րագրեց Մեծն Նարոլէոն գերագոյն լշխանու-  
թիւնը զոր Քրիստոս ունի իրեն հեռուողնե-  
բուն սրտերուն վրայ : Ո՛րչափ շատեր ընտա-  
նեբար կը խօսին խաչին վրայ , անոր պայ-  
ժաններուն , զոհերուն , անձնուրացութիւննե-  
րուն և անձը խաչելու վրայ , մինչդեռ իրենք  
գործնականապէս բնաւ չեն դիտեր այդ բա-  
ներուն նշանակու թիւնը : Խաչը զարդարանք



մը եղած է, ոսկիներով և գոհարեղէններով շրջադառուած է, շքեղ պալատներու պատերէն կը կախուի, և հոյակապ եկեղեցեաց զազաթները կը յօրինէ: Փափուկ մատուրներ քնարին թեղերը կը թրթրեցունեն զանիկա գովելու, և հուշակաւոր ատենաբանք անոր սուրբ անուան ճառեր կը կարդան: Բայց ո՞րչափ հեռու են ատոնց բոլորը ճշմարիտ Աւետարանական խաչակրութենէ, կամ հեղութեամբ Աստուծոյ պատիժները կրելով՝ խոնարհութեամբ ու հաւատարմութեամբ ցաւալից պարտականութիւններ կատարելէ: Քանզի այս վերջինները սրտին մէջէն չարին արմատը կը խլեն, և սիրտը կը նմանցունեն մենէ առաջ խաչը կրողին: Բայց առջիններուն քօղին տակ ամէն չարիք կ'աճի և մեղաց ու մահուան պտուղը կը հասնի:

Ունակութիւն ըրէ քեզ Աստուծոյ թագաւորութիւնը բուն քու սրտիդ մէջ փնտռել: Մենք հեռու տեղեր կը փնտռենք զայն, կ'ուզենք առաքինութեանց հաճոյքը ճաշակել և մեր երեակայութիւնը փայտայել, առանց յօժարութիւն ունենալու մեր խելքը՝ հաւատոյ, և մեր կամքն Աստուծոյ իշխանութեան հպատակեցունել: Մեր հողին զԱստուած իբրև մարմին ունեցող էակ չիրենար ըմբռնել. հետևա-

բար զԱստուած ներկայացնող պատկեր չընդունիր:

Լաւագոյն է Յիսուս Քրիստոսի հետ խաչուիլ, քան թէ անոր չարչարանաց վրայ մտածել: Մին շատ անգամ լոկ գեղեցիկ դիտողութիւն է, բայց միւսը՝ ճշմարիտ փորձ, և Քրիստոսի չարչարանքը կարդալու և անոնց վրայ խորհրդածելու պտուղ:

Աստուծոյ խաղաղութիւնն արտաքուստ չգար, այլ՝ անձնական կամքը և շահը բնաջինջ ընելով ի սպառ:

Բոլոր մեր լուսաւորութիւնները և կրօնական ջերմեռանդութիւնները ցնորք կը դառնան, եթէ մենք զմեզ մեր անձին համար ճշմարտապէս և միշտ մեռած չենք համարիր:

Յիչէ որ հաւատոյ ճամբան կը պահանջէ բոլոր արտաքին օգնութիւններէ եւ քաջուիլերը զանոնք Աստուծոյ տեղ դրած ենք, և երբ անոնցմէ կախում ունենալն Աստուծոյ կամքը կատարելու տեղ կը գնենք:

Յիչէ թէ Աստուծոյ պարտական կը մնաս, որչափ անգամ որ ամէն բան անոր զոհելու կը վարանիս: Աստուծոյ ծառայելը չկայանար խօսքերու մէջ, և ո՛չ անորոջ զգացումներու, ո՛չ գեղեցիկ երեակայութեանց, ոչ



մեծամեծ խորհուրդներու և ոչ իսկ բարի  
դործերու մէջ: Աստուծոյ համար անձը ու-  
րանալն է Անոր թագաւորութեան սրտին մէջ  
մտնել:

Յիշէ թէ ղխաչեալն Յիսուս կ'ընդունիս միայն  
դուն գրեզ անոր հետ խաչելու համար, որպէս  
դի անկէ ետքը անոր հետ ապրիս: Անոր  
համբերութիւնը, անոր հեղութիւնը, անոր  
հնազանդութիւնը, անոր աշխարհի մեռած  
ըլլալը, անոր առ Աստուած և առ մարդիկ  
սիրոյն մեր սրտին մէջ փոխադրուիլը, ասոնք  
են անոր խաչին ճշմարիտ պատուհները, երբ  
շիտակ կերպով մտածութեան առնուին:

Ճշմարիտ ապաշխարութիւնն այն չէ, երբ  
խաչելութիւն մը կը տեսնենք առջևը կենալ  
և լալ, այլ ամէն օր և ամէն ժամ փոխանակ  
մեր կամոց Աստուծոյ կամքը ընելն է ընդ-  
դէմ ամենայն ապստամբութեանց, դժկամա-  
կութեանց և դժուարութեանց:

Բոլոր մեր թերութիւնները մեր անձերուն  
վրայ կարի շատ մտածելէ յառաջ կու գան:  
Մեր ԵՍՈՒԹԻՒՆԸ որ մինչև անգամ մեր ա-  
ռաքինութիւնները իւր նպատակին կ'ուղէ  
ժառայեցունել, պատճառ է որ մենք այս-  
չափ Քրիստոսի աննման մնացած ենք: Մերժէ  
ուրեմն առանց դանդաղելու այս անիծեալ ե-

ՍՈՒԹԻՒՆԸ փոքր փոքր բաներու մէջ, զորս Սուրբ  
Հոգին քեզի կը ցուցունէ: Այս է ճշմարիտ և  
կատարեալ խաչելութիւն. ուրիշ ամէն բան  
երևոյթ միայն է: Անոնք որ կը կարծեն ի-  
րենց կեանքն ուրանալ ուրիշ որ և իցէ կեր-  
պով, կը պահեն զայն տարբեր ձևերով:

Փորձառութեամբ պիտի տեսնես թէ երբ  
ուղիկ կերպով ինքզինքդ կը խաչես, Աստուած  
հոգւոյդ բան մը ընել չ'թողուր. նա իւր դոր-  
ծը յառաջ կը տանի անդադար և խտիւ,  
մինչև որ ետութեան վերջին շունչը կորսնցու-  
նէ, որպէս զի գրեզ իրեն հետ ապրեցու-  
նէ յաւիտենական խաղաղութեան և հոգւոյ  
ազատութեան մէջ:

ՅԵՆԵԼՈՆ

Արդ ինչո՞ւ կը վախնաս այն խաչը վերցու-  
նել որ գրեզ թագաւորութեան մը կ'առաջ-  
նորդէ:

Խաչով է մեր փրկութիւնը, խաչով է կեանք,  
խաչով է պաշտպանութիւն թշնամեաց դէմ.  
Խաչէն կը բղխի երկնային քաղցրութեան  
հոսանք, խաչով է մտաւոր զօրութիւն, խա-  
չէն է հոգւոյն ուրախութիւնը, խաչէն է  
սրբութեան կատարելութիւնը:

Հոգւոյ փրկութիւն չկայ, և ոչ իսկ յաւի-  
տենական կենաց յոյս, բայց միայն խաչով:



վերցուր ուրեմն խաչդ և հետևէ Յիսուսի , և յաւիտենական կենաց պիտի երթաս : Նա քան զքեզ առաջ գնաց իւր խաչը կրելով , քեզի համար խաչին վրայ մեռաւ , որպէս զի դու ևս խաչդ կրես , և փափաքիս խաչին վրայ մեռնել անոր հետ :

Քանզի , եթէ անոր հետ մեռնիս , անոր հետ պիտի ապրիս . և եթէ անոր ընկերն ըլլաս պատժոյ մէջ , փառաց մէջ ևս անոր բաժանորդ պիտի ըլլաս :

ԹՈՎԱՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ

Խաչ է՞նչ է

Իրկուսն մը երբ խոր խաւարն կը տիրէր ,  
Սիրոս անհանդիստ , մահն ինծի մօտ կը թուէր ,  
Ելայ տունէս , տրտում տխուր քալեցի ,  
Լոխի մնջիկ մինչ գերեզման ես դացի :  
Հոն նստեցայ երբ բնութիւնն կը լռէր ,  
Ես իմ սրտիս , սիրտըս ինծի կը խօսէր .  
Մեղք , մահ , դժոխք եւ գերեզման , ինձ բաժին ,  
Մտքիս առջեւ խառնն ի խուռն կը շարուին :  
Ո՛հ , ահ ու վախ , սարսափ ու դող ահուկի  
Ձիս կը բռնէ , սրտիս խորերն կը հասնի :  
Անմիջապէս ծունկի եկայ նոյն դողով՝  
Աչք , ձեռք ու սիրտ դէպ ՚ի երկինք ուղղելով  
Որոշեցի որ սուրբ խաչին շուտ երթամ ,  
Զայն համբուրեմ , Անկէ ներում ստանամ :

Սակայն յանկարծ այս խոր խաւարըս անցաւ ,  
Ձի երկինքէն ինծի մեծ լոյս ծագեցաւ :  
Լոյսը ձեռքի , քաղցր տեսարան , ձեւ ունէր :  
Եւ լուսեղէն սուրբ տառերով կը գրէր .  
“Խեղճ մեղաւոր , կը սրխալիս , խաչ ան չէ  
Ձոր կը շինեն եւ կը պաշտեն նիւթերէ :

Փրկիչ Սուրբ խաչ իմ ՄԱՀՐՍ է ,  
Կամաւ կրած ՁԱՐԶԱՐԱՆՔՍ է ,  
Որով ես քեզ վատթար մեղքէն  
Եւ իւր պատիժ երկրորդ մահէն ,  
Թէ որ հաւտաս , աղատեցի  
Եւ Աստուծոյ որդի ըրի :

Քու կրելիք խաչդ ալ ան չէ  
Որ ոսկեղէն կամ արծաթէ  
Խաչ մը հետըդ կրես տանիս  
Կամ զայն բերնով պագնես սիրես :  
Այլ Աստուծոյ տուած քեզի  
Ամէն դաւաթ դառն ու լեզի ,  
Տեսակ տեսակ ցաւ , նեղութիւն  
Որ կ'ունենաս բաժին հոս դուն՝  
Համբերութեամբ սիրով տանիս ,  
Իմ կամքս չըլլայ , այլ քուկդ , ըսես :  
Նաև դուն ալ ինծի նման  
Կամաւ զինքըդ տուր նեղութեան ,  
Որով ընկերդ նեղութենէ  
Աղատելով՝ զԱստուած օրհնէ :”

Գ. Մ. Շ.



«Դաւոր առ և ի՞նչ երեսն եկոր»

Խաչդ առ ինձի հետեւէ,  
կրկին քեզի Տէրն կ'ըսէ .  
Թէև մեղքով ես լեցուն ,  
Ինք կը կանչէ , գընա դուն .

Քու գործիդ մ'ապաւինիր ,  
Իր մահուան և միայն իր :  
Քեզ տուած խաչն պատուական  
Առ ձգէ շահերդ ունայն .

Ոսկին քեզ ոչինչ սեպէ  
Տէրդ կ'ըսէ , խաչդ կրէ :  
Խաչ մը կայ քեզի համար  
Յաւ և վիշտ սուղեր յարմար

Թէ որ խորհիս թէ ծանր է ,  
Յիսուսի կրածն յիշէ ,  
Միայն շաւիղն փշեղէն  
Տանի աթոռն լուսեղէն :

Մինչ փախճան որ համբերես ,  
Ամէն մեղքի դէմ դնես ,  
Խաչդ յայնժամ ուսէդ կ'իյնայ  
Տէրն քեզի պսակ կու ապ :

Մեղատորնէրուն խրատ և յորդորակ

Ո՛վ մեղաւոր մարդ , խեղճ , թշուառ ;  
Նայէ որ քեզ ճանչնաս .  
Սուտ աշխարիս փառայն համար  
Դրախաչն դուրս չը մընաս :

Փուճ բաներու դուն խելք մի տար ,  
Չանա դանոնք մտնաս .  
Զի այս աշխարհս յանկարծաբար  
Պիտի թողուս երթաս :

Յիսուս նստած յաթոռ փառայ  
Մեղքերդ պիտի քննէ .  
Դուն մի յուսար որ ոսկոյ դանձ  
Նոյն օրն քեզի օղնէ :

Քեզ պատրաստուած է փառք դրախաչին ,  
Դեռ չես անկէ զրկուած .  
Քեզ կը կոչէ ձայն Յիսուսին .  
Լքսէ որ ետք չի լաս :

Այն սուրբ ձայնին շուտ հնազանդէ ,  
Վազուան զայն մի ձրգեր .  
Այս մեծ շքնորհքն ու ժամն յարդէ ,  
Զի մէյմ'ալ չես դաներ :

Խոր յոր

Ո՛վ տառապանաց աշխարհը ,  
Ի՜նչ սուր են փուշերդ ինձի .  
Ո՛ւր էր որ զիս տանէր մէկը  
Աս խոր ձորէն :



Ո՛վ Իսրայէլի տանողը ,  
 Եկ ամսի կրակի սիւնովն ,  
 Անվրտանդ անցուր մեր անձը  
 Աս խոր ձորէն :

Բաջ Հովիւ , դուն , Տէր Յիսուս իմ ,  
 Բայ քու սիրոյդ բազումներն .  
 Հետս եղիր զօրեղ սպառապան իմ  
 Աս խոր ձորէն :

Սուրբ Հոգի , հզօր Աստուած մեր ,  
 Թշնամեաց յաղթէ ուժովդ .  
 Մի թողուր զիս դեռ չեղած վեր  
 Աս խոր ձորէն :

Ո՛հ , ի՞նչ վիշտ ու ցաւ քաշեմ ես  
 Հոս կեանքիս բաժին եղած ,  
 Ընդունէ զիս երբ ելլեմ ես  
 Աս խոր ձորէն :

Ա. Հ. Ճ.

«Նեղ է ճամբան»

Այո՛ , ճամբան խիստ շատ նեղ է ,  
 Բայց այս ի՞նչ է ,  
 «Լուծըս քաղցր , բեռս թեթեւ է» ,  
 Ո՞րը սուտ է :


Անտուտ բերնէ են երկուքն ալ ,  
 Ինտոր կ'ըլլայ .  
 Հոս շատ հարկ է միտքն հասկընալ ,  
 Ինչո՞ւ , ի՞նչ կայ :

Ճամբան ինքնին նեղ չէ բնաւ ,  
 Շատ հանդիստ է ,  
 Նեղութիւնը ուրիշն ըրաւ ,  
 Ուրիշն ո՞վ է .

Մարդոց աւրած բնութիւնն է ,  
 Ինչե՛ր չըրաւ ,  
 Նեղ ճամբային միշտ խիստ դէմ է ,  
 Անէծք բերաւ :

Այս նեղ ըսուած ճամբան ի՞նչ է ,  
 Գիտնալ կ'ուզեմ .  
 Իմ կարծիքովս երեք բան է ,  
 Կեցիր հաշուեմ .

Նախ՝ ՚ի մեղաց ապաշխարեմ ,  
 Ուրիշ խօսքով ,  
 Մեղքին համար արցունք  
 Կտարած սրտով :



Երկրորդ՝ հաւտալ Տէր Յիսուսին ,  
 Սրտով հաւտալ ,  
 Խոնարհութեամբ իւր պատուէրին  
 Սիրով անաալ :

Երրորդ՝ ջանալ սուրբ ըլլալու  
 Ոչ թէ խօսքով ,  
 Տէրոջ սիրածը սիրելու  
 Անկեղծ սրտով .

Գ. Մ. Շ.



## Զ. ԽՍ.ՉՆ ԱՄՕԹԻ ԿԸ ՀԱՄԱՐ ՈՒԻ

Ո՛վ որ դէս ու է՛մ խօսերս ամօն սեպե սա շար ու  
աներս ապրին առջեւ, Որբին Մարտոյ ալ զանկա  
ամօն պիտի սեպե երբոր քայ եր հօրը գառտովը եր հրեշ-  
տակներուն հէտ

ՔՐԻՍՏՈՍ

Երբ դարձեալ տեսայ այս աշակերտը,  
խաչն այն պատուաւոր տեղէն վար առած էր,  
և Տէրոջը պատուիրածին պէս կը կրեր: Ճեշտ  
այն միջոցին դիտեց որ մօտ կայնողներէն  
ոմանք արհամարհանօք կը նայէին անոր վրայ.  
և անոնց ծաղրաբանութիւններուն չզխմա-  
նարով՝ խաչը ետեէն վար սողացուց, և ըսր  
մը կայելով խաչին, դետնին վրայ կը քաշ-  
քըշէր: Նաև ինքզինք չճանչցօնելու համար  
երեսը քօղով մը ծածկեց. և այսպէս ծպտեալ  
իւր ճամբան կ'երթար, երբ կրկին Տէրը մօ-  
տենարով քօղը բացաւ, և խօսեցաւ. « Ինչ  
և իմ խաչէս ամչնա՛ւ. միթէ կարելի՞ բան է:  
Պիղատոսի ատենը կայնիլս կը յիշե՛ս, երբ  
իմ թշնամիներս ծաղու հանդերձներ հաղու-  
ցին ինձ, և գլուխս վշեղէն պսակ գրին, և  
անգիւտ կատակներով կ'աղաղակէին, «Ողջոյն  
քեզ, Հրէից թագաւոր:» Կը յիշե՛ս այն տե-  
սարանն երբ երկու աւաղակներու մէջտեղ  
անիծեալ ծառէն կախուեցայ քեզի համար,





երբ բոլոր անցնողները զիս կը հայհոյէին գըլուխ շարժելով : Քեզի համար խաչը կրեցի արհամարհելով ամօթը , և հիմա Աստուծոյ բոլոր հրեշտակներուն առջև իմ փրկեալներս կը դաւանիմ , և չեմ ամչնար զանոնք իմ եղբայրներս կոչել : Եւ այս է այն բոլոր փոխարէնը որ ինձի ընելու էիր :

Խաչէն ամչնա՛լ : Ամօթալի գործւոյն վրայ չէ մեր խօսքը , քանզի մեր օրերը պատուոյ նշան եղած է այն , այլ մեր խօսքն անոր բոլոր նշանակներուն վրայ է :

Ո՛րչափ շատեր կը զարմանան այս աչակերտին վրայ իւր երեսը դոցելուն և փրկութեան գրաւականէն ամչնալուն համար , մինչ իրենք ևս ճիշտ նոյն բանը կ'ընեն :

Ոմանք Քրիստոսի վարդապետութիւններէն կ'ամչնան : Չեն կրնար ընդունել այնպիսի յայտնութիւն մը որ կը ցուցունէ թէ մարդկային տրամաբանութիւնն է բնականապէս կոյր և անբաւական , մարդկային բնութիւնն է ապականած , երկնային նորոգման կարօտ , և թէ փրկութիւնը միայն շնորհքով է : Քրիստոնէութիւնը կ'ընդունին իբրև անուն և եթ , սակայն այս տեսակ կրօնք ոչ քաւութիւն , ոչ վերստին ծնունդ և ոչ սրբացումն ունի իւր մէջ :



Ոմանք ֆրիստոսի պատուէրներէն կ'ամրջանան, քանզի անոնց ընկերութեանց, թաղերուն և դպրոցներուն մէջ վայելուչ չհամարուիր հեղահոգի ըլլալ: Խոնարհութիւնը համարուած է հողւոյ վատութիւն, թշնամին սիրել՝ նուաստութիւն: Խոնարհ առաքինութիւնը որ միայն ապաշխարութեան արտասուօք ուղղուած հողի մէջ կ'ածի՝ անոնց համար գեղեցկութիւն չունի: Այսպիսիք կը սիրեն գոլուիլ մանաւանդ ի մարդկանէ քան Աստուծոյ մէջ:

Քրիստոսն. Այդ ձորին մէջ ուրիշ բանի չպատահեցար:

Հասարակ. Այո, Ամօթ անուն մէկուն պատահեցայ. բայց կարծեմ թէ սխալ անուն ունի քան ուրիշ անձինք որոց հանպիպեցայ ճամբորդութեանս մէջ:

Ուրիշները, եթէ քիչ մը դէմ կենայի, կը թողուն զիս. բայց այս պնդերես Ամօթը բնաւ չէր ուզեր թողուլ զիս:

Քրիստոսն. Ի՞նչու, ի՞նչ ըսաւ քեզի:

Հասարակ. Ինչ ըսաւ ինծի. հաւատոյ և կրօնքի դէմ հակառակեցաւ: Ըսաւ թէ նուաստութիւն է մարդու կրօնքը բանի տեղ դնել: Ըսաւ թէ զիւրազգած խիղճ ունենալ վայելուչ չէ մարդկութեան, և թէ մարդ ծաղ-

բարանութեան նշաւակ կ'ընէ զինք, եթէ իւր խօսքերուն և վարքին վրայ զգուշութիւն ընէ, և կը կապէ զինք և կ'արգելէ այն պանծալի ազատութենէն զոր բոլոր քաջ մարդիկ կը վայելեն: Նաև ըսաւ թէ, հզօրներուն, հարուստներուն և գիտուններուն մէջ քիչեր իմ կարծիքէս են. և այն քիչերն իրենց խելքը կորսնցնելէն ետքն է որ ոչինչ բան մը ձեռք բերելու համար ամէն բան կ'ամառ կը կորսնցնունեն: Ս. կորնթ. Ա. 26: Գ. 18: Փիլ. Գ. 7-9: Յովհ. Է. 48: Ասկէ զատ այս ժամանակիս ճամբորդներուն ցած և նուաստ վիճակին և աստիճանին, նաև անոնց ամէն բնական գիտութեան անտեղեակ և խելքի կարօտ ըլլալուն վրայ փաստաբանեց: Այսպէս խօսեցաւ ինծի ուրիշ շատ բաներու վրայ որ քեզի պատմեցի. զորօրինակ՝ ըսաւ թէ ամօթ է լալով և ողբալով քարոզ մտիկ ընել, ամօթ է հառաչելով և հեծելով տուն դառնալ, ամօթ է մանր մունր յանցանաց համար ընկերէն ներում խնդրել, կամ, եթէ բան մը առած է, հատուցում ընել: Նաև ըսաւ թէ աւետարանական բարեպաշտութիւնը մարդս մեծամեծներու հետ ընկերութիւն ընելէ ետ կը պահէ՝ անոնց քանի մը փոքրիկ մոլութիւններուն համար (որոց ինք աւելի գեղեցիկ



անուններ կու տար ) ; իսկ անարդէները պատ-  
տուով ընդունել կու տայ միայն վասն զի  
իրեն կրօնակից են : Եւ այս ո՞չ ապաքէն  
ամօթ է , ըսաւ :

Քրիստոս . Դուն ի՞նչ ըսիր անոր :

Հասարակ . Ի՞նչ ըսէի . առաջ չէի գիտեր թէ  
ի՞նչ պէտք էր ըսել ինձ . մանաւանդ այնպէս  
ամեցուց զիս որ երեսու կարմրեցաւ . բուն այս  
Ամօթը զիս ամեցուց և գրեթէ բոլորովին  
յաղթեց ինձի : Քայց յետոյ սկսայ մտածել  
թէ այն որ մարդոց առջև բարձր համարուած  
է , Աստուծոյ առջև պիղծ է . Դուկ . ԺԶ . 13 :  
Գարձեալ մտածեցի թէ այս Ամօթը մարդոց  
ինչ ըլլալն ինձի կ'ըսէ , բայց Աստուծոյ խօս-  
քին ինչ ըլլալուն վրայ ամենեկին բան մը չը-  
սեր : Գարձեալ մտածեցի թէ դատաստանին  
օրը մենք այս աշխարհիս պարծենկոտ հողի-  
ներուն միջոցով մահուան կամ կենաց պի-  
տի չդատապարտուինք , այլ Քարճերոյն ի-  
մաստութեամբն ու օրէնքով : Ուստի ըսի  
մտքիս մէջ , ինչ որ Աստուած կ'ըսէ՝ աղէկ է ,  
արդարև աղէկ է , թէև ամէն մարդ անոր  
դէմ ըլլայ : Արդ՝ որովհետև Աստուած կ'ուզէ  
որ կրօնասէր ըլլանք , որովհետև դիւրազգած  
խիղճը կ'ընտրէ , որովհետև երկնից թագաւո-  
րութեան համար զիրենք յիմար համարողներն

են իմաստնագոյն , և որովհետև զՔրիստոս սի-  
րող աղքատն աւելի հարուստ է քան որ և իցէ  
մեծ մարդ որ զնա չսիրեր , կորսուէ՝ ուրեմն , ը-  
սի , ով Ամօթ , դուն իմ վերկութեանս թշնամին  
ես . իմ դերագոյն Տէրջա կամայր դէմ քեզի  
հաւանութիւն տամ , ի՞նչպէս ապա անոր գա-  
լլատեան ժամանակ պիտի նայիմ անոր երեսը .  
Մարկ . Բ . 38 : Եթէ ես հիմա անոր ճամբանե-  
րը և ծառաներն ամօթ համարիմ , ի՞նչպէս  
կրնամ օրհնութեան յոյս ունենալ : Քայց  
ճշմարիտ է թէ այս Ամօթն աներես անզգամ  
օմն էր . հազիւ կրցայ ինձի հետ ընկե-  
րութիւն ընելէ արդեւել զնա . ստուգիւ ա-  
մենեկին չէր ուզեր թողուլ զիս , Քրիստո-  
նէութեան ներդրութիւններուն մին կամ միւ-  
սը շարունակ կը փսիսար ականջէս : Սա-  
կայն վերջապէս ըսի անոր թէ ընդունայն էր  
ասոր համար աշխատիլ , քանզի այն բաները  
զոր նա կ'արհամարհէր՝ ես աւելի փառաւոր  
կը համարէի : Այս օրինակ վերջապէս այս  
ձանձրալի անձէն առաջ անցայ : ՊԸՆԵԱՆ

Շատերը կը սիրեն Յիսուսի երկնային թա-  
գաւորութիւնը . բայց քիչերը կը կրեն անոր  
խաչ : Շատերը կը բազման անոր մխիթարու-  
թեան , բայց քիչերն՝ անոր ներդրութիւննե-  
րուն : Շատերը ընկերակից են անոր սեղանին .



բայց քիչերն՝ անոր ժուժկալութեանը : Բաղումը  
 կը փափաքին ուրախանալ անոր հետ , բայց  
 սակաւք կը յօժարին ինչևիցէ բան կրել անոր  
 համար կամ անոր հետ : Շատերը կը հետեւին  
 Յիսուսի հաց կտրելու , բայց քիչերը՝ խմելու  
 անոր չարչարանաց բաժակէն : Շատերը կը  
 յարգեն անոր հրաշները , բայց քիչերը՝ խա-  
 չին խայտառակութիւնը : ԹՈՒՎՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ

**ԶՅԵՆՈՒՆ ԿՆՆՈՒՆ**

Ո՛վ Տէր Յիսուս , միթէ ասանկ բան կ'ըլլայ՞  
 Որ մահացու մարդ մ'անուենէր ամչնայ .  
 Քու անուենէր , որ հրեշտակներն միշտ կ'օհնեն ,  
 Որուն փառքովն երկինք երկիր լեցուն են :

Ամչնամ ես այն սիրելի Յիսուսէն ,  
 Որմէ երկնից յոյսերս բոլոր կախուած են .  
 Ո՛չ , ամչնալս ամօթ ըլլայ թող ինձի ,  
 Որ մինչ հիմա զինք դաւանիլ չուզեցի :

Թող ամչնամ ես Յիսուսէն , թէ չունիմ  
 Սիրտ մեղապից , որմէ կ'ուզեմ մաքրուիմ ,  
 Թ'արտասուալից աչերս սրբման կարօտ չէ ,  
 Թ'անմահ հոգիս չէ կորսուած , որ փրկէ :

Սակայն եթէ կարօտ եմ ես Յիսուսի  
 Սուրբ անուանը , թող սիրտս լեզուս միշտ պարծի .  
 Զի առաջի սուրբ հրեշտակաց անհամար  
 Յիսուս ալ զիս դաւանելու չ'ամչնար :

Ո՛վ որ զիս դաւանէ . . . Ես ալ անիկա պիտի դաւանիմ

Վկայէ՛ , վկայէ՛ Յիսուսի համար ,  
 Թէև քեզ անպատիւ ընէ չարաչար ,  
 Խայտառակ և ծանակ մարդոց մէջ ըլլաս ,  
 Փողոցէն որ անցնիս խնդալնին տեսնաս :

Վկայէ՛ , վկայէ՛ Յիսուսի համար ,  
 Թէև տուն , ստացուածք գրբաւէ օտար .  
 Բարեկամը , ազգականը հեռանան քեզմէ ,  
 Նեղութեան մէջ իյնաս , ոչ մէկը օգնէ :

Վկայէ՛ , մ'ամչնար Յիսուսի համար ,  
 Թէև բանտ , թէև կապ հասնի մի վախնար .  
 Թէև ոտը , թէև ձեռք երկուքը մէկէն ,  
 Կամ գլուխդ ալ հետը սղոցեն , կտրեն :

Վկայէ՛ , մ'ամչնար Յիսուսի համար ,  
 Որ զոհեց իւր փառքերն և իջաւ աշխարհ .  
 Յաւեցաւ , ծեծուեցաւ , դառն խաչով մեռաւ .  
 Քեզ եղբայր կոչելու երբէք չ'ամչցաւ :

Վկայէ՛ քանի որ ժամանակ ունիս ,  
 Օրն կու գայ որ առջին երևնալ պարտիս ,  
 Յորժամ , ո՛չ , թէ դու հոս ամչցար իրմէ ,  
 “Զեմ ճանչնար , մեղաւոր հեռացիր ,” կ'ըսէ :

\* \* \*



“Ե- փոշիքի պսակ բուրեւով քլո-իւ քրին”

Ան սուրբ գլուխն ժամանակաւ  
Փշեայ պսակ որ դրուեցաւ .  
Հիմա երկնից ակթուն բազմած  
Անհուն փառքով է զարդարուած :

Երկնաբնակաց դու պաշտելի ,  
Երկրիս սրբոց խիստ ցանկալի .  
Լոյսդ երեսաց յայտնէ և մեզ ,  
Ճանչնանք սէրըդ , սիրենք զքեզ :

Տուր մեզ խաչըդ նախատալից ,  
Ձի շատ չնորհքներ բղխին անկից ,  
Թէև աշխարհք քեզ կ'անարդէ ,  
Բայց քեզմէ զատ բան մեզ պէտք չէ :

Ով որ մեռնի հոս հեարդ , Տէր ,  
Հեող ալ կ'ապրի անվերջ դարեր .  
Իսկ ծուլութեամբ թէ հեշտանանք ,  
Քաղցրիկ երեսդ չըպ'սի ատենանք :

Խաչովդ անդորր մեք կեանք առինք ,  
Քեզ պատճառել վիշտ նախատալիք ,  
Հոս սրտերնիս անով բերկրի ,  
Վերն անթառամ պսակ լինի :

\* \* \*

Խաչն զնորդ

Եթէ զինուոր եմ խաչին ,  
Խաչէն ալ ամբչնամ .  
Թէ հեռուդ եմ Գառնուկին ,  
Ձինք դաւանիլ վախնամ :

Ես ծաղկազարդ մահճի մը վրայ  
Երկինք կրնամ տարուիլ .  
Արդեօք ինձ թշնամի չրկա՞յ ,  
Ինձ հարկ չըկա՞յ կուտիլ :

Արեան չափ կուտելով առին  
Շատերը մրցանակն .  
Ծառայելով ես մարմինին  
Կ'առնե՞մ փառաց պըսակն :

Ո՛չ . եթէ ես կ'ուզեմ յաղթել ,  
Պէտք է պատերազմիմ .  
Հաճէ , Տէր , զիս շնորհքովդ ընել  
Քաջ և հաւատարիմ :

Սէր առ ֆրէստոս

Ով Տէր Յիսուս , քեզ կը սիրեմ ,  
Քանզի քու սէրդ շատ քաղցր է .  
Ես բարձր ձայնով պիտի երգեմ ,  
Բոլոր աշխարհըս թող լըսէ :




Այո , քաղցր ես հողուոյս իմին ,  
 Յոյս , փրկութիւն , կեանք ես ինծի :  
 Անարդ բան են գոհարք անգին ,  
 Ոսկին ալ ինձ չնչին փոշի :

Քու մեծ շնորհքդ սրտիս վրայ , Տէր ,  
 Միշտ կեանք տրուող հոտ կը բուրէ :  
 Կը բըժշկէ ամէն ցաւեր ,  
 Բոլոր իմ անձս կը նորոգէ :

Ոչ նեղութիւնք , ոչ հալածանք  
 Զիս քու սէրէդ կրնան զատել .  
 Ու ոչ ալ մահ և ոչ ալ կեանք  
 Զիս քու անձէդ կրնան բաժնել :

Պիտի պատմեմ սէրն մեծ փրկչիս ,  
 Մինչև վերջին շունչս ալ հատնի .  
 Յայնժամ , օրհնեալ փրկիչ , հողիս  
 Քու սուրբ գրկիդ մէջ թող հանգչի :



### Է. ԽԱԶԸ ՊԱՐԾԱՆՔ ԿԸ ՀԱՄԱՐՈՒԻ

Երեւին կ'աւրեն որ ճարդոց ծոմ պահողի պէս երևան  
 ՔՐԻՍՏՈՍ

Մեր երիտասարդ ճամբորդն ամօթոյ և վա-  
 խի ցած վիճակէն ճիշդ անոր հակառակ ,  
 սակայն ոչ սակաւ պարսաւելի կողմն անցնե-





լու համար քայլ մը միայն առնելու էր : Անոր խաչակրութիւնը դիտողները տակաւին հոն էին , և մեր բարեկամը ճիշտ առաջուան պէս անոնց դաղափարը կը նկատէր : “Ի՞նչ պիտի ըսէ աշխարհ ,” կը հարցնէր ինքնիրեն խորին մտածութեամբ : Որովհետեւ իւր բեռը և դէմքը պիտի չկրնար անոնցմէ ծածկել , հարկը փոխեց առաքինութեան . խաչը պարծանօք բարձրացնելով , հրաւիրեց զննողները զարմանալ իւր քաջութեան և ջերմեռանդութեան վրայ : Այն խաչը զոր քիչ մը առաջ ամօթ կը համարէր՝ ՊԱՐԾԱՆՔ եղաւ անոր : Իւր անձնահաւանութեան միջոցին իւր ուսին վրայ փափուկ ձեռք մը զգաց , և անողոքելի և արտում ձայն մը խօսեցաւ անոր : “Չգոյշ եղիք որ մարդոց առջև չընէք անոնց երևնալու համար , եթէ ոչ՝ վարձք չէք առներ ձեր Հօրմէն որ երկինքն է :”

Շատերը չեն հասկնար թէ ի՞նչ խորամանկ կիրք է հպարտութիւնը . սրչափ դիւրութեամբ սնունդ կը ծծէ իրմէ անջատուած անդամներէ անգամ : Ոմն յաջողութեամբ կը մարտնչի յաղթել իւր ազահութեան , բայց այնուհետեւ իւր մարդասիրական գործերուն վրայ պարծենկոտ կ'ըլլայ : Այլոք իւր անկարութիւնը կը խաչէ , բայց կը սկսի պարծիլ իւր



համարձակութեան վրայ : Բուն իսկ իւր անձն  
 է խաչ հանելն անգամ , անոր մէջ պա-  
 րունակուած ցաւը , գործածուած քաջու-  
 թիւնը , և ստացուած յաղթութիւնը , կ'ըլ-  
 լան ցուցամուկական խօսակցութեան նիւթ :  
 Աշակերտը երբեմն իւր խաչը ուրիշներուն  
 առջև , երբեմն բուն իւր անձին առջև կը պը-  
 տըացնէ : Երբեմն մինչև անգամ Աստուծոյ  
 առջև կը դնէ , տաճարին մէջ աղօթող փա-  
 րիսեցւոյն պէս իւր ծոմերուն և տասանորդ-  
 ներուն հաշիւներն Ամենազէտին ականջին  
 պատմելով :

Շատ տարբեր բան է այս քան այն « պար-  
 ծենալը խաչով » որոյ վրայ Պողոս կը խօսի :  
 Պողոսի պարծիլն է Քրիստոսի խաչովը , իսկ  
 այս՝ իւր խաչովը : Մին ուրախանալ է Փրկչին  
 գործին վրայ , անոր քաւութեանը , և անկէ  
 յառաջ եկած ճշմարտութեանց և պահանջ-  
 մանց վրայ : Ուրախանալ է անոր ծառայելու  
 և ամէն բան անոր նուիրելու օրհնեալ ար-  
 տօնութեան համար , որ « ուրիշ բան չգիտա-  
 նայ , այլ միայն զՅիսուս Քրիստոս և այն  
 խաչը ելած » : Գոռող և ինքնակոչ փիլիսոս-  
 փայութիւնը թող զայս յիմարութիւն համա-  
 րի , և այս աշխարհիս հարուստներն և մե-  
 ծերը թող այպանեն անոր հետևողներն իբրև

յոյժ անարդէներ , բայց ճշմարիտ հաւատացե-  
 լոյն « Աստուծոյ զօրութիւնը և Աստուծոյ ի-  
 մաստութիւնն է » — Իսկ միւսը ո՛չ թէ զՔրիս-  
 տոս՝ այլ բուն իսկ աշակերտը կ'ընէ զարմաց-  
 ման առարկայ , աշակերտը՝ որ իւր նուաստու-  
 թեան փոշիներէն հողւոր հպարտութեան կայծ  
 ժողովէ : Ո՛րչափ դժուարին է ճշմարիտ խոնար-  
 հութիւն պահել , և սրտանց խաչուելով , ոչ  
 միայն աշխարհի մեռնել , այլ և խաչին ան-  
 դամ :

Մեղքը մարդուն սիրտը կ'ուռեցունէ հպար-  
 տութեամբ և կը խարէ զնա զինք հազար  
 անգամ աւելի լաւ կարծել տալով քան զոր  
 է . այսպէս շատք կը կարծեն թէ Աստու-  
 ծոյ որդիք են , մինչ որդիք են սատանայի ,  
 և կը կարծեն թէ քրիստոնէութեան մէջ  
 բան մըն են , մինչ անոր մէջ բաժին չու-  
 նին և ոչ իսկ գիտեն զայն ձեռք բերելու  
 կերպը :

ՊԸՆԵԱՆ

Ո՛վ հպարտութիւն , հպարտութիւն . դու  
 ես որ շատերն իրենց մեղքերուն մէջ շրդ-  
 թայակապ կը պահես : Դժուարին է զատել  
 զմարդ իւր հպարտութենէն , որ , փոխանակ  
 իւր բարութեան , իմաստութեան և առա-  
 քինութեան վրայ պարծենալու , զինք մեղա-



ւոր, յիմար, նա մանաւանդ իւր հոգւոյն հա-  
մար անդուծ ճանչնայ : նոյն

Այս էր դեւերուն մեղքը, այս է մարգուն  
մեղքը . այս այն մեղքն է՝ որմէ մարդ-  
չկրնար ազատիլ մինչև որ անոր սիրտը կտարի,  
և հպարտութիւնն անատեն կը խանդարի .  
անատեն ուրախութեամբ պիտի զիջանի :  
Եթէ որ իւր զօրութեան և արութեան վրայ  
հպարտանայ, կտորած սրունք մը կը խոնար-  
հեցունէ զնա . և եթէ մարդ մը իւր բարու-  
թեան վրայ հպարտանայ, կտորած սիրտ մը  
կը խոնարհեցնէ զնա : նոյն

### Լ Ա Յ Ն Ո Ի Ն Ե Ղ Ճ Ա Մ Բ Ա Յ

Մահուան տանող լայնկէկ ճամբէն  
Բիւրաւորներ միշտ կը քալեն,  
Բայց նեղ շաւիղն իմաստութեան  
Իրենց ընարող քիչերը կան :

«Մնձդ ուրացիր, խաչըդ կըրէ,»  
Օրհնեալ Փրկչին մեծ պատուէրն է .  
Կուզե՞ս շահիլ փառք անվախճան,  
Զոհէ ոսկի, սեպէ ունայն :

Գոռող հպարտ սիրտս, Տէր, սանձէ  
Խոնարհ սիրտ մը ինձ պարգևէ .  
Քեզ հետեւիմ բոլոր սրտով,  
Ո՛չ պարծանքով՝ խաչ կրելով :

### Ս Ն Յ Ն Ո Ւ Ր Ա Յ Ն Ի Ն Ե

Փրկիչ իմ, երբ ըլլայ պիտի,  
Սիրտս ու կամքս քեզ յանձնուի,  
Սչքիս աղքատ կոյր երևիմ,  
Իմաստութեամբդ կառավարուիմ :

Գոհ ըլլամ ես քեզ ճանչնալով,  
Մոռնամ աշխարհքըս լի մեղքով .  
Լոյսըդ ինձի տուր առաջնորդ  
Յուպդ զօրութիւն իմ ճամբուս խորտ :

Կեանքս թող միշտ մարդոց յայտնէ,  
Թէ սրբութեամբ ապրի՛ն ինչ է,  
Սիրտըս փորձով թող ճաշակէ,  
Խոնարհ սիրոյ համը առնէ :

\* \* \*

«Բայց ինձի +ս- լեյի պարձել՝»

Ոմանք կը պարծին հարստութիւնով :  
Զայն ձեռք բերելու թափառին լեռ, ծով .  
Գեղեցկութեամբ ալ ոմանք կը պարծին,  
Եւ հոգ կը տանին լաւ իրենց անձին :

Մէկը հանճարով, մէկն իմաստութեամբ  
Կը պարծի, մէկն ալ անձին սրբութեամբ  
Պատիւով ալ կան շատ պարծենցողներ,  
Եւ ոյժ Լազէկ ձայն այս կարգն են դատուեր :



Բայց ինձ քառ լիցի պարծիլ այլ բանով՝  
 Լոկ մահուամբ փրկչիս և իւր դառն խաչով :  
 Որով ազտեղի մեղքէս մաքրուիմ ,  
 Երկնային փառացն ապահով հասնիմ :

Գ. Մ. Շ.

Աստուծով հանգիստ

Թափառական հողիս ,  
 Դադրէ , աս աշխարհիս  
 Մէկ բեեռէն մինչև միւսին  
 Հանգիստ չըկայ քեզի :

Տես Աստուծոյ տապանն ,  
 Նայէ այն բաց դըռանն .  
 Շուտով մտիւր հոն բընակէ ,  
 Ոչինչ յոյսերդ ձըգէ :

Հանգիստ պիտի ըլլաս ,  
 Եւ շատ ուրախանաս .  
 Ամէն երջանկութեամբ լեցուիս ,  
 Տէրօջմով փրկուիս :


Ով անհանգիստ հողիս ,  
 Դադրէ այս աշխարհիս  
 Մէկ բեեռէն մինչև միւսին  
 Հանգիստ չըկայ քեզի :

Աստուծոյ պաշտպան

Մի թողուր զիս , ով Աստուածքս ,  
 Թող քեզմէ չըմոլորիմ .  
 Ուժովյուր , Տէր , իմ քալուածքքս ,  
 Եթէ ոչ ես կ'ընկղմիմ .  
 Պահպանէ զիս ,  
 Պաշտպանէ զիս ,  
 Որ երբէք չըկորուիմ :

Աշխարհիս անթիւ հողերը  
 Կը վռնանն զիս , Տէր , քեզմէ .  
 Մատանան իւր հրապոյրները  
 Իմ առջև կը դնէ .  
 Վարմերովը ,  
 Նենգերովը  
 Թող զիս չըմոլորցունէ :

Ո՛հ թէ ես սիրոյդ ուժովը ,  
 Տէր Յիսուս , քեզի ձըգուիմ .  
 Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը ,  
 Աշխարհէս հրաժարիմ .  
 Տէր , կանչէ զիս ,  
 Ու քաչէ զիս ,  
 Ես ալ պիտի հետևիմ :





## Ը • ԽՍՁԸ ԿԸ ՏԱՐՈՒԻ ԸՍՏ ՔՄՍՅ

ՈՒ՞ր Խաչը չէ վերցնել — Ի՞նչ երբեք քար ինչի արժանի չէ  
ՔՐԻՍՏՈՍ

Չկրնար արդեօք այս աշակերտը, այսչափ  
անդամ անհնազանդութիւն ընելէ և ուղ-  
ղուելէ ետքը, իւր Տէրոջը կամքը ճշմարտա-  
պէս կատարել: Կ'երևայ թէ դեռ չկրնար ՝  
Կատարեալ հնազանդութիւն սորվելէ առաջ  
չատ ունայն փորձեր ընելու է տակաւին ՝  
վարդապետին պատուէրն է. «Խաչդ առ ու  
իմ երբեք եկ'որ ՝» վերջին յանդիմանութենէն  
ետքը դիտեցի որ խաչը բարձր տեղէն վար  
առած էր, և ինչպէս վայել էր, դրած էր  
իւր ուսին վրայ: Բայց փոխանակ իւր աչքը  
մեր մեծագոյն օրինակին վրայ հաստատե-  
լու և անոր քայլերուն ճշդութեամբ հետևե-  
լու՝ տեսայ որ երեսն անոր հակառակ կողմը  
դարձուցած էր: Մակայն յայտնի էր երեսէն  
թէ անձնահաւանութիւն ունէր, որպէս թէ  
իւր պարտարկանութիւնը ճշդութեամբ կա-  
տարած էր:

Դարձեալ տեսայ որ Տէրը անոր կը մօտե-  
նար, թէև տխուր, բայց կարեկցաբար: Կրկին  
և կրկին աշակերտին սխալումն ուղղած էր,





երկայնմտութեամբ տանելով անոր կամակորութեանը , և մեղմութեամբ ուսուցանելով անոր իւր պարտականութիւնները : Եւ հիմա դարձեալ անգամ մի ևս ուզղելու է այս թթամիտ ուսանողը :

“Տակաւին ,” գոչեց գթով մանաւանդ քան բարկութեամբ , “ տակաւին , որդեակ իմ , կը մերժե՞ս կատարեալ հնազանդութիւն : Քեզի չպատուիրեցի՞ որ խաչը զոր ցուցուցի՞ կրես , և իմ քսցլերուս հետևիս : Կենաց ճամբան իմ օրինակովս կը ցուցունեմ : Այս ունայն աշխարհիս մէջ խաղաղութեան և փառաց ճամբան ես բացի , և քան զայն ուրիշ շախղ չկայ :”

Ո՛րչափ շատեր կան որ խաչ կը կրեն բայց Յիսուսի չեն հետևիր : Միայն Սիւնակեացնորը չեն որ դողալով և անօթի կը կայնին սիւներու վրայ , մինչդեռ հետևելու էին անոր որ “կը պտտէր բարիք ընելով :” Միանձունք և կուսանք չեն որ Տէրոջմէ չպատուիրած կերպ կերպ անձնուրացութիւններ հնարած են , և թէպէտ խոնարհութեան , անձնուրացութեան և բարեպաշտութեան երևոյթ ունին , բայց ընաւ Քրիստոսի նմանութիւն չունին : Շատեր ևս կան , որ թէև այս բնականէ դուրս աւելորդապաշտու-



Թիւնները չունին , բայց կը կրեն նոյն հոգին •  
անհաճոյ պարտականութիւններ կատարելով  
մարմինը կը խաչեն , բայց իրենց անձնական  
կամքը կը յազեցունեն :

Շատեր խաչն այնչափ միայն կը կրեն ,  
մինչև որ ֆրիստոսով յոյս մը ունենան , և  
իրենց յոյսը մարդոց առջև հրապարակաւ  
դաւանին : Եթէ պէտք է զոհել աշխարհ  
հասիրութիւն և հպարտութիւն այս յոյսը  
ստանալու համար , և զոհ մի ևս եկե-  
ղեցոյ ընկերակցութեան մէջ ընդունուելու  
համար , կ'ընեն : Բայց , աւա՛ղ , անոնց յա-  
ռաջադիմութիւնը հոն կը վերջանայ : Այն  
կէտէն սկսելով ետ կը դառնան իրենց ա-  
ռաջնորդէն և օրինակէն , իրենց Տէրոջմէն և  
վարդապետէն . քանզի կրօնքը կը դաւանին ,  
բայց հաղիւ թէ կը գործադրեն զայն . խաչը կը  
վերցունեն , բայց ֆրիստոսի չեն հետևիր : Ֆրիս-  
տոսեայ անուն ունեցողներէն ոմանց մտքին  
մէջ բնաւ մուտ գտած չերևար սա գա-  
ղափարը , թէ Աստուածպաշտութեան կեանքն  
անձնուրացութեամբ ֆրիստոսի հետևել է ,  
անոր պատուէրներուն հնազանդելով և անոր  
հետ մի հոգի ունենալով և անոր պէս գոր-  
ծելով : Կը մոռնան թէ փրկութիւն միայն եր-  
կինք ընդունուիլ չէ , այլ երկրի վրայ ան-

միջապէս վայելելն է ֆրիստոսի ներկայութիւնը ,  
իրբև բարեկամի , առաջնորդի և օրինակի :  
Քոսչը վերցունել թէև անհրաժեշտ պարտք է ,  
բայց մեր բոլոր պարտականութիւնն այս չէ :  
Յիսուսի հետևելու արդելքի բարձունս է  
միայն . կեանք տուող գործն անոր շախ-  
ներուն հետևելն է , անոր հոգին կրելով , ա-  
նոր գործը գործելով , և անոր բնութեան  
և վարուցը նմանելով :

Աշխարհասէր եկեղեցւոյ անգամ մը կայ ,  
որ իւր դաւանութեան խաչը վերուցած է , քան-  
զի այսպիսիներուն միշտ խաչ է այս , և եկե-  
ղեցւոյ անգամակցութեան սանձերը և պա-  
տախանատուութիւններն հաճելի չեն այս-  
պիսեայ : Բայց այս փոքրիկ խաչն անգամ  
կը զլանան ֆրիստոսի : Ինք աշխարհային պա-  
տիւներու ետևէ չպտտեցաւ , մարդոցմէ  
փառք չիմտուեց , և աշխարհիս անձնասի-  
րական վայելներուն չցանկաց : Անոր փա-  
փաքները վերի բաներուն վրայ էին և ո՛չ թէ  
այն բաներուն որ այս երկրիս վրայ են : Ուրեմն  
խաչ տանել չէ մի կամ հազար արտաքին  
բարեգործութիւններ , այլ խաչ տանելն է  
աշխարհի հակառակ , այսինքն՝ Երկնային ,  
կայսութիւն մը :

Ֆրիստոսի եկեղեցւոյն մէջ շատ բծախնդիր



անդամներ կը գտնուին, որ մտքէ անդամ չեն անցուններ ֆրիստոսէ տորվիլ սրտով հեղ և խոնարհ ըլլալ :

Քրիստոսի հետևելն առաջ հոգւոյն մէջ կ'ըլլայ, և ապա՝ արտաքուստ : Այս կ'ըլլայ ամէն երևակայութիւն և Աստուծոյ գիտութեանը դէմ ամէն բան թողլով, և ամէն խորհուրդ ֆրիստոսի հնազանդութեան գերի ընելով : Դուրսէն երևցած ինչ և իցէ չափով անհաճոյ և դժուարին կրօնական գործեր ընելն ի ներքուստ ֆրիստոսի մտքին նմանելուն փոխանակ չկրնար ընդունուիլ : Եւ անոր միտքը չենք կրնար ունենալ առանց անոր վարուց և պատուէրներուն վրայ դդուշութեամբ մտածելու : Մեր զբաղեալ դարուն մէջ այս բանին պակասութիւնը շատ է : Կենաց ամէն պարագայի մէջ ճշդութեամբ և շարունակ ֆրիստոսի հետևելու համար, պէտք է որ միտքը շատ յստակ գաղաբար ունենայ անոր հոգւոյն վրայ, և սիրաբ կատարելապէս ազդուի անոր քաղցրութենէն և պատուականութենէն :

Շատ բաներ ընելու եղանակը կրնայ նոյնպէս մասամբ հնազանդութիւն ըլլալ : Մեր պարաքն է կարօտեալներուն օգնել և մեր ստացուածքէն աալ՝ հոգեւոր և մարմնաւոր

կարօտութիւններ թեթևցունելու : Բայց կրնայ ըլլալ որ խաչը վերցունենք, և տանք այն ստակը որ մեր փափաքներուն շատերը կրնային յագեցունել, և տակաւին ըրած չըլլանք մեր վարդապետին պէս : Անիկա յօժարութեամբ կու տար . մինչև անգամ իւր կեանքը կամաւ տուաւ մեզի համար : Անոր հետևած չենք ըլլար, երբ խնայելով և մեր հաշիւը և կարողութիւնը ճշդելով, գոռոզութեամբ առանց կարեկցութեան կու տանք : Քու հոգիդ ընծայէ անոր որ անօթի է, կ'ըսէ երկնային պաագամը :

Ո՞նք կրնայ իւր հպարտութիւնը խաչել իւր ապաշխարող եղբօրը ներելով, բայց առանց ֆրիստոսի պէս զանիկա սիրելու : Կրնանք մեր վշտացեալ զգացումներն այնչափ սանձել որ մեզի անհաճոյ եղողին չվնասենք, բայց առանց անոր բարիք ընելու, ինչպէս որ ֆրիստոս իւր թշնամիներուն կ'ընէր : Կրնանք անոր պատուէրներէն ոմանք կատարել, բայց տակաւին ուրիշներուն դայթակղութիւն և հակառակութիւն պատճառելով, մինչ, եթէ անոր հետևէինք, պիտի պատէինք “ բարիք ընելով :”

Այլ ո՞նք առանձին կ'աղօթէ, և այս երբեմն խաչ կրելու չափ դժուարին կու գայ անոր, քան



զի շատ կապեր առանձնարանէն դուրս կը  
քաշեն զնա . բայց աղօթած չըլլար անոր պէս  
որ լալով և արտասուօք կ'աղօթէր , որ ջեր-  
մեռանդութեամբ խնդրուածք , միջնորդու-  
թիւն , շնորհակարութիւն և փառք կը մա-  
տուցանէր :

Դարձեալ այլ ոք իւր տունը կ'աղօթէ , սակայն  
իւր ընտանեաց մէջ չաղօթեր : Տէրը ոչ միայն  
առանձին , այլ իւր փոքրիկ ընտանեաց հետ ևս  
չարունակ կ'աղօթէր : Ուրեմն Քրիստոսի  
հետեւէն աւելի է քան խաչ տանելը . և  
խաչ տանելն առանց այն աւերոյն արժէք  
չունի :

Վ Ե Ր Զ Ի Ն Ե Ր Ե Ք Զ Ր Ա Ի Է Ր Ն Ե Ր Ը

Երբ որ ժամ

Ո՛վ խորունկ քնացող , եւ խօսքս մ'անարդեր ,  
Ստեղծողիդ ատր մանկութեանդ մեղմ օրեր .  
Ինչո՞ւ պարապ մնաս արևն կը ծագէ ,  
Ահա՛ այգիին Տէրն քեզի կ'սպասէ :

Զօրութեամբդ , ո՛վ Սուրբ Հոգի ,  
Շնորհէ ինձ ժամ մ'աւելի .  
Հաճոյք երկրիս նախ փորձել  
Կ'ուզեմ , վայել և սիրել ,  
Հագիւ թէ օրն ծագած է ,  
Խնդրեմ , Հոգի , սպասէ :

Վ Ե Գ Ե Ր Դ Ե Լ Ի Ն Ե Կ Ե Ր Դ Ե Ժ Ժ Ժ

Ո՛վ զանդաղ մարդ , փութա , առտուն շուտ կ'անցնի  
Շնորհաց ժամերն ծուլութեամբ մի՛ վասներ , մի՛ .  
Վ աղէ մինչդեռ կէս օրն շատ մը անցած չէ ,  
Այգիին Տէրն կայնած քեզի կ'սպասէ :

Դեռ սպասէ , Սուրբ Հոգի ,  
Օրուան լոյսը կը փայլի .  
Քիչ մ'ալ հանգիստ վայելեմ ,  
Կէս օրս Տէրոջն նուիրեմ .  
Մի սաստեր զիս , շատ ուշ չէ ,  
Հեզ Հոգի , քիչ մ'սպասէ :

Տ Ի Ն Ի Ն Ի Ե Կ Ե Ր Դ Ե Ժ Ժ Ժ

Մեղաւոր , եւ , կանգնէ , ցորեկըդ անցաւ  
Արդէն շուքն արևուն շատ մը երկնցաւ .  
Կեանքիդ սիրոյն , խաւար լեռներէն փախիր  
Մինչ դեռ կ'սպասէ այգիին Տէրն քեզի :

Բաւ է տաղերդ տխրագին ,  
Հոգի , թող զիս առանձին .  
Աշխարհն զիս իւր վարմն ձգեց ,  
Մեատքս շղթայով կապեց .  
Երբ արևը մարն մանայ ,  
Կեանքս Աստուծոյ թող ըլլայ :

Միտք դրէ՛ք , զանդակի ձայներ կը լսուի ,  
Տխրութեամբ լուր կուտայ անյոյս մեռելի .  
Սուրբ Հոգին արամեցաւ , վերջացան ջանքեր  
Այգիին Տէրն զնաց , այլ ևս չսպասեր :



“Յիսուս Նազովրեցի անցածէ”

Արթնցիր ել, ո՛վ մեղաւոր,  
Խեղճ է վիճակդ, տեղդ ահաւոր .  
Քունդ է սիրուն, չիք միշտ բարին,  
Կ'անցնի Յիսուս Նազովրեցին :

Ձգէ կամբըդ, ապաշխարէ,  
Ալ ետ դարձիր մոլար շաւղէ .  
Մ'ըլլար յամառ, դնա ետին,  
Կ'անցնի Յիսուս Նազովրեցին :

Կ'ընդունի քեզ և կը փրկէ,  
Անառակ ես բայց կը ներէ .  
Խաչըդ վերցուր, մի տնտնար,  
Ահա՛ կ'անցնի, ալ չես գտնար :

Կ. Փ. Բ.

Ձիս ալ, Տէր

Տէր, այցելութեամբդ երկիրը  
Շուտ կ'ընես խիստ պողպետք .  
Հիմա օրհնութեանդ անձրևը  
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր .  
Վրաս ալ, Տէր,  
Վրաս ալ, Տէր,  
Թող կաթի իմ վրաս ալ, Տէր :

Մի անցնիր ինձմէ, ով Հայրս,  
Կորսրւածքս դուն վնտուէ .  
Չրիապէս ներէ մեղքերս,  
Գըթութիւնդ ինձ պարգևէ .  
Ինձ ալ, Տէր,  
Ինձ ալ, Տէր,  
Գըթութիւնդ ինձ պարգևէ :

Մի անցնիր ինձմէ փրկիչս,  
Քեզ սիրեմ, քեզի յարիմ .  
Քաղցըր ձայնդ լսէ ականջս,  
Ձիս կանչէ, քեզ հետևիմ .  
Ձիս ալ, Տէր,  
Ձիս ալ, Տէր,  
Ձիս կանչէ, քեզ հետևիմ :

Ուրիշներ քու ձայնդ լսեր են,  
Եւ գըտեր են փրկութիւն,  
Քու շընորհքըդ ընդուներ են .  
Տուր ինձի ալ օրհնութիւն .  
Ինձ ալ, Տէր,  
Ինձ ալ, Տէր,  
Տուր ինձի ալ օրհնութիւն :

Թէև քեզ շատ հեղ մոռցած եմ,  
Սուրբ Հոգի, մ'անցնիր ինձմէ .  
Քեզ մեղքովս վշտացուցած եմ,  
Ո՛հ, ներէ և զիս փրկէ .  
Ձիս ալ, Տէր,  
Ձիս ալ, Տէր,  
Ո՛հ, ներէ և զիս փրկէ :



## Մուշէր ոչխար

Մուշար ոչխար էի,  
 Հօսար չէի սիրեր.  
 Չէի անսար Հովուիս ձայնին,  
 Ուղղուիլ չէի ուզեր:  
 Ես անառակ էի,  
 Տունըս չէի սիրեր.  
 Հօրմէս հեռու կը փախչէի,  
 Մըտիկ չէի ըներ:

Չոր անապատ և մեծ,  
 Անտառ խիտ, ահագին.  
 Փնտռեց Հովիւը իւր ոչխարն,  
 Ու հայրը իւր որդին:  
 Մահուան մօտ զիս գըտան  
 Սաստիկ վիրաւորուած.  
 Չիս փաթթեցին սիրոյ կապով,  
 Եւ վեր առին մարած:

Գլուխս էր նըւաղած,  
 Գութով բարձրացուցին.  
 Չօրացուցին մարած հողիս,  
 Վէրքերս բժշկեցին:  
 Լուացին զիս աղտերէս,  
 Մարմինս հազուեցուցին.  
 Տունըս բերին զիս ապահով,  
 Սիրով խնամեցին:

Յիտուս է իմ Հովիւս:  
 Ինքն էր որ զիս սիրեց.  
 Որ զիս լըւաց իւր արիւնով,  
 Հողիս ալ դարմանեց:  
 Մուշար ու կորսըւած,  
 Ինկած, այն զիս գըտաւ.  
 Չիս այն առաւ ուսին վըրայ,  
 Եւ իւր փարախն բերաւ:

Այլ չեմ մուշար ոչխար,  
 Փարախըս կը սիրեմ.  
 Հովուիս ձայնն ալ ինձի քաղցր է,  
 Ուղղուիլ յօժար ալ եմ,  
 Չեմ անառակ որդի,  
 Իմ տունըս կը սիրեմ.  
 Քաղցր է ինձի իմ Հօրըս ձայնն,  
 Ու մօտ կենալ կ'ուզեմ:

Յասէրենակոն կեանք և մահ

Ո՞ւր կայ հանգըստութիւն  
 Յողնած տրամած հողւոյն.  
 Ունայն է ծովը զայն փնտռել,  
 Կամ մինչ բռնուն քաղել:

Աշխարհըս չըկրնար  
 Երջանկութիւն մեզ տալ.  
 Ո՛չ կեանքս բոլոր ապրիլն է այն,  
 Ոչ ալ մեռնիլ՝ այս մահն:



Այս արտասուաց ձորէն  
 Անդին կեանք կայ նորէն •  
 Այն չըջափուիր տարիներով,  
 Լեցուն է սուրբ սիրով :

Մէկ մահ մին ալ կ'ըլլայ,  
 Որուն վախճան չըկայ •  
 Ո՛հ, Ի՛նչ ցաւք յաւիտենական  
 Երկրորդ մահուան մէջ կան :

Աստուած, Տէր դթութեան,  
 Շընորհքդ թափէ մեր վրան •  
 Որ մենք փախչինք այն մահուանէ,  
 Ու չըզատուինք քեզմէ :

Երբ հասարակ կարող բաւ՝

Երբ հաւատքով կարող ըլլամ  
 “Երկինքն իմն է,” ըսել,  
 Վախէ ազատելով կրնամ  
 Լացող աչքերս սրբել :

Թող դէմս ելլեն մեծ զօրութեամբ  
 Աշխարհքն ու սասանան •  
 Կրնամ նայիլ հանդարտութեամբ  
 Անոնց կատաղութեանն :

Թէև իմ վրաս անթիւ հողեր  
 Փոթորիկի նման,  
 Եւ կամ ցուեր ու դառն վիշտեր  
 Յարձակելու ըլլան :



Սակայն պիտի չը յաղթը իմ,  
 Այլ ամենուն յաղթեմ:  
 Միայն թէ հայրենիքս համնիմ,  
 Փրկչիս երեսն տեսնեմ:

Հողւոյս հանդիստը հոն պիտի  
 Ծովու նրման ըլլայ:  
 Եւ ալ վշտաց ալիք չանցնի  
 Խաղաղ սրտիս վըրայ:



Թ. ԽԱՉԸ ԿԸ ՏԱՐՈՒԻ ԶՀԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ

Խաչն յափնայն 'ի նեղութիւնս,  
 Թէ 'ի ինսոսս և ին 'ի շանոսնս,  
 Է աղահոգ դեղ և դարման.  
 'ի մեջ վշտաց և սանջանաց  
 Խաչն է բարեբերի մարաց  
 Եւ ապաւնն է մի մայն

ՊՈՆԱՎԷՆԴՈՒՐԱՅ

Դարձեալ նայեցայ: Ո՛րչափ փոխուած էր  
 այս թշուառ աշակերտին երեսն անդամ: Անոր  
 երկչոտութիւնը, պարտադանցութիւնը և  
 յանձնապատանութիւնը բոլորովին սանձուած  
 կ'երևէին: Դարձեալ անոր խաչակիր Տէրը  
 մատոյց անոր անձնուրացութեան գործէքը:  
 Առաջին պատասխաններն այլ ևս չկրկնեց:  
 Բայց երբ խաչը իւր ուսին վրայ դարձեալ



դրաւ Տէրը որ երբեմն այնչափ նեղութիւնս ներ խոնարհութեամբ կրած էր անոր համար, աչակերան անոր նման խոնարհութեամբ պատասխանեց, «Տէր, ի՞նչ կ'ըզես որ ընեմ, ոչ թէ իմ կամքս, այլ քուկդ թող ըլլայ:»

Այն ատեն դիտեցի որ Փրկիչը շատ մեծ, ծանր և անհեղեղ խաչ մը ընտրելով աչակերտին վրայ դրաւ և ըսաւ, «Ահա՛, միտքս դքեղ տարօրինակ ծառայութեամբ և տարօրինակ ցաւերով իմ՝ թագաւորութեանս մէջ պատուել է:»

Շատ քաղցր էր տեսնել որ աչակերտն հիմա Երջափ յօժարութեամբ և երախտագիտութեամբ ընդունեց ցաւոց և անարգանաց դործին այն օրհնեալ ձեռքերէն: Դանդաղել չկար, մարմնոյ և արեան հետ խորհրդակցել չկար, տխուր գուշակութիւններ չկային: Կարծես թէ խաչը կ'ողզէր դանձի մը պէս իւր կուրծքին պնդել առանց վախնալու և առանց ամհնալու:

Եւ մինչ այս մեծ փոփոխութեան վրայ կը նայէի, խորհուրդներովս անցեալ և ապառնի ժամանակներ և հեռու երկիրներ տարուեցայ. և ամէն տեղ Հրեայ երիտասարդօրինականի մը գէմբը աչքիս առջև կը նկարուէր: Որ և իցէ ժամանակ, և ուր որ գըտ-

նուէր իւր բոլոր կեանքը Քրիստոսի զոհուած կ'երևար, միշտ կրելով և ընելով Տէրոջը կամքն ամենայն հնազանդութեամբ և երկայնամտութեամբ: Պատրաստ էր նա իւր Տէրոջը կամքն ընել և կրել ամէն կերպով և ամէն ձևերով: Անդամ մը ինձ թուեցաւ թէ Հռովմէական ստորերկրեայ բանտի մը մէջ էի: Հոն տեսայ զնա քարայտակին վրայ նստած, ձեռուրները շղթայակապ և ոտուրները կոծղի մէջ: Հարցուցի անոր թէ ինչ պատճառաւ հոն եկած էր. պատասխանեց, «Յիսուսի հետեւելուս և Աւետարանը քարոզելուս համար հոս դրուեցայ:» Ո՛հ, ուրեմն այդ է ճշմարտիւ խաչ տանել: Միթէ կու լսի իւր այս դառն վիճակին համար: Ո՛չ, զԱստուած կ'օրհնէր անոր բարութեան և հաւատարմութեան համար, «նեղութեան մէջ ուրախանալով:» Յետոյ տարուեցայ Միջերկրական ծովուն մէջտեղ: Հոն դարձեալ տեսայ զնա, կատաղի ալեաց մէջ անծանօթ կղզւոյ մը վրայ նետուած: Եւ տեսայ որ նաև զայս Քրիստոսի համար կը կրէր, և նոյն խոնարհ և համբերող ոգին կը յայտնէր: Դարձեալ տեսայ որ անդգամ մը խարազանով անոր մերկ ուսերը կը ձագկէր, մինչև արիւնը սկսաւ հոսել: Այս ևս Յիսուսի հետեւելուն



համար կը կրէր , և որ և իցէ կերպով անոր ծառայելէ ձանձրացած չէր : Թատրոնին կատարի խուժանին մէջ , Հռովմայեցի կառավարչին ատենին առջև , կամ Աթենացի փիլիսոփայից առջև միշտ նոյն էր , միշտ իրեն յատկացեալ խաչը ֆրիստոսի ետևէն կրելով : Սկիզբէն մինչև վերջը « երկնային տեսլեան հնազանդ էր » : Ֆրիստոսի ծառայութեան դժուարութիւնը հասկցաւ , բայց զայն որ և իցէ ուրիշ ծառայութեան հետ փոխել չուզէր : Ո՛հ , ըսի , այս է ճշմարիտ խաչ տանելը : Քոյդ ըլլալու է խաչը , և ո՛չ ուրիշին : Անշուշտ այնչափ մեծ , ծանր և անհարթ ըլլալու է , որչափ մեծագոյն խաչ տանողը յարմար դատած է : Կրուելու է խաչը , ո՛չ թէ պաշտուելու , կրճատուելու , պահուելու , և կամ պարծանօք ուրիշներուն ցուցուելու : Ֆրիստոսի ետևէն տարուելու է և այն մինչև իսպառ : Մինչև իսպառ համբերողը պիտի ժառանգէ օրհնութիւնը :

Ֆրիստոս ըլլալու է մեր Տէրը և մեր Առաջնորդը : Անոր կամքն ըլլալու է , և ոչ թէ մերինը : Անոր օրինակին և խօսքին հետեւելու ենք , որչափ և ծանրագնի ըլլայ մեզ , և ինչ որ ըլլայ հետևանքը : Ուրեմն յառաջ քան զամենայն մեր անձը խաչելու ենք : Նկա-

տելու չենք այն ցաւերն և հաճոյքը որ կըրնան հանդիպել մեզ : Աշխարհ մեզի համար ի խաչ ելլելու է և մենք աշխարհի : Բայց Պօղոսի վիշտերուն վրայ խորհողին մտքին մէջ բնականապէս այս հարցումը կը ծագի . Այդ երկտասարդը ո՞րչափ բաներ թողելու կանչուած էր . ի՞նչ յաջողութեանց պայծառ յոյսեր , բնկերութեան մէջ ի՞նչ բարձր դիրք , իւր ժամանակի իմաստնոց հետ ի՞նչ ընկերութիւն : Բայց միթէ այսչափ զոհեր հարկաւոր կրնա՞ն ըլլալ : Եւ այս հարցումն աւելի ստիպողական կ'ըլլայ , երբ կը յիշենք մարտիրոսներուն պատմութիւնը : Ի՞նչ հիանալի հաշիւ է . Հռովմայեցի կայսերաց հալածումներէն սկսելով կ'անցնի արտասուաց և արեան հոսանաց քովէն , զոր թափառական եկեղեցին իւր ետևէն ձգած է , երբ նա իւր փրկութեան առաջնորդին կը հետևէր որ « չարչարանօք կատարեալ եղաւ » :

Այո՛ , հարկաւոր է , « քանզի շատ նեղութիւններով պէտք է մտնել երկնից թաղաւորութիւնը » : Ամենասուրբ Փրկչին համար եթէ հարկաւոր էր , որչափ ևս աւելի մեղաւորներուն համար , զորոք կը փրկէ նա » : Կամապաշտութիւնը մեր սէրն անձնասիրութեան փոխեց , և հիմա սիրոյ կրնանք դառնալ միայն անձնուրացու-



Թեամբ : Թէև մեր վարդապետին չափ կա-  
տարեալ ըլլայինք , սիրոյ բնութիւնն այնպէս  
է որ միայն ուրիշի օգտին համար մեր անձը  
նուիրելով կամ ուրիշի կամաց զիջանելով  
յայտնի կ'ըլլայ :

Անշուրացո՞ւնի-

Յիսուս , աշխարհքը եմ ձրգած ,  
Ու խաչս առի որ առ քեզ դամ .  
Մերկ և աղքատ ու անարդուած ,  
Հերիք է ինձ որ քեզ ճանչնամ :

Այս աշխարհիս սուտ բարիքներ  
Որոնց վըրայ կը յուսայի ,  
Ինձի եղան պարապ բաներ ,  
Ու քեզ միայն ես իմն ըրի :

Թող աս աշխարհն իս անարդէ ,  
Նոյնպէս ալ մեր Տէրոջն ըրաւ .  
Մարդոց դատումն իս կը մերժէ ,  
Բայց դուն զիս մի մերժեր բընաւ :

Բարեկամներս թող զիս ձրգեն ,  
Բայց , Տէր , դուն ես հաւատարիմ .  
Երբոր իմ յոյսս քու վրադ գընեմ ,  
Շատ ցնծումով ես կը լեցուիմ :

Թող մարդոցմէ միշտ տանջուիմ ,  
Բայց իմ հոգիս քեզ կը յանձնեմ .  
Քանի որ հոս կը փորձուիմ ,  
Փրկչիս սէրն ես կը վայելեմ :

Կարող չէ վիշտ ինձ վընասել ,  
Երբոր Քրիստոս իմ հետըս է .  
Յաւ , նեղութիւն , տանջանք քաշել՝  
Ինձ բերկրութիւն , ցնծում ալ է :

Ով իմ հոգիս , ուրախ եղիր ,  
Առջևըդ փառք կայ անդադար .  
Վըսեմ կոչումըդ լաւ ճանչցիր ,  
Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար :

“Ելէ+ Ինչ”

Ես կը լըսեմ ձայնդ , ով Յիսուս ,  
Անոր համար կու դամ .  
Սիրուն քու ձայնդ ականջս լեցուց ,  
Ինչպէս ես չարտորամ :  
Կու դամ , կու դամ , զիս մի մերժեր ,  
Յոյժ կ'աղաչեմ , ով Տէր .  
Արժանացուր յոգնած հոգիս  
Սուրբ հանգըստեան երկնից :

Հոգիս կեանքէս է ճանձրացած  
Այս չար ձորին եղերքն .  
Սիրտս ներսի դիս է խրոտված  
Մեղքիս ճնշող բռռէն :  
Կու դամ , կու դամ , ևլն :



Ունայն տեղ մինչ ցարդ ջանք ըրի  
 Փրկել զիս իմ ուժովս .  
 Յանցանքս սրբել ես չը կրցի  
 Բարեգործութիւնովս :  
 Կու գամ, կու գամ, ելն :

Քու սուրբ արիւնըդ թափուեցաւ  
 Խաչափայտին վրայ .  
 Ամէն մեղքերս հոն քաւուեցաւ  
 Արդար գլխուդ վրայ :  
 Կու գամ, կու գամ, ելն :

Ո՛րչափ սուրբեր արդէն եկան  
 Քու տեսութիւնդ վայել .  
 Դուն ես ճամբան որով կրցան  
 Այն սուրբ հանգիստն մտնել :  
 Կու գամ, կու գամ, ելն :

Ա. Ն. Ճ

Յիսուս

Անթիւ մեղքերս երբ յիշեցի, հաշուեցի,  
 Ահով դողով հոգիս լեցաւ, շատ լացի .  
 Սակայն երբոր Փրկիչն Յիսուս միտքս եկաւ,  
 Ահլս՝ յուսոյ, դողըս ցնծման փոխուեցաւ :  
 Աչքս Սինայի ես վերուցի . սուրբ արդար  
 Չայնն օրինաց լեռն լսելով կը մըխար .  
 Սիրտս ալ մխաց, բայց լսեցի որ Յիսուս  
 Օրէնքն լեցուց, անէծքն կրեց իմ հոգւոյս :

Ինձ երեցաւ մաշող կրակ սուրբն Սատուած  
 Դատաստանի մեծ ու անեղ գահն բազմած .  
 Հոգիս իմ ներսըս մարեցաւ . բայց Յիսուս  
 Յուցուց քաղցրիկ երեսն, անցաւ ան հոգւոյս :

Գրտայ թշուառ հոգւոյս սև մահ վճռուած,  
 Սարսափը սիրտս կոխեց, խաւարն ամպամած .  
 Իսկ երբ աչքըս Գողգոթայի դարձուցի,  
 Տեսայ խաչը, հոն թողութիւն կարդացի :

Ո՛հ, կորսուած էի Փրկչէս շատ հեռի,  
 Ետ դառնալու բընաւ յոյս ճար չունէի .  
 Ինձ թուեցաւ թէ մէկն անունա կը կոչէ,  
 «Ես եմ ճամբան, որդեակ, ինձի հետեէ :»

Օրհնեա՛լ ճամբայ որ ինձ բացաւ Տէրս մահուամբ,  
 Սրտիեց, քաւեց ձրիապէս իւր արեամբ .  
 Միշտ աս ճամբէն քայլեմ, մէյմ՝ ալ չերթամ ետ,  
 Օգնէ Յիսուս, որ քայլս առնեմ քայլիդ հետ :

Տերու յոյն

Տէրոջը ձայնը լրսեցի .  
 Ըսաւ, «Ինձի եկուր .  
 Գրլուխըդ, ով յոգնած հոգի,  
 Կուրծքիս վրայ պառկեցուր :»  
 Ինչպէս էի անոր եկայ,  
 Կոյր, մերկ, յոգնած, տրտում .  
 Հոս ապաստանարան դրտայ,  
 Ան ինձ տըւաւ խնդում :



Տէրոջը ձայնը լրսեցի .

“Չըրիաբար խըմէ  
Կենաց ջուրէն ,” ըսաւ ինծի ,

“Եւ խըմեցով ապրէ :”

Եկայ , գաւաթը լեցուցի

Այն կենսատու ջրով .

Անով ծարաւըս անցուցի ,

Հիմա կ'ապրիմ անով :

Տէրոջը ձայնը լրսեցի .

“Ես աշխարհիս լոյսն եմ .

Եկուր , գիշերդ պիտի անցնի ,

Յորեկդ փայլեցընեմ :”

Եկայ եւ ան եղաւ ինծի

Արև , լուսոյ շրջան ,

Եւ ան լոյսով քալեմ պիտի

Մինչև ճամբուս վախճանն :

### Ա.ՔԷ-Ե

Տէր Յիսուսի երակներէն

Աղբիւր մը կը յորդէ

Արեամբ լեցուած . մեր մեղքերէն

Կը լուսայ ու կը մաքրէ :

Խաչին վըրայ խեղճ աւազակն

Երբ ան աղբիւրն տեսաւ ,

Չարչարանացը ժամանակն

Խիստ շատ ուրախացաւ :

Ասոր նրման թէպէտ ըլլամ  
Շատ չարագործ ես ալ,  
Նոյն աղբիւրին ջրովս կրնամ  
Լուացուիլ , մաքուր ըլլալ :

Այն փրկարար աղբիւրն տեսայ ,  
Եւ տեսներէս 'ի վեր  
Իմ գովութեանըս առարկայ  
Եղաւ քու սէրդ , ով Տէր :

Ու երբ հոս գովեղէն դադրի  
Մահուամբ արկար լեզուս ,  
Երկնից մէջ սէրդ ալ աւելի  
Երդեմ , ով Տէր Յիսուս :

Ինչպէս ո՞ր է՞

Ինչպէս որ եմ մեղքով լեցուած ,  
Խեղճ մեղաւոր ու կորսուած ,  
Աչքերս դէպ 'ի Փրկիչդ ուղղած ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :

Ինչպէս որ եմ , չապաստելով  
Հողիս սրբել պարապ յուսով ,  
Քու արիւնիդ լոկ նայելով ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :

Ինչպէս որ եմ , շատ տանջուած ,  
Ու բաղմաթիւ մեղքով պատած ,  
Ասդիս անդին միշտ տատանած ,  
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :



Ինչպէս որ եմ դուն, Տէր, գիտես,  
 Իմ մեծ մեղքերըս կը ջնջես,  
 Աղտոտ հոգիս զուտ կը սրբես .  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ :

Ինչպէս որ եմ, այնպէս կու գամ,  
 Շնորհէ որ միշտ քու քովդ ըլլամ,  
 Ու յաւիտեան երեսդ տեսնամ,  
 Գառն Աստուծոյ, քեզի կու գամ :

«Աշխարհի տոն է՛»

Այո, լոյս ես, Տէր սիրելի,  
 Քեզ չը գտած ես կոյր էի .  
 Լըսեր էի թէ սիրտս է չար,  
 Վա՛յ եղկեւոյս, չէի ըզգար :

Լըսեր էի թէ մեղք ունիմ,  
 Եւ թէ դըժոխք բաժինս է իմ .  
 Հոն կ'երթայի ես չարաչար,  
 Վա՛յ եղկեւոյս, չէի ըզգար :


Լըսեր էի թէ սէր ես դու,  
 Կեանք ու հանգիստ կու տաս մարդու,  
 Եւ թէ ըզ չարն կ'ընես արդար,  
 Վա՛յ եղկեւոյս, չէի ըզգար :

Բայց երբ ըզքեզ իմինս ըրի,  
 Իմ սիրտս ու սէրս քեզի տուի,  
 Հաւատացի, տեսայ, կը զգամ,  
 Օգնէ ինձ որ ալ չը կուրնամ :



Ինծի նրման շատեր ալ կան,  
Որ տակաւին կոյր կը կենան.  
Բայ աչքերնին որ քեզ տեսնեն,  
Եւ նեղ դռնէն շուտ ներս մտնեն:

Գ. Մ. Շ.



### Ժ. ԽԱԶԸ ԿԸ ՀՍՄԱՐՈՒԻ ԴԺՈՒԱՐՍՏԱՐ

Յառով վեշտով լեցոած ճամբան, մի միայն այն,  
Կ'առաջնորդէ այն երկիրը որ ցատ չկան.  
Ո՛ւ երբէ՛ք մին ՚ի ճամբորդաց այն որեղ հասաւ,  
Որ ճամբոն մեջ գոռ է որորակ հոս չը բորս:

ՔԱՌԻՖԸՐ

Դոտ առնէ ին վաղէ՛ք, ո՛վ յեղ եր կեցոց:

ՊՕԴՈՍ

Ելէ՛ք դուն խաչը զառարկա-լեամբ որանէս,  
Ան իեղ ապահովութեամբ պէտքէ որանի:

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ



Մեր ճամբորդը իւր բեռը չալկած շատ ճամբ  
բայ առած չէր, երբ դիտեցի որ տակաւ  
բեռն ուսէն վար առնելով մէկդի դրաւ, հա-  
մարելով զայն ծանր բեռ և անկէ անդին տա-  
նելու այլևս կամք չունէր:

Բայց հանապազ արթուն և հաւատա-  
րիմ Տէրը, որ զնա կենաց ճամբուն մէջ ա-  
ռաջնորդել սկսած էր, յայտնի է թէ չէր  
ուզեր այն վիճակին մէջ թողուլ զնա: Այս  
թերահաւատ աշակերտին մեղմով մօտե-



նալով՝ գթած, բայց յանդիմանական, դիմօք ըսաւ .

Տէր՛ .— Ի՛նչ . չե՞ս կրնար խաչդ գոնէ ժամ մը ևս կրել :

Ա՜ՆԱԿԵՐՏԸ .— Տէ՛ր , այս ծանր ծառայութեան իմ զօրութիւնս անբաւական կը գըտնեմ :

Տ .— Բայց չըսի՞ քեզ թէ շատ նեղութիւններով ինձ հետևողները կրնան մոռնել երկնից թագաւորութիւնը :

Ա .— Այո՛ , լսեցի այդ խօսքը , բայց չէի գիտեր թէ այսչափ շատ է նեղութիւնները , մինչև որ խաչս սկսայ կրել :

Տ .— Ի՛նչ է որ շատ դժուարին կը թուի քեզ :

Ա .— Աշխարհի մէջ կացութիւնս շատ տըհաճելի բեռեր կ'աւելցունէ : Շատերը որ բնաւ չեն աղօթեր և Աստուծոյ վրայ հաւատք չունին , շատ աւելի հանդիստ ունին քան զիս :

Տ .— Բայց , որդեակ , ես որ հարուստ էի քեզի համար չազբատացայ :

Ա .— Գիտեմ՛ զայդ , Փրկիչ իմ . բայց կը տեսնեմ որ այնչափ շատ զոհեր կը պահանջէ կրօնքս որ վերջապէս որոշեցի կենալ և հանդչել գոնէ ժամանակ մը :

Տ .— Ո՛հ , յիմար և ապերախտ որդի . կը կարծես թէ կարելի՞ է իմ թագս ժառանգել , խաչէս մէկդի կենալով : Կը կարծես թէ երբէք ինձ հետևողներուն վրայ հարկ չեղած լ՞ուծ մը դրած եմ : Համբերութեամբ միայն իմ չարչարանացս մէջ ինձ ընկերանալով և մինչև իսպառ դիմանալով կրնաս իմ մտերիմ ընկերս ըլլալ :

Շատեր կան որ սխալ կը հասկնան Տէրոջը հանգստեան , խաղաղութեան և ուրախութեան անգին խոստումները : Նա բնաւ իրեն հետևողներուն արտաքին յաջողութիւն չխոստացաւ : Մարմինը խնայելու խոստում բնաւ չըրաւ : Մարմին ըսելով թէ նիւթականը և թէ այլաբանականն ըսել կ'ուզէ : Նիւթական մարմինը՝ իւր բոլոր գեղեցիկ և զգայուն մասերով , և այլաբանականը՝ հոգւոյն զգացումներով , երբ ասոնք նեղութեան կը հանդիպին , հոգւոյն զօրութիւնները կը սրբաւին և կը բարձրանան : Եթէ վարդապետը « չարչարանօք կատարեալ եղաւ , » ո՛րչափ ևս աւելի աշակերտը :

Մեր Փրկիչը երբ մարդոց վրկութիւն խոստացաւ , երբէք խաչը չժածկեց : Անդադար կ'ըլլացնէր զանոնք որ երկինք տանող ճամբան հանդիստ ճամբայ չկարծեն :



“Աշխարհիս մէջ նեղութիւն պիտի ունենայք :”  
 “Խաղաղութիւն բերելու չեկայ, այլ սուր :”  
 “Եթէ մարդ չատեր իւր հայրը և մայրը, կամ  
 կինը և զաւակները, իւր կեանքն անդամ,  
 չկրնար իմ աշակերտս ըլլալ :” Այն որ իւր  
 կեանքը կը սիրէ, այսինքն կենաց վայելում  
 ները գերազոյն առարկայ կ'ընէ, պիտի կոր-  
 սընցունէ զայն :

Ուրեմն զարմանալու չէ հաւատացեալը, և  
 ոչ յուսահատելու, երբ իւր փորձութիւն-  
 ները շատ են, մինչև անգամ եթէ այնպէս  
 աստիկ են ինչպէս Յովնները : Երբ մեր ար-  
 տաքին շահերը կը կորսնցունենք և ներսէն  
 փորձութիւնք կը նեղեն սիրտը, պարտինք յի-  
 շել սա յորդորը, “Որդեակ իմ, Տէրօջը խրատը  
 մի՛ անարգեր, և անկէ յանդիմանուելով մի  
 թու՛նար : Վասն զի Տէրը իւր սիրածը կը խը-  
 րատէ, և կը ծեծէ ամէն որդի զոր կ'ընդու-  
 նի :” Յանդիմանութիւնը և նեղութիւններն  
 առ ոչինչ համարել ստոյիկեան վարդապետու-  
 թեան ծայրն է, իսկ նուազելը երբ նեղութեամբ  
 կը յանդիմանուինք, միւս ծայրն է . երկոքին  
 ևս սխալ են :

Երկայն ժամանակէ հետէ անկողնոյ ծա-  
 ուայող աշակերտը, կենաց հոգերով ծան-  
 րացեալ աղքատը, և նեղեալ, անյաջող և

մոռացեալ զաւակն Աստուծոյ, պարտի իւր  
 խաչն Յիսուսի պէս հեղութեամբ և համբե-  
 րութեամբ կրել : Յոբ իւր վրայ դիզուած  
 վիշտերէն գանգատեցաւ, բայց երբ աւելի  
 աղէկ հասկցաւ նպարագանքը, իւր անհամ-  
 բերութեան վրայ զղջալով ըսաւ . “Արդարև  
 կ'ըսէի, բայց չէի հասկնար, վասնորոյ կ'ար-  
 համարհեմ իմ անձս, և հողոյ և մխրոյ վրայ  
 կ'ապաշխարեմ :”

Մեր փորձութիւններէն շատերը կը ծագին  
 մեր սրտերուն մէջ մնացած չար հակամիտու-  
 թիւններէն : Թէև մեր մէջ մի միայն չար  
 փափաք գտնուի, խաչ կրել հարկ պիտի ըլ-  
 լայ . քանզի ունակութեան մը դէմ դնել  
 միշտ դժուարին և ցաւալի է :

Բայց չար փափաքները միայն չեն մեր բնու-  
 նորացութեան առիթ կու տան : Ինչպէս  
 մեր անկեալ բնութեան մէջ, նոյնպէս սուրբ  
 արարածոց բնութեան մէջ երբեմն փորձու-  
 թիւն պատահած է : Հրեշտակները սուրբ  
 էին, բայց փորձուեցան : Եւ եթէ անոնք  
 բոլոր իրենց բնական ազդումներն Աստու-  
 ծոյ կամայը հպատակեցունէին, երբէք մեղք  
 պիտի չմտնէր երկինք : Նաև Տէրն մեր փոր-  
 ձուեցաւ, այսինքն անօթութիւն զգաց, բայց  
 զինք ուրանալով դէմ դրաւ բնական ախորժա-





կին , որ , թէև ինքնին մեղք չէր , բայց այն պարագաներուն տակ մերժելի էր : Անարգուելուն ցաւն զգաց , և այդ զգացման բնական հետեանքն էր այնպիսի ընթացք բռնակ ուր մարդոց արհամարհանքը կը գրդուեն : Այսպէս բնական օտարման դէմ դնելով իւր գործը յառաջ տարաւ նախատանաց և ատելութեան մէջ :

Սոյնպէս բարեպաշտ քրիստոնէին հարկ է միշտ հսկել և պատերազմել :

Շատերուն համար զիրենք “գիւրաւ պաշարող” մեղաց զօրութիւնը կարի մեծ է , և անոր դէմ պատերազմել ծանր և ձանձրալի է : Երբեմն անոնց երկիւղները կը սաստկանան և Դաւթի հետ կ’ըսեն , “Վերջապէս օր մը Սաուղի ձեռօք պիտի կորսուիմ” : Յուսահատեալ և նուաղեալ գրեթէ կը դադարին յուսալ և աղօթել : Ասոնք են այն յոգնած զօրքը զորս թագաւորը պատերազմին սաստկութեան ատենը դաշտին վրայ քնացած կը գտնէ , և կ’ըսէ անոնց , “Ով Յակօբ , ինչո՞ւ կ’ըսես , և , ով Իսրայէլ , ինչո՞ւ կը զրուցես թէ իմ ճամբաս Տէրոջմէ ծածկուեցաւ , և իմ իրաւունքս իմ Աստուծմէս զանց եղաւ : Միթէ չգիտցա՞ր , կամ չըսեցի՞ր որ յաւիտենական Աստուածը

Եհովա , երկրիս ծայրերուն Ստեղծիչը , չյոգնիր և չթուլնար , և Անոր իմաստութիւնը չքննուիր : Նա է յոգնածին ոյժ տուող , և կարողութիւն չունեցողին շատ զօրութիւն հասցունող : Երիտասարդներ անգամ պիտի յոգնին և թուլնան , և ընտիր ակոյրաններ բողբոլին պիտի իյնան : Բայց Տէրոջը ապաւինողներուն ոյժը պիտի նորոգուի , և անոնք արծուիներու պէս թւեցողով վեր պիտի ելլեն . պիտի վազեն և չթուլնան , պիտի քալեն և չյոգնին :

Ուրիշներն Աստուծոյ թագաւորութեան համար աշխատելով կը յոգնին և կը յուսահատին :

Շատ քարոզիչներ և հովիւներ տարիներով ըստ երևութին ի զուր աշխատած և իրենց զօրութիւնը վատնած են : Շատ անգամ իրենց ոիրտերը կտարելով կը փնտուեն թէ արդեօք ո՛ւր իրենցմէ ցանուած սերմերէն գունէ մին պտղաբերած է : Բայց ահա՛ անապաշտար մարդիկ կոյր և թշուառ կը մնան անոնց բոլոր աշխատութենէն ետքը :

Ուր որ կը յաջողին փոքրիկ պարտէզ մը տնկել և քանի մը փափուկ որթերով զարդարել և պտղոյ բողբոջներ նշմարել , վայրենի խոզը զանոնք կ’ապականէ և կը կտարը :



տէ : Շատ անգամ կ'ստիպուին հին ողբերը կարդալ . «Եգիպտոսէն որթ մը փոխադրեցիր , հեթանոսները վռնտեցիր , ու զանկա անկեցիր : Անոր առջևէն տեղ պատրաստեցիր ու անոր արմատները հաստատեցիր . և անկա երկիրը լեցուց : Լեռները ծածկուեցան անոր հովանիովը , անոր ճիւղերը Սասուծոյ եղևիններուն պէս եղան : Իւր ճիւղերը երկնցուց մինչև ծովը , և իւր բողբոջները մինչև գետը : Ինչո՞ւ փլցուցիր անոր ցանկերը , որ ճամբայէն բոլոր անցնողները անկա փրցունեն : Վայրենի խողը ասպականեց զանկա , և գաշտի գազանները կերան զանկա : »

Շատ ծնողք իրենց զաւակներուն սիրտերը յամառ և կամակոր կը գտնեն . շատ ուսուցիչներ իրենց պարտականութեանց ներքե կը նուազին . շատ բարեկարգիչներ մեղքն ու սատանան քան զոր կը կարծեն աւելի զօրաւոր և դիմադրելու կարող կը գտնեն : Շատ հովիւներու բազուկներ յուսահատութեամբ վար կ'իյնան , քանզի կը մոռնան թէ « համբերութեամբ վազելու ենք մեր առջևը դըրուած ասպարէզի ընթացքին . Յիսուսի նայելու ենք մեր հաւատքին առաջնորդին և կատարողին . որ ինք այն ուրախութեան համար որ իւր առջև կեցած էր , խաչը յանձն ա-

ռաւ : » Ամէն նուազեալ աշխատուորին Յիսուսի օրինակը քաջալերութիւն է , և Պօղոսի օրինակն՝ յանդիմանութիւն :

Արդ , որովհետև մարմինը խաչուելու է , մարմնոյն կամ մտքին ցաւ և յոգնութիւն զգալը չէ զոր Քրիստոս կը յանդիմանէ , այլ հոգւոյն ձանձրութիւնը : Անոր մարմինն իսկ նուազեցաւ առանց մեղաց , նոյնպէս կրնայ ըլլալ մեղ : Անոր մարմնոյն գերազանց կազմութիւնն ահարկու բեռան տակ ինկաւ : Անոր պատուական նագելի հողին անձկութեամբ ազազակեց որ դատնութեամբ լեցուած դաւաթն իրմէ անցնէր : Բայց այս բոլոր բաներուն մէջ իւր կտօքը չէր ընարեր : Խաչին տակ նուազեցաւ բայց մէկդի չդրաւ զայն : Աղօթեց որ այն դաւաթն իրմէ անցնէր , բայց ձեռօք անդին չհրեց : Լացաւ Ղաղարոսի գերեզմանին վրայ , բայց չգանդատեցաւ և իւր Հօրը սիրոյն և հաւատարմութեան վրայ չկասկածեցաւ : Նոյնպէս իւր աշակերաններուն կ'ըսէ . « Աշխտըհիս մէջ նեղութիւններ պիտի ունենար : » « Այն որ իւր կեանքը կը կորսնցունէ , պիտի գտնէ զնա : »

Բուն իսկ խաչը բնութեամբ լուծ և բեռէ , բայց մարմինը կամ բնութիւնը միայն կ'ըլզգայ : Ուստի մինչդեռ դուրսի մարդը կոր-



սուերու վրայ է, ներսի մարդը կ'ապրի, կ'աճի, կը ցնծայ “օրէ օր նորոգուելով” Այս է այն նորապանչ ճշմարտութիւնը զոր Պօղոս հիացմամբ կ'ըսէ. “վշտացած ենք, բայց նեղը ինկած չենք. կարօտեալ ենք, բայց յուսահատած չենք. հալածուած ենք, բայց եզեսէ ձգուած չենք. վար ձգուած ենք, բայց կորսուած չենք. ամէն ատեն Յիսուսի մահը մեր մարմիններուն մէջ կը կրենք, որ Յիսուսի կեանքն ալ մեր մարմիններուն մէջ յայտնուի:” Խաչին տակ կրնանք յողնիլ, բայց խաչէն յողներու չենք: Մեր օրհնեալ վարդապետին ծառայել շատ չնչին փոխարէն է անոր սիրոյն որ առ մեզ, չարչարանաց և զոհերուն վասն մեր: Այսու ամենայնիւ լաւագոյնը կրնանք նուիրել: Մեզ իւր այգւոյն մէջ իբրև թղենի տնկելէն ետքը՝ միայն կը նայի և կ'սպասէ որ “Պտուղ տանք և ասանկով իւր աշակերտներն ըլլանք:”

Խաչէն ձանձրանալ: Ո՛վ երկչոտութիւն, ո՛վ հեշտասիրութիւն. անարժան այնպիսոյն որ երկնային փառաց և երջանկութեան կը տենչայ: Դեմաս ևս յողնեցաւ և դարձաւ յաշխարհ զոր կը սիրէր:

Մեր պատերազմէն բնաւ դադարելու չենք ցորչափ Քրիստոսի թշնամի մը կայ որ յող-

թուելու է, կամ հոգի մը կայ որ մեր անգուլ աշխատութեամբ փրկուելու է: Մոռնալու չենք առաքելոյն կենսատու խօսքը զոր Տէրօջը անուամբ կ'ըսէ. “Բայց բարի գործելէն չձանձրանանք, քանզի յարմար ժամանակին պիտի հնձենք եթէ չթուլնանք:”

Հաստատուն և անվրդով կամք ունենալ մեծ օգնութիւն է Աստուածապաշտ կեանք անցունելու: Մեզ պաշարող փորձութեանց գոնէ քիչ մը զիջանելու համար սատանան հազար պատճառանք պիտի ցուցունէ. բայց մեր դիտաւորութեան վրայ հաստատ կենալու ենք: Կատարեալ հաստատակամութիւն շատ հարկաւոր է մեր ամենօրեայ գործերուն համար, ո՛րչափ ևս աւելի կրօնական բաներու մէջ: Այն որ դիւրութեամբ կը շարժի՝ սրբութեան ճամբան իրեն դժուարին և թերևս անհնարին պիտի գտնէ: “Երկմիտ մարդն անհաստատ է իւր բոլոր ճամբաներուն մէջ:” Դուք որ նեղ ճամբուն մէջ կը քայլէք՝ թող ձեր որոշումներն անշարժ ըլլան: Նայեցէք օրհնեալ Փրկչին. “Աստուած իմ, Աստուած իմ,” կ'ըսէ, “ինչո՞ւ զիս թողուցիր:” Թէև ժամանակ մը թողուեցաւ, գոնէ այնչափ որ աննկարագրելի և անպատմելի ցաւեր քայեց, բայց անոր սիրտը հաս-



տատուն էր, և տակաւին կրնար ըսել. «Մտա-  
ուած իմ, Ստտուած իմ»:» ԲԲՀԱՍ

Մարդ բնականաբար չուզեր խաչը տանել,  
խաչը սիրել, մարմինը նեղել և հնազանդու-  
թեան բերել, պատիւը մերժել, թշնամանք  
կամաւ կրել, զինք ոչինչ համարել, և ուզել  
անարգուիլ. ամէն նեղութեան և կորստեան  
տանել և աշխարհային հարստութեան չփա-  
փարել:

Եթէ դու քեզի ապաւինիս, բնաւ ինքնին  
պիտի չկրնաս այսպիսի բան մը ընել. սա-  
կայն եթէ Տէրոջը ապաւինիս, վերէն զօրու-  
թիւն պիտի արուի քեզ, և աշխարհ և մար-  
մին քու հրամանիդ պիտի հնազանդին:

Եւ ո՛չ պիտի վախնաս քու թշնամիէդ,  
դիւէն, եթէ հաւատով զինուած և Քրիս-  
տոսի խաչովը դրոշմուած ըլլաս:

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՅԻ

Կարի է բեռն ի՞մ

Կրկեալ գնայի ես զըւարթ  
Ըզ վարդ, ըզ փուշ միասին,  
Յամաքեցաւ սօթով վարդ,  
Եւ զոսս իմ փուշք խոցեցին:

Եւ յեզր հովտին ամայի  
Ընդ որ վրասկ սահեալ գնայք:

Նոտէի խոնջ և լայի  
Ըշխան յուսոյս առեալ վայր:

«Ո՛հ, Տէր, կարի է բեռն իմ»,  
Ասեմ, «մինչ ցե՛րբ վայրապար,  
Խաչ ՚ի շալակ շրջեցիմ»,  
Ընդէ՛ր դու զիս մուսայար:»

Եւ սաս տեսի զի Յիսուս  
Հեզիկ լռիկ ելանէր,  
Խաչ ծանրաբեռն արկեալ յուս  
Ընդ սայրասուր ժայռս ՚ի վեր:

Շառագունեաց իմ երես,  
Եւ շարժեցաւ սիրտս ՚ի գութ.  
Եզ՞ւկ, Յիսուս, յ՞ դիմես,  
Ո՞յր ծանր այդ խաչ՝. Ասաց, «Քոյդ:»  
Ս. ԱՃԵՄԵԱՆ

Վերև հանքի

Յողնած մարած երբ դորձելէ,  
Քրտինք կաթի իմ ջերմ ճակտէ,  
Գործէս դադրել կը մրտածեմ,  
Բեռըս ձգել ուսէս կ'ուզեմ.  
Յայնժամ մեղմիկ ձայն մը կու գայ,  
Սուգ հառաչանք խեղդել կու տայ.  
«Գործէ, մինչդեռ օրն մարած չէ,  
Խաւարն թող գայ ետքը հանդէ:»



Ետքը հանգչէ ,  
 Վերջն հանգիստ կայ .  
 Միշտ գործ պէտք չէ ,  
 Միշտ լաց չկայ .  
 Գործոց կատարն կը մօտենայ ,  
 Հառաչանաց վախճանն կու գայ .  
 Ծանր լուծերդ պիտի ձգես ,  
 Ետքը անվերջ հանգիստ մը կայ :

Աշխարհս կեանք է աշխատանայ ,  
 Ցաւոց վշտաց և փորձութեանց .  
 Իմաստութեամբ թէ դիմանաս ,  
 Երկնից հանգիստն պիտի մտնաս .  
 Վազէ , պանդուխտ , գործէդ մնաձ ,  
 Տես նպատակդ մօտ է դրուած .  
 Ահա՛ վարձքըդ , սրչափ մեծ է ,  
 Առ , իւրացուր , ետքը հանգչէ :

Ետքը հանգչէ ,  
 Վերջն հանգիստ կայ .  
 Միշտ գործ պէտք չէ ,  
 Միշտ լաց չկայ .  
 Գործոց կատարն կը մօտենայ ,  
 Հառաչանաց վախճանն կու գայ .  
 Ծանր լուծերդ պիտի ձգես ,  
 Ետքը քաղցրիկ հանգիստ մը կայ :

Երբ ծանրը բեռ բեռի վրայ  
 Ուսիդ շարկիդ դիզուած տեսնես ,  
 'Ինչո՞ւ ընկերս պարապ կենայ ,  
 'Ինչո՞ւ ան բեռ չունի ,՝ չըսես .

Տէրը կ'ուզէ որ դադրի նա ,  
 կրնա՞ս քննել թէ միտքն ինչ է ,  
 Բայց քեզ կ'ըսէ , “Որդեակ” , գնա ,  
 Այդիս գործէ , ետքը հանգչէ :

Ետքը հանգչէ ,  
 Վերջն հանգիստ կայ .  
 Միշտ գործ պէտք չէ ,  
 Միշտ լաց չկայ .  
 Գործոց կատարն կը մօտենայ ,  
 Հառաչանաց վախճանն կու գայ .  
 Ծանր լուծերդ պիտի ձգես ,  
 Ետքը անխառն հանգիստ մը կայ :

Հունձքի մշակ գունաատերես ,  
 Թող այս խորհուրդն քեզ հաստատէ .  
 Թ'ամէն մէկ խուրճ զոր կ'ամբարես ,  
 Քեզ մշտատե շահ կը բերէ .  
 Արդ ծանր խաչդ կըրէ սիրով ,  
 Պարտուցդ դաշտերն ճեպէ փութով .  
 Քաղցր է գործել վասն Յիսուսի ,  
 Որ ետքն հոգիդ իւր հետն հանգչի :

Իւր հետն հանգչի ,  
 Հետն հանգիստ կայ .  
 Միշտ գործ պէտք չէ ,  
 Միշտ լաց չկայ .  
 Գործոց կատարն կը մօտենայ ,  
 Հառաչանաց վախճանն կու գայ .  
 Ծանր լուծերդ պիտի ձգես ,  
 Յիսուսի հետ հանգիստ մը կայ :



Ձենոսի Գլխարհի

Ով Գրիստոսի օրհնեալ զինուորն,  
Աղէկ քեզ պատրաստէ .  
Յիսուս Գրիստոս մեծ առաջնորդն

Աչքիդ առջին բլունէ :  
Խաչին դրոշն բլունած ,  
Աշխարհն ետիդ ձրգած ,  
Փողին ձայնին մլտիկ ըրէ ,  
Եւ միշտ յառաջ վազէ :

Քու Տէրդ ճամբադ կը պատրաստէ ,  
Որ անվտանգ վազես .

Ինկած ատենդ կը վերցընէ ,  
Որ զինք փառաւորես :  
Քեզ միշտ կը կերակրէ ,  
Վէրքերդ կը բրժչկէ .

Քեզի ալ, երբ փառքովը դայ ,  
Փառաց պըսակ կու տայ :

Քու Թագաւորդ ապստամբներն  
Այն օրն պիտի պատժէ .

Եւ անհնազանդ հետեւողներն  
Փառքէն պիտի զրկէ :

Ուստի հնազանդ եղիր ,  
Շնորհացը մէջ կեցիր .  
Վարձաարութեան օրն երբոր դայ ,  
Վարձքդ մեծ պիտի ըլլայ :

Քեզի Բնէլաւ, ով Խորանի Բնացող, Եւ՛ր

Քեզ ի՞նչ եղաւ . մի քընանար ,  
Մի՛, Յովնանու պէս մի խորգար .  
Եւ, արթընցիր, ով իմ հոգիս ,  
Վըտանգի մէջ կը տեսնեմ զիս :

Ահէ՛ղ վրտանգ . մահը կու դայ ,  
Արագութեամբ կը մօտենայ ,  
Որ խեղճ մարմինըդ հոս ձրգէ ,  
Քեզ ատեանին առջին հանէ :

Ահէ՛ղ ատեան սուրբ ու արգար .  
Ողորմութիւն չիք, չես գտնար .  
Ամենագէտ, ատող չարաց ,  
Բազմի դատել, Ո՛ր է՛ն Աստուած :

Ահէ՛ղ Աստուած, “մաշող կըրակ,”  
Քննող սրտից, որոց միակ  
Ինքն է տեղեակ, վրկայ չուղեր ,  
Վըճիւ կու տայ, ալ ետ չառներ :

Ահէ՛ղ վըճիւ անդառնալի .  
Ծոյլ քընացողն թող կորսըի ,  
Անյուսութեամբ դըժոխք ձրգուի ,  
Մինչ յաւիտեան հոն տանջուի :

Ահէ՛ղ տանջանք, երկցս անեղ ,  
Քանգի անվերջ, անճար , անդեղ ,  
Անմահ սրգանց կեր ըլլալ միշտ ,  
Հրոյ ճարակ , և կրել վիշտ :



Ուրեմն ելիր, մի յապաղիր,  
 Փութով այն նեղ դռնէն մտիր .  
 Բնաւ մի շեղիր, յառաջ վազէ,  
 Եւ անդադար շընորհք խնդրէ :

Գ. Մ. Շ.

Աւելան կենալու հարկաւորութիւնը

Հոգիս, ըզգոյշ կեցիր,  
 Թշնամիներդ շատ են .

Մեղաց զօրքն ալ, դըժոխք, երկիր  
 Քեզ կործանել կ'ուզեն :

Աղօթքը մի ձրգեր,

Արթուն կեցիր միշտ դուն .

Պատերազմէն ետ մի քաշուիր,  
 Խնդրէ Տեառն օգնութիւն :

Յողթող քեզ չըկարծես,

Ձէնքերդ մի ձրգեր .

Ձի գործդ պիտի չըհատցունես,  
 Մինչև հասնիս դուն վեր :



**ԺԱ. ԽԱԶԸ ԿԸ ԹԵԹԵԻՑՈՒԻ**

Յաւերանական Աստուածը Բեդի ապաւեն է, ու անոր յա-  
 իրենական Բաղն-կները Բեդի պաշտպան են :

ՄՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷ

Քանզի ոչ լիէ անանկ Բահանայապետ մը ունիւն, որ կարող  
 չըլլայ թեր Բարբառ-Բիւններուն կարեկից ըլլալ. հապա-  
 քն Բա Բա Բեդիով Բարնը առած է Բեդի Բանն :

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Աշակերտան հիմա կ'երեւար թէ զուարթու-  
 թեամբ կը կրէր իրեն յատկացեալ բեռը,





Քրիստոսի իւրաքանչիւր քայլին հետեւելու դի-  
տաւորութեամբ : Անոր ամէն շարժումը կամ-  
քին հաստատութիւնը կը ցուցունէր , և ճամ-  
բուն նեղութիւններէն և տառապանքէն ընդ-  
հանրապէս դո՛հ կ'երևէր :

Վերջապէս մեծ փոփոխութիւն եղաւ : Սա-  
կայն որոշմանց թուլնալ չէր այս . իրեն  
յատկացեալ պարտականութեան և նեղու-  
թեանց համբերելու դժկամակութիւն չէր , այլ  
բնական զօրութեան տկարանալ էր : Ծուն-  
կերը կը դողային , երեսը դեղնեցաւ , և վեր-  
ջապէս մարելով դետին ինկաւ : Նախըն-  
թաց տեսարաններէն շատ տարբեր էր այս :  
Առաջ ո՛չ մարմինը և ո՛չ հոգին խաչին հա-  
ճութեամբ կը մօտենային . թէև հոգին մասամբ  
իւկը կը զիջանէր , բայց փախստեան ճամբա-  
ներ կը փնտռէր : Վերջապէս Տէրոջը կամաց  
կատարեալ հնազանդութեան բերուելով՝ իւր  
պարանոցը ծռեց , և աներկմիտ Անոր հետևե-  
ցաւ : Այլ ևս խաչէն չփախչիր , այլանոր տակ  
կ'իյնայ : Այնպիսի տեսարան էր այս որ մարդ-  
առանց արտասուաց չէր կարող դիտել :

Բայց շուտ մը նաև ուրիշ աչքեր անոր  
դարձան : Այն օրհնեալ էակը որուն կը հե-  
տևէր՝ անոր հաւաչանքը և աղօթքը լսեց . քան-  
զի այսպէս կ'աղաղակէր .



«Ապրեցուր զիս, ո՛վ Աստուած,  
 վասն զի ջուրերը իմ անձիս հասան,  
 Խորունկ ցեխի մէջ կ'ընկզմիս,  
 Ուր որ կայնելու տեղ չկայ.  
 Զուրերուն խորունկ տեղերը մտայ,  
 Ու յորձանքները զիս ընկզմեցին:  
 Հողիս կեանքէս ձանձրացաւ.  
 Այսօր ալ իմ գանդատս դառն է,  
 Հարուածս հառաչանքէս ծանր է:  
 Եւ հիմա հողիս իմ ներսի գիս կը հալի.  
 Տրտմութեան օրերը զիս պաշարեցին:  
 Մինչև անգամ ազազակած ու կանչած աւ  
 տենս, անիկա իմ աղօթքս մերժեց:  
 Կորսուեցաւ իմ զօրութիւնս ու իմ ակնկա-  
 լութիւնս Տէրօյմէ:»

Նա որ մեր տկարութեանց կարեկցու-  
 թիւն ունի՝ յոգնած հոգւոյն ազազակը ըսեց  
 և օգնութեան հասաւ: Որպիսի՞ յօժարու-  
 թեամբ, որպիսի՞ գլխութեամբ, ի՞նչ փափու-  
 կութեամբ և զօրութեամբ այս բարերարը իւր  
 բազուկները բացաւ իրեն հետևող նուազեալը  
 վերցունելու, միանգամայն սա քաջալերական  
 խօսքն ըսելով. «Մի վախնար, ես քեզի  
 հետ եմ. իմ շնորհքս հերիք է քեզի. իմ  
 զօրութիւնս քու տկարութեանդ մէջ կը կա-  
 տարուի: Մինչև ՚ի մահ հաւատարիմ եղիր,

և քեզի կենաց պսակը պիտի տամ:»

Երբ Տէրօյը բոլոր փրկեալներուն պատմու-  
 թիւնը դուռի, ի՞նչ հիանալի ցանկ մը պիտի  
 ըլլայ Տէրօյը և անոր թագաւորութեան հա-  
 մար կրեալ վիշտերու և անձնուրացութեան:  
 Ասոնցմէ ոմանք արդէն յիշուած են Սուրբ  
 գրոց մէջ իբր օրինակ բողոքին: Մին իւր ան-  
 ձին համար կ'ըսէ. «Շատ ճամբորդութեանց  
 մէջ չարչարուեցայ. դետերէն վտանգներ,  
 աւազակներէն վտանգներ, իմ աղօթէս վտանգ-  
 ներ, հեթանոսներէն վտանգներ, քաղաքի  
 մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ,  
 ծովի վրայ վտանգներ, սուտ եղբայրներու  
 մէջ վտանգներ քաշեցի: Զանքի ու աշխա-  
 տանքի մէջ, շատ անգամ քնհատութեան մէջ,  
 անօթութեան ու ծարաւութեան մէջ, շատ  
 անգամ ծով կենալու մէջ, ցուրտի ու մեր-  
 կութեան մէջ էի:» Եւ դարձեալ իրմէ առաջ  
 անցնողներուն համար կ'ըսէ. «Նախատինք-  
 ներու ու ծեծերու, նաև կապերու ու բան-  
 տերու փորձը առին: Քարկոծուեցան, սղոց-  
 ուեցան, փորձանքի մէջ ինկան, սրով սպան-  
 նուելով մեռան, ոչխարի մորթերով ու այծի  
 մորթերով պատեցան, կարօտութիւն քաշե-  
 լով, նեղը կոնալով, չարչարուելով:» «Թէև այս  
 մարդոց արժանի չէր աշխարհս:»



Բայց այս բոլոր փորձութեանց մէջ ներօկայութիւն մը կայ, որ զգարչելի մահն իւր զարհուրելի ձևերուն ներքև անգամ կը մեղմացունէ : Կրնանք յիշել Տէրոջը մարդարէին կռապաշտ պալատէ մը անապատ փախչիլը : Բայց հոն մինակ չմնար : Անոր գլխած Տէրը հոն ևս կը գտնէ զնա, և անոր վիճակը կը հարցունէ . «Ո՛վ Եղիա, հոս ի՞նչ բան ունիս :» Անմխիթար մարդարէն կը պատասխանէ թէ Աստուծոյ թշնամիներուն երեսէն կը փախչի, քանզի ինք մինակ մնացած է անոնց անհամեմատ զօրութեան դէմ, և կ'աղաղակէ . «Ո՛վ Տէր, ա՛ն իմ հոգիս, քանզի ես իմ հայրերէս աղէկ չեմ :» Եւ յետոյ հեկեկացող մանկան պէս կը քնանայ : Բայց անոր Փրկիչը կը յիշէ զնա և հեզ հրեշտակ մը կը զրկէ, որ անոր առջև սեղան սփռէ և Տէրոջը համար անոր սպասաւորութիւն ընէ : Եւ այնպէս մեծ էր այն ճաշը, որ անոր սննդով քառասուն օր ապրեցաւ, մինչև հասաւ այն տեղ ուր տեսաւ Աստուծոյ մեծափառութիւնը և երկնային հացէն կերաւ :

Կրնանք յիշել նաև Դանիէլի ընկերները որ կրակի հնոցին մէջ նետուեցան . քանզի իրենց Աստուծոյն հաւատարիմ մնալ ընտրեցին : Բայց ահա՛ մէկը տեսնուեցաւ որ անոնց

հետ կրակին մէջ կը քալէր, և տկարացուց կրակին աղբեցութիւնն այնպէս, որ մազ մը չայրեցաւ անոնց գլխէն :

Կրնանք յիշել Դանիէլի առիւծուց գուբը նետուիլը : Շատ ահարկու խաչ էր այս, բայց Ամենակալին բազուկը բռնած էր մարդարէն :

Կրնանք յիշել փառաց և շնորհաց Տէրը պատող մետասան մարդիկ, որ վիշտերով ծանրացած էին այն տեսարանին պատճառաւ որ ի մտտոյ պիտի բացուէր անոնց առջև : Սակայն ի՞նչ արգահատական և մխիթարիչ խօսքեր խօսեցաւ այն տխուր ժամուն մէջ Տէրը . այնպիսի խօսքեր զոր երբէք մարդոյ ականջ լսած չէր . անոր առաջին խօսքն էր «Սրտերնիդ չխուփի», և ստէպ կը կրկնէ . «Թէ որ ես երթամ մխիթարիչը ձեզի կը զրկեմ :» Եւ երբ այս շնորհալից խօսքերը վերջացան, զնաց անոնց հետ պարտէզը աղօթել, նեղուիլ, մատնուիլ և իւր անձը պատրաստել անոնց փրկութեան համար զո՞հ ըլլալու : Հոն, երբ իւր թախճազին աղօթքէն դարձաւ, գտաւ զանոնք տրրամութենէ քնացած, երկնցուց իւր յաւիտենական բազուկները և զանոնք վերցունելով ըստաւ . «Հոգին յօժար է, բայց մարմինը տկար :»

Ուրեմն կ'երևայ թէ խաչը չվերցուներ,



այլ խաչին տակ նուազեալ աշակերտը կը զօրացունէ :

Խաչին ուսումնարանն է լուսոյ ուսումնարան որ աշխարհիս ունայնութիւնը և չարութիւնը կը յայտնէ և Աստուծոյ միտքն աւելի կը բացատրէ մեզի : Տխուր վիշտերէն հոգևոր լոյս կը ծագի : Աստուած ինչպէս որ լոյս կ'ստեղծէ , այնպէս շատ անգամ իւր խաւարին և ծածուկ անօրէնութիւններէն լոյս և հաճոյք յառաջ կը բերէ :

Աստուած շատ անգամ մեր դժուարին պարագաներուն մէջ իւր Սուրբ Հոգւոյն մխիթարութեամբ մեզի այցելութիւն չընէր մեզ իւր Սուրբ Խօսքին փառաց առաջնորդելով, որպէս զի ճաշակենք սէրը զոր ունի մեր վրայ աշխարհիս սկիզբէն մինչև հիմա : Սամսոն մինչև անգամ իւր վրայ յարձակող առիւծին դիոյն մէջ մեզը գտաւ :

#### ՊԼՆԵԱՆ

Այսպէս մեր սիրելի Փրկիչը միշտ մօտ է անոնց , որ իրենց բեռան ծանրութենէն , և մարմնոյն տկարութենէն նուազելու մերձ են : Փրկիչը խոստացած չէ իւր զօրութիւնն յայտնել մեր հաւատոյ տկարութեան մէջ , այլ մեր մարմնոյն և բնութեան տկարութեան մէջ : Քան զմեր կարողութիւնը վեր փորձութեանց

մէջ աղիտի չթողու զմեզ , այլ փորձութենէ ազատելու հնարքը ևս պիտի գտնէ :

Ամէն դարու մէջ եկեղեցին վկայ է սիրոյն և հաւատարմութեան զոր Փրկիչն ունի իւր խաչ տանող աշակերտին վրայ : Ետ երթանք մինչև առաքելոց ժամանակը : Պիտի տեսնենք որ Փիլիպէի բանտին մէջ Քրիստոս աւանց այցելութիւն կ'ընէր , անոնց հոգիները սուրբ ուրախութեամբ և շրթունքը փառաբանութեամբ լեցունելով : Արգարև Պօղոսի դարձի գալէն ետքը անոր բոլոր կեանքն ապացոյց է մարմնաւոր տկարութեան և հոգևոր ուրախութեան :

Նաև հին անտեսութեան տակ կը տեսնենք որ մարգարէք և նահապետք այս եղանակաւ իրենց փորձութիւնները կրելու զօրութիւն կը գտնէին : Ո՛րչափ սքանչելի է ութնասաներորդ սաղմոսին մէջ նկարագրուած փորձութիւնները որոց հանգիպեցաւ Դաւիթ :

«Մահուան լարերը իմ բոլորտիքս առին ,  
 Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին .  
 Գերեզմանին լարերը զիս պաշարեցին ,  
 Ու մահուան որոգայթներն իմ առջևս առին :  
 Իմ նեղութեանս մէջ Տէրօջը կանչեցի ,  
 Ու իմ Աստուծոյս աղագակեցի .  
 Անիկա իւր տաճարէն իմ ձայնս լսեց ,  
 Ու իմ աղագակս անոր առջև , անոր ականջը հասաւ :



Անատեն երկիր սասանեցաւ ու դողաց,  
 Ու լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան .

Քանզի անիկա բարկացաւ .

Անոր քիթէն ծուխ ելաւ,

Ու բերնէն մաշող կրակ .

Անկէ կայծակներ բռնկեցան :

Եւ անիկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ ,

Եւ անոր ոտքերուն տակ մառախուղ կար :

Ու քերովբէի մը վրայ ելաւ , ու թռաւ ,

Եւ հովին թեւերուն վրայ սլացաւ :

. . . . .

Բարձրէն զրկեց ու զիս բռնեց ,

Եւ շատ ջուրերէն զիս հանեց :

Եւ զիս լայնարձակ տեղ մը հանեց ,

Ու զիս ազատեց , ինչու որ ինձի հաւնեցաւ :

«Մհա ես ձեզի հետ եմ, մինչև աշխարհ  
 հիս վերջը . ես ձեզ անմխիթար չեմ թողուր :»

Այս է զմեզ սիրողին խօսքը , այն որ մեր  
 կրելու խաչերը մեզի համար կ'ընտրէ , որ կը  
 չափէ և կը կշռէ զայնս և կը համեմատէ մեր  
 զօրութեան : Թո՛ղ ուրեմն մարմինը նուազի  
 անոր ծանրութեան տակ . թող ճամբան խոր-  
 տուբորտ ըլլայ , և բնութիւնը սահի և իյնայ :  
 Այն որ մեզի համար խաչ տարաւ , զմեզ պի-  
 տի վեր առնու , երբ խաչի տակ ըլլանք :

Քիւն Կեցի

«Մեր քովը կեցիր , ինչու որ երկունը մտ է , և օրը իջած է» : Դ--1 . ԻԳ . 29 :

Ով փրկիչըս , օրն իջած է ,  
 Կ'աղաչեմ քեզ , քովս կեցիր .  
 Թանձրը մութն արդէն կոխած է ,  
 Այս գիշեր իմ հիւրս եղիր :  
 Երբ պակսին օգնականներըս ,  
 Դու միայն ես օգնական ,  
 Երբ շատուոր են վրտանգներըս ,  
 Ո՛հ , եղիր ինձի պաշտպան :

Այս երկրիս պայծառութիւնը  
 Շատ չանցած կը մըթննայ .  
 Փառքն ու մեծ վայելչութիւնը  
 Շուտ աներևոյթ կ'ըլլայ .  
 Բայց դուն ես յուսոյս արևը ,  
 Յաւիտեան դուն չես փոխուիր .  
 Ճառագայթներուդ պարզէր  
 Շընորհէ ինձ , քովս կեցիր :

Ես շատ հեղ, Տէր , քեզ մոռցած եմ,  
 Սակայն դուն զիս մի մոռնար .  
 Շատ անգամ քեզ թողուցած եմ,  
 Բայց ինձմէ մի հեռանար :  
 Ով Յիսուս , հողուոյս փրկիչը ,  
 Հետս կենալ խոստմունք արելիր .  
 Երբոր զօրաւոր փորձիչը  
 Յարձակի վրաս , քովս կեցիր :



Եւ վերջին թշնամիին վրայ

Տուր որ յաղթանակ երգեմ .

Իմ վրաս յարձակած ատենը ,

“Ո՞ւր է քու խայթոցը” , ըսեմ :

Մահուանէն որ ազատուիմ ես ,

Դառն մահուան քեզ յանձնեցիր .

Թող մահուան մէջ չընկղմիմ ես ,

Մինչև վերջը քովս կեցիր :

“Ա՛հ՛՛ Տէր՛ է”

Խոր խաւարի մէջ ես կը խարխափեմ ,  
Մէկ քայլս կ'առնեմ մէկալը չիյտեմ .  
Առջիս փորձութիւն , ինչ խաչեր որ կան ,  
Հայրըս կարգադրեց , ինք գիտէ միայն :  
Գիշերն մինչև լոյս բարձրս կը թրջեմ ,  
Լալով արցունքով ճամբաս կը փնտռեմ .  
Ներկաս՝ անհաստատ , ապառնիս մութ է ,  
Հայրըս կարգադրեց , ինք միայն գիտէ :  
Մարմինըս յոգնած , միտքըս չըփոթած ,  
Հաւատքըս թերի , սէրըս է պաղած .  
Խաչըս խիտ ծանր է , շունչըս կը կտրէ ,  
Ո՛հ , նեղն ինկած եմ ամէն կողմանէ :  
Թէ է հաճելի իմ Հօրըս վերին  
Հալոցով փորձել զիս կրկին կրկին ,  
Ահա , ես . միայն մէկ խնդիրք ունիմ ,  
Միշտ ձեռքէս բռնէ , Յիսուս Փրկիչ իմ :

“Ձե՛ս եւ սիրե՞ս”

Հոգիս , լուռ կեցիր , Տէրը կը խօսի .  
Փրկիչդ ձայնն է այս , պէտք է միտ դնես  
Յիսուս կը խօսի , իւր խօսքն է քեզի .  
Ըսէ՛ , մեղաւոր , Ձիս շատ կը սիրե՞ս :

Երբ կապուած էիր , կապերդ քակեցի .  
Արինդ կը վաղէր , վերքդ բժշկեցի .  
Ճամբէն դուրս ելած գըտայ , շակեցի ,  
Խաւարդ փոխեցի ցորեկուան լոյսի :

Մօր մը փափկասուն գութը կը դադրի՞  
Իւր կըրած զաւկէն , թէև շատ յոգնի .  
Այո՛ , ան կրնայ մոռնալ զանկիկ ,  
Բայց իմ մոռնալուս , ո՛չ , հնար չկայ :

Իմ սէրս անփոփոխ աննման սէր է .  
Երկնից բարձրերէն աւելի բարձր է .  
Խորունկ դժսխոց յատակէն խոր խոր ,  
Ազատ և հաստատ , մահէն զօրաւոր :

Շատ ատեն չ'անցած փառքըս կը տեսնաս ,  
Երբոր շնորհքն իւր գործը կատարէ .  
Գահիս բաժանորդ յայնժամ դուն կ'ըլլաս ,  
Ձիս շատ կը սիրե՞ս , մեղաւոր , ըսէ :

Տէր , իմ գլխաւոր գանդատս ալ ատ է ,  
Թէ սէրըս տրկար ու խիստ թերի է .  
Բայց քեզ կը սիրեմ , գիտես , կը պատուեմ ,  
Տուր այսուհետև առաւել սիրեմ :



“Տէր օրն”

Օրէնք անգութ դոռ Սինայի  
Արդար ու խիստ  
Ինձ կ'սպառնան մահ ու կորուստ,  
Շուտ եկ, Յիսուս:

Մեղքիս բեռան կապերն իմ յուս  
Վերքեր բացին .  
Չըկայ բժիշկ դեղ ու դարման,  
Շուտ եկ, Յիսուս:

Բնութիւն չար, սիրտ չարագոյն,  
Երկուքը մէկ,  
Հեռացուցին զիս արարչէս,  
Շուտ եկ, Յիսուս:

Աշխարհ, սատան զիս դատաստան,  
Ապա դժոխք  
Առեր կ'երթան, չունիմ այլ յոյս,  
Շուտ եկ, Յիսուս:

Քոյդ չընորհօք ներէ մեղքերս,  
Սրբէ սիրտըս .  
Արժանացուր յաղթող դունդիդ,  
Մէր իմ Յիսուս:

Աստուծո՛ւ ասէն որեւէ է

Շընորհաց ակթուն վնասող  
Չայն ամէն տեղ կը դըտնայ .  
Մենք երբոր ենք աղօթող,  
Տէրն է միշտ մեզի ներկայ:

Թէ հարուստ ենք թէ աղքատ,  
Թէ առողջ կամ թէ տրկար,  
Երբ մեր ձայնն է անընդհատ,  
Տէրն, է միշտ մեզի ներկայ:

Երբ ճարերըս կը հասնին,  
Ու ինձի հանգիստ չըկայ,  
Եւ ուժերս կը լքանին,  
Տէրն է միշտ ինձի ներկայ:

Ո՛վ հողիս, փրկչիդ եկուր,  
Ինչ տաղնապ որ վրադ կու դայ .  
Ան պարապ քեզ չը թողուր,  
Տէրն է միշտ ինձի ներկայ:

Հասարակութեան անհասարակ բաներ

Ո՛վ մարդ, հոգե՞ր, վիշտե՞ր ունիս,  
Միշտ չեն մընար, չըվրդովիս .  
Յաւ, նեղութիւն ու տառապանք,  
Աղքատութիւն, և դառն տանջանք  
Շուտով կ'անցնին, կ'անհետանան,  
Քիչ ատենէն չիք կը դառնան:

Ո՛վ մարդ, ունի՞ս հարըստութիւն,  
Մ'ուրախանար, չեն մընայուն .  
Ինչք, ըստացուածք, կալուածք ու տուն,  
Ոսկի, արծաթ, գանձեր թաղուն,  
Շուտով կ'անցնին, կ'անհետանան,  
Քիչ ատենէն չիք կը դառնան:

Կ. Փ. Բ.



Ո՛վ մարդ, ունի՞ս մեղք, չարութիւն,  
 վախցիր, ողբա, կոծ ըրէ դուն.  
 Ատոնք ձրգէ, ապաշխարէ,  
 Տէր Յիսուսի շուտով դիմէ:  
 Քանզի դրժոխքն է հաստատուն,  
 Անոր տանջանքն ալ մընայուն:

Ո՛վ մարդ, դուն նոր սիրտ ըստայա՞ր,  
 Եղա՞ր Սրբոյ Հոգւոյն տաճար,  
 Սիրէ՞ զԱստուած քո և զընկեր,  
 Ուրախութեան երգէ երգեր.  
 Քանզի երկնից երանութիւնն  
 Է հաստատուն և մընայուն:

Գ. Մ. Ծ.

ԺԲ. ԽԱԶ ԵՒ ՊՍԱԿ

“Մինչև ՚ի մահ հասարարի՞՛մ եղբ, և թեղի կենաց պատլը  
 պէտէ որո՞մ:”

ՓԱՌԱՅ ՏԵՐԸ

“Աստե՛ որ ճերմակ հանդերձներ հագած են՝ ո՞վ են, և  
 ուսի՞ց եկան:”

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼ

“Աստե՛ են ձե՛ք նեղութեան եկողները, որ իրենց հան-  
 դերձները լւացին, ու զանոնք զառնուկին արեւոտը  
 ճերմկացին:”

ԵՐԷՑՆԵՐԷՆ ՄԻՆ

Արդ, յայտնուեցաւ որ այս խաչ տանող  
 ճամբորդն, իւր նեղութիւններով և փորձու-  
 թիւններով լի, հասած էր հրաշալի ճամբոր-





դուժեան վախճանին : Այս յայտնի էր անոր  
 երևութէն և շուրջը գտնուած ամէն առար-  
 կաներէն : Անոր աշուրներն այլևս ասդին  
 անդին չէին դառնար, այլ Տէրոջը վրայ հաս-  
 տատուած էին . Տէրը և անոր ճամբան կը  
 դիտէին : Այսպէս ճամբորդին անհանդարտ  
 բնութեան յաջորդած էր նուաճեալ ընթացք  
 մը : Անոր երեսին վրայ հաստատուն յոյս կը  
 փայլէր, և հոգւոյն հնազանդութիւնը յան-  
 դիմանութեամբ չափաւորեալ կ'երևար : Քայ-  
 լերը զուարթութեամբ կ'առնուր . բոլոր բեռը  
 թեթեւցած կ'երևար, թէպէտ չէր տեսնուեր  
 թէ նուազած էր բնաւ : Օր ըստ օրէ, որչափ  
 յառաջ կ'երթար, այնչափ երկնային սրբու-  
 թեան լոյսը կը փայլէր անոր ճակատին վրայ,  
 ինչպէս որ ըսուած է . «Արդարներուն ճամ-  
 բան ծագող լոյսի պէս է, որ երթալով կը  
 լուսաւորի մինչև որ կատարեալ օր ըլլայ :»

Վերջապէս ճամբուն այն մասին հասաւ որ  
 շատ խորտուբորտ էր, և անկէ ճամբորդել՝  
 դժուարին և աղետալի : Երբեմն այնպիսի  
 զառ ՚ի վայր մը կը հասնէր, որ հազիւ ոտ-  
 ուրները կը բռնէր դահափիժելէ . և երբեմն  
 յանկարծ այնպիսի կիրճ մը կը մտնէր, որոյ  
 մթութիւնը կը նմանէր մահուան շուքի ձո-  
 րին : Սակայն միշտ նոյն մեղմ լոյսը կը ծա-



դէր անոր ոտուըններուն բոլորտիքը : Հիւնայի տեսարանն էր այս :

Այլանդակ և ահարկու էր տեղը , բայց անոր վախ չտուաւ . խաւար էր , բայց անոր համար երկնային ճառագայթներով լուսաւորեալ : Տխուր և ամայի էր , և կ'երևար թէ ոչ ոք կրնար ապրել հոն . բուն մահուան սահմանն էր : Բայց և այնպէս քաղցրանուագ ձայներ քնարներու հետ խառնեալ կը լսուէին անդ : Այնպէս կը թուէր թէ դիմացէն կը մտանային անոր հրեշտակներ , որ զԱստուած կ'օրհնէին և ճամբորդը կ'ողջունէին : Այնպէս որ յայտնի էր թէ այս տխուր երկիրն աշխարհիս անապատին և երկնային քանանու մէջտեղ կ'իյնար : Ճամբուն այս խորտուբորտ մասը շատ օրեր տեւց , մինչև որ հասաւ ճամբորդը յանկարծ բարձր և ահարկու դռան մը առջև , որոյ աղջամղին փեղկերն երկու կողման բարձր պատերուն հասնելով ճամբան կը գոցէին , ուստի և ճամբորդը ստիպուած էր դուռնէն անցնիլ :

Վայրկեան մը երկրայեցաւ , վախնալով ցանկէն անցնիլ և անծանօթ երկրին վրայ ոտք կոխել : Բայց մինչ կը տարակուսէր , Տէրը որ քիչ մը անյայտ եղած էր անկէ , դարձեալ ցուցուց զինք . բացաւ պղնձէ դուռները և

աչակերտին վրայ քաղցրութեամբ Ժպտեցաւ , այնպէս որ մէկ բոպէի մէջ վախ և տարակոյս փարատեցան :

Բայց ո՛վ կրնայ նկարագրել տեսարանին մնացեալ մասը : Ճամբորդը մտքի յափշտակութեամբ իւր Տէրոջն այլակերպեալ դէմքը կը դիտէր : Քանզի նա այլ ևս երկրային դժուծ հանդերձով խաչ տանողին չէր նմանէր , այլ իւր երկնային զգեստներն հագած էր և ականակապ փայլուն թագը դրած էր գլուխը : “Եւ իւր գլուխը ու մազերը բուրդի պէս ճերմակ , ու ձիւնի պէս էր , և իւր աչքերը կրակի բոցի պէս . և իւր ոտքերը ոսկեպղնձի նման , որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած , և իւր ձայնը շատ ջուրերու ձայնին պէս :”

Անոր գթած հրաւերով ճամբորդը ցատկեց ահարկու դուռնէն ներս , և յական թօթափել տեսայ որ Տէրը բուն իւր աջ ձեռք խաչն անոր ուսերէն վար առնելով հեռուն նեւեց , և գլուխը գեղեցիկ պսակ դրաւ :

Շուտով փայլուն ճամբով յառաջ գացին դիմաւորել երկնային զօրքը որ բացակայ քաղաքին դուռներէն կու գային դէպի նա քաղցրաձայն նուագներով : Բա՛րէ , որպիսի՛ հան-



դիպումն էր այս . Ինչպէս իրար կ'ողջու-  
նէին : Հարկաւ անոնցմէ ոմանք առաջուց կը  
ճանչնային ճամբորդք : Երկար ատենէ հետէ  
կորսուած զաւակն անպատմելի ցնծութեամբ  
տուն կ'ընդունուի : Բայց աշխարհ չկրնար  
ըմբռնել այն ուրախութիւնը զոր ունեցաւ  
երկրաւոր ճամբորդք իւր երկնաւոր տունը  
հասնելով : Ծռելով նայեցայ այս ուրախա-  
լի տեսարանին , երբ ամէնքն իրենց ճամբան  
դէպ ի քաղաքը դարձուցին : Բայց , աւա՛ղ ,  
յանկարծ ամպ մը զանոնք իմ տեսութենէս  
ծածկեց :

Եւ այս է խաչ տանելուն վախճանը : Հիմա  
որ բոլոր տեսարանն ի սկզբանէ մինչև ի վախ-  
ճան մեր աչաց առջև ունինք , չենք կրնար  
չզարմանալ թէ աշակերանն ի սկզբան իւր Տէրո-  
ջը հնազանդելու այնչափ դժկամակութիւն կը  
ցուցունէր : Ո՛րչափ աւելի լաւ պիտի ըլլար եթէ  
զգուշանար այն դժկամակութիւններէն և վա-  
խտեան ճամբաներէն : Սակայն վերջապէս  
այն կէտը գալու էր . քանզի պսակի չենք  
կարող հասնել առանց խաչի : Հրամանը , «Ե-  
տնէս եկուր ,» ինչպէս Պօղոս կ'ըսէ , «պատ-  
ուիրանք է խոստմամբ :» վախճանը սկզբան  
մէջ բովանդակեալ է . այսինքն խաչը կրե-  
լով ինծի հետեւէ , որ պսակն առնելու մա-

սին ևս ինձ նման ըլլաս :

Պընեան ասոր շատ նման տեսիլ մը տե-  
սաւ : Արդարև անոր ճամբորդք իւր բեռը Քրիս-  
տոսի խաչին առջև նետեց , բայց բեռէն ա-  
զատելէն ետքը խաչը կրեց : Անոր բեռը չներ-  
ուած մեղաց և մեղաց զօրութեան հպա-  
տակութեան զգացումն էր . և անկէ ազա-  
տեցաւ , երբ Տէրոջը չարչարանաց դործիքը  
տեսաւ : Սակայն շատ չանցնիր Գթուարու-  
թեան լեռը կը հասնի . արթուն հսկողութիւն  
ունենալ կը դժկամակի . կը յանդիմանուի խաչ  
տանելու թուլութիւն ցուցունելուն համար :  
Քիչ մը ետքը առիւծներուն կը պատահի :  
Յետոյ Խոնարհութեան ձորը կը հասնի և Ա-  
պողոնի կը հանդիպի : Եւ այսպէս պատա-  
հեցաւ մինչև վերջը : Քրիստիանոս մեր ճամ-  
բորդին պէս խաչ տանող էր , բայց Պընեա-  
նի տեսիլքը մէջ չբերեր այս բոլոր տեսա-  
րանը : Այս կ'ըսենք որ չկարծուի թէ եր-  
կու նկարագրութիւնք անհամաձայն են իրա-  
րու : Տէրը չխոստանար իրեն հետևողներն  
ամէն լուծէ ազատել : Անոր հրաւերն այս  
է . «Իմ լուծս ձեր վրայ առէք .» և կը յա-  
րէ , «Ինչու որ իմ լուծս քաղցր է , և իմ  
բեռս թեթեւ :»

Բեռը զոր մեր վրայէն կը վերցունէ՝ մեր ա-



նօրէնութիւնն է , խղճի խայթը , վախը և դերութիւնը . բեռը զոր մեր վրայ կը զնէ՝ փորձութեան մէջ համբերութիւն է և անձնուրացութիւն : Բայց սրչափ փառաւոր է վախճանը : Խորհէ այն հաղարաւոր և բիւրաւոր ճամբորդները զորոց թիւը չգիտեր մահկանացու մարդ , և որ իրենց խաչերը պսակի հետ փոխած են . խորհէ նաև այն հաղարաւորները որ հիմա խաչ կը տանին պսակի սպասելով :

Շատ աշակերտաց համար ի՞նչ փոփոխութիւն է այս : Թշուառ ծերունի մը որ շատ տարիներ մեռնելու վտանգի մէջ էր իւր ցնցողական ախտին պատճառաւ՝ կ'ընդունի վերջին հարուածը . պաղ քրտինք կը հոսէն անոր ճակատէն , և հնացեալ կաւը կը նետէ իւր վրայէն :

Մահացու հիւանդը կ'աղաղակէ . Ես կը մեռնիմ . ահա՛ թագաւորը կու գայ , կը տեսնեմ զնա հրեշտակաց խումբերէ պատեալ : Տկար ցուպեր , մնաք բարեաւ . դուք ինձի օգնեցիք իմ ճամբորդութեանս մէջ , բայց այլ ևս կարօտութիւն չունիմ ձեզ : Կը նետէ զանոնք , կը նետէ վրայէն գծուծ հանդերձները որ հաղիւ անոր մերկ մարմինը կը ծածկէին , կ'անցնի գետը , և կ'ընդունի փառաց պսակը :

Ամէն ազգէ , ժողովուրդէ և լեզուէ մարդիկ կ'անցնին այս գետէն :

Մարդ մը շատ տարիներէ հետէ կ'աշխատէր բիրտ և աւելորդապաշտ ժողովրդեան մը մէջ , առանց մարդկային մխիթարութեան և իւր մօտակայից ուշադրութեան , և առանց տեսնելու սերմերուն , զորս ամենայն հաւատարմութեամբ ազօթիւք և արտասուօք ցանած էր , գոնէ դոյզն պտուղը : Բնաւ իւր խաչին տակ մարած չէր , բնաւ անոր ծանրութեանէն դանդատած չէր : Վերջապէս սուրբ օր մը , երբ արևը մարը կը մտնէր , յանկարծ անոր նեղութեան և վշտաց վերջին օրը եղաւ , և թուեցաւ անոր տեսնել զինք գետին եզերքը : Անոր մարմնոյն վրայ արևը մարը կը մտնէր , բայց հողին կը դիմաւորէր Տէրը որ անոր համար խաչը տարած էր :

Երկրի վրայ աչք տեսած չէ և ոչ ականջ լսած է ինչ որ կ'ըլլայ երկնային քաղաքը : Ոմանք որ շատ բաներ տեսնելու արտօնութիւն ունեցան՝ չունեցան թոյլտուութիւն պատմելու ինչ որ տեսան . սաչափ միայն կրցան ըսել , թէ գլխաւոր խաչ տանողն հոն էր , իւր բոլորալին ունենալով այն անձինք որ իրենց խաչն առնելով անոր հետեւեցան :



## Ա. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե.

Յաւերս շատ են, իսկ ես շատ արկար,  
Առանց օգնութեանդ կրել չեմ կրնար.  
Դուն ինձի օգնէ, եղիւր մխիթար,  
Եկու, Տէր Յիսուս, առ իմ հոգիս տար :

Խոստմունքըդ յիշէ, Տէր իմ, կ'աղաչեմ,  
Թէ «Նորէն կու դամ ձեզ քովըս կ'առնեմ  
Երջանիկ տեղը, ո՛ւր ցաւ մահ չըկայ :»  
Եկու, Տէր Յիսուս, տար հոգիս հիմա :

Առ աս իմ հոգիս սրբոց օթեանն,  
Ուր երջանկութեամբ քեզի փառք կու տան.  
Ես արժանի չեմ, ձըրի շընորհքով  
Եկու, տար հոգիս երկինքը քու քով :

Աս իմ կաւեղէն տունըս կը քակուի,  
Գիտեմ որ հողին տակ պիտի դրուի.  
Հող էր և անդրէն հող պիտի դառնայ,  
Եկու, Տէր Յիսուս, ա՛ռ հոգիս հիմա :

Փառք քեզ որ անյոյս թողուցած չես զիս,  
Զի քաջ գիտեմ որ մարմինս ու հոգիս  
Պիտի միանան զօրութեամբ փառքով.  
Եկու, Տէր Յիսուս, առ հոգիս քու քով :

Գ. Մ. Ծ.

## Ա. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե.

Քաղցրիկ աղբու խորհուրդ մը կայ,  
Կրկին կրկին միաբըս կու գայ.  
Մօտ եմ երկնից ալ աւելի,  
Այս օր քան թէ երբէք էի :

Մօտ եմ իմ Հօրըս երկնաւոր  
Ինձ պատրաստած տան փառաւոր.  
Մօտ եմ ձերմակ մեծ աթոռին,  
Մօտ եմ յասպիս փայլուն ծովին :

Կենացս վախճանն ալ աւելի  
Մօտ է, որ բեռս ուսէս ձգուի.  
Մօտ եմ խաչըս վար դընելու,  
Մօտ եմ պսակս ժառանգելու :

Հայր իմ, եղիւր ինձ վէ՛մ ամուր,  
Տկար մարմինս դուն զօրացուր.  
Զիս քու զօրեղ թևովդ բռնէ,  
Յոյսս անհաստատ դուն հաստատէ :

Պատրաստ ըլլամ մահուան գետէն  
Մնցնիլ, երբոր կանչես մէկէն,  
Գուցէ մօտ եմ ալ աւելի,  
Քան թէ իմին մտքէս կ'անցնի :

\*\*\*



## Գեօրն Ենդրբը

Գեաին եզերքն ես կ'սպասեմ,  
Միրաըս շատոնց կը սպասէր .  
Արդ կը թուի թէ կը լեւեմ  
Անմահից քաղցրը երգեր .  
Ո՛հ կը տեսնեմ սրբոց լերանց  
Գազաթներէն լոյս փայլած .  
Ուր որ չարը ալ չը նեղեր  
Ուր յոգնածը կը հանդէր :

Մութ ամպերէն անդին , հեռի  
Այս արտասուաց խոր ձորէն .  
Երանութեան գետն կը բղխի ,  
Յաւիտենից դարերէն .  
Ո՛հ , կը բաղձամ ընդ Յիսուսի  
Մրբոց տունըն ըլլայի ,  
Ուր որ չարը ալ չը նեղեր  
Ուր յոգնածը կը հանդէր :

Ո՛հ , կը լողամ գեաին վրայ  
Պայծառ յստակ եզերքէն .  
Շուտ մը հոգիս պիտի երթայ ,  
Ուր ցաւն կ'անցնի յոգնածէն .  
Աւեր յորձանք արդ կը տանին  
Սուրբերն զիս կը բարեւեն ,  
Այն տեղ չարը ալ չը նեղեր  
Հոն յոգնածը կը հանդէր :

\* \* \*

## Երևայն Երոտայեմ

Երուսաղէմ , տուն փառաւոր ,  
Անունդ ինձ սիրելի .  
Ե՛րբ աշխատանքս պիտի վերնայ ,  
Ու ես հաճելիմ քեզի :

Ե՛րբ , ով Տէրջըս սուրբ քաղաք ,  
Պալատդ մտնեմ պիտի .  
Ուր չարձըկուիր սուրբ ժողովներն ,  
Հոն է միշտ կիրակի :

Հոն երջանիկ են միշտ ամէնքն ,  
Ոչ մեղք և ոչ վիշտ կայ .  
Օրհնեա՛լ քաղաք , այս չար երկրէն  
Հոգիս քեզի թող դայ :

Ինչո՞ւ մահուան ցաւէն խորչիմ ,  
Ինչո՞ւ վախնամ , դողամ .  
Ժառանգութիւնս առջևս ունիմ ,  
Պըսակն իմ անթառամ :

Երուսաղէմ , տուն փառաւոր ,  
Քեզ սիրաըս կը ցանկայ .  
Յայնժամ վիշտերս պիտի վերնան ,  
Երբ աչքըս քեզ տեսնայ :



## Գեորգի եղբայրք

Արդեօք այն գետին եղբայրքը

Մեր սուրբեր պիտի կոխեն,

Ուր սուրբերն ու հրեշտակները

Յնձութեամբ միշտ կը քալեն .

Այո, մենք ալ ժողվուրինք հոն

Քոյոր հրեշտակաց ու սրբոց հետ,

Այն յստակ գետին եղբայրքը

Որ վերն աթուռէն կ'ելլէ :

Այն յստակ գետին եղբայրքը

Երբ ուրախութեամբ կոխենք,

Մենք ալ հոն երկնից երգերը

Անդադար պիտի երգենք :

Այո, մենք ալ, ելն :

Այն պայծառ գետին եղբայրքը

Երբոր աչքերնիս տեսնէ,

Յայնժամ Աստուծոյ Գառնուկը

Արցունքնիս պիտի սրբէ :

Այո, մենք ալ, ելն :

Այն հանդարտ գետին եղբայրքը

Քաղցրութեամբ կ'առաջնորդէ

Իւր հօտին բարի Հովիւը,

Եւ զանոնք հոն կ'արածէ :

Այո, մենք ալ, ելն :

Այն կենաց գետին եղբայրքը

Վերջն է մեր պանդխտութեան .

Հոն լեցուն պիտի սրտերն մեր

Քաղցրութեամբ խաղաղութեան :

Այո, մենք ալ, ելն :

## Պանդխտին երգ

Քանի մը տարիէն

Մէկ օր մը պիտի դայ,

Երբ մահն ու գերեզմանն ալ,

Պիտի հասնին մեր վրայ :

Այն մեծ օրուան համար,

Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,

Քու արիւնովրդ զիս լուա,

Ու մեղքերէս մաքրէ :

Դեռ քիչ մը ջանք ալ կայ,

Ալ քիչ մը աշխատանք,

Քանի մը օր ալ վշտալից,

Եւ ալ պիտի չը լանք :

Այն քաղցր օրուան համար,

Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,

Քու արիւնովրդ զիս լուա,

Ու մեղքերէս մաքրէ

Քանի մը սուրբ օրեր

Մենք հոս պիտի վայլենք,

Եւ յաւիտենական հանդիստ

Շուտով պիտի տեսնենք :



Այն սուրբ օրուան համար,  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըզ զիս լրւա,  
 Ու մեղքերէս մաքրէ ։

Այն որ սիրով մեռաւ  
 Որ մեղ մահէն փրկէ,  
 Շուտով կրկին պիտի դառնայ,  
 Ու մեղ իւր քովն առնէ ։  
 Այն մեծ օրուան համար,  
 Ո՛վ Տէր, զիս պատրաստէ,  
 Քու արիւնովըզ զիս լրւա,  
 Ու մեղքերէս մաքրէ ։

Մահուան համար պատրաստութիւն

Հարկ է մեռնել, պիտի մեռնիմ .  
 Դեռ չը մեռած, ո՛վ Աստուած իմ,  
 Խնդիրքս քեզի մատուցանեմ,  
 Դուն ալ լրսէ, Տէր, կը խնդրեմ ։

Ինձի հաւատք, յոյս և սուրբ սէր  
 Դուն պարգևէ, կ'աղաչեմ, Տէր,  
 Որ ուղածիդ պէս միշտ վարուիմ,  
 Եւ երջանիկ մահուամբ մեռնիմ ։

Մահուան ժամուս իմ քովս կեցիր,  
 Քաղցրը բազուկդ գլխուս տակ դիր .  
 Վերջին ցաւերըս թեթեւցուր,  
 Հանգիստ, խաղաղ ինձ մահ մը տուր ։

Հաւատքս, ո՛վ Տէր, միշտ կենդանի  
 Պահէ մինչև որ շունչս հատնի .  
 Եւ իմ հոգիս ան տեղը դայ,  
 Ուր հաւատքի այլ պէտք չըկայ ։

Գ. Մ. Ծ.

### Գեղեցիկ Սէն

Ի՛նչ գեղեցիկ ու զարդարուած  
 է մեր Սիճնը, վերն շինուած,  
 Ի՛նչ գեղեցիկ քաղաք սիրուն,  
 Որուն մէջ կայ մեր Հօրը տունն ։

Ի՛նչ գեղեցիկ անոր գուռներն,  
 Այն թանկագին մարգարիաներն .  
 Ի՛նչ գեղեցիկ անթիւ սրբոց  
 Մէկտեղ քալած ոսկի փողոց ։

Ի՛նչ գեղեցիկ այն յաղթանակ .  
 Ամէն ճակտի վրայ կայ պըսակ .  
 Ի՛նչ գեղեցիկ ոսկի քընարք,  
 Որ Աստուծոյ կ'երգեն միշտ փառք ։

Ի՛նչ գեղեցիկ է այն աթոռն  
 Ուր է նստած մեր Թագաւորն .  
 Ի՛նչ գեղեցիկ բընակարան,  
 Սրբոց հանգիստը յաւիտեան ։



Հոն ցաւ զկայ  
 Սիրելիներս, եկէք,  
 Երբ մեռնելու մօտ եմ,  
 Երկնից վրայով ինձ երգեցէք.  
 Երգով թող վեր ելլեմ:  
 Հոն ցաւ կամ վիշտ չըկայ,  
 Հոն ցաւ կամ վիշտ չըկայ,  
 Երկինքը վեր ամէնն է սէր,  
 Ալ ցաւ կամ վիշտ չըկայ:  
  
 Երբ ճակատէս կաթին  
 Մահուան ցուրտ ծանր քրտինք,  
 Թող ցնծութեան երգեր լսուին,  
 Հոս ըսկըսի երկինք:  
 Հոն ցաւ, ևլն:  
  
 Վախճանըս հասնելուն  
 Երեսըս դիտեցէք,  
 Որ վրաս երկնից խաղաղութիւն,  
 Փառաց նշոյլ տեսնէք.  
 Հոն ցաւ, ևլն:  
  
 Թող Սիօնի երգերն  
 Լըսեմ, երբոր մեկնիմ,  
 Գանեմ ալ երգի բարևներն  
 Երբոր երկինք հասնիմ.  
 Հոն ցաւ, ևլն:

Ալ չը տեսնող աչքերս  
 Սիրով դուք գոցեցէք,  
 Եւ պաղ ու անարիւն ձեռքերս  
 Կուրծքիս վրայ ծալեցէք.  
 Հոն ցաւ, ևլն:

Շուրջ անկենդան մարմնոյս  
 Սիրելիներս գալով,  
 Յայնժամ տիրէ վախու տեղ յոյս,  
 Երգեն երկնից վրայով.  
 Հոն ցաւ, ևլն:

ՄԵՆԵԼՈՒ ԲՈՂՆԻ

Ես չեմ ուզեր հեռու ապրիլ երկինքէն,  
 Ուր որ սուրբեր սուրբ հրեշտակներ Տէրն կ'օրհնեն.  
 Ուր մեղք չկայ, ո՛չ հառաչանք, ոչ խաչեր  
 Անոր օրհնեալ սահմանէն ներս չեն մտներ:

Ես չեմ ուզեր յուսով միայն սպասել,  
 Ուր դառն մեղքերս կրնան յոյսըս ջախջախել.  
 Բայց հոն ուր որ կան վայելքներ հաստատուն՝  
 Հողիս հանգիստ հոն կը փնտռէ մընայուն:

Ես չեմ ուզեր ապրիլ տկար հաւատքով,  
 Օրհնեալ է օրն երբոր երթամ ֆրկչիս քով.  
 Ուր ո՛չ հաւատք պէտք է, ոչ կայ տարակոյս,  
 Հասկ' իր փառքը հոն կը փայլի, լինքն է լոյս:



Ես չեմ ուզեր հոս տեղ ապրիլ ուր որ միշտ  
Սիրելիներս կ'երթան քովէս, կու տան վիշտ .  
Այլ հոն ուր որ սիրածն հոգւոյս կը դաճում,  
Հոն, հոն երթալ, միշտ հոն ապրիլ կը բաղձամ :

Ես չեմ ուզեր Տէրըս ասանկ պաղ սիրել,  
Այլ կը ցանկամ ըզնա աժողջ վայելել .  
Սիրել կ'ուզեմ զայն տեսնելով բաց աչքով,  
Զեմ յագենար լոկ հեռուէն ըզգալով :

\* \* \*

Երբ կը նայիմ գերեզմանին  
Տըխուր և մութ լռիկ գուբին,  
Կու գայ ահը, դառն է մահը .  
Երբ կը խորհիմ Սուրբ յարութեան  
Ուրախալի օրուան վրան  
Կ'անցնի ահը, քաղցր է մահը :

Երբ կը խորհիմ թէ մէջս մեղք կայ  
Եւ թէ մեղքին մեծ պատիժ կայ,  
Կու գայ ահը, դառն է մահը .  
Երբ կը նայիմ ԽԱԶԻՆ վրայ  
Ուր որ մեղաց թողութիւն կայ,  
Կ'անցնի ահը, քաղցր է մահը :

Երբ կը խորհիմ տղոցս վրան,  
Որք անպաշտպան պիտի մնան,  
Կու գայ ահը, դառն է մահը .  
Երբ կը խորհիմ թ'Աստուած է Սէր,  
Խեղճ որբերուն Հայր է և Տէր,  
Կ'անցնի ահը, քաղցր է մահը :

Գ. Մ. Շ.

Քրիստոնէայ Բարեկամ Ժահուան Հրայ

Ինչո՞ւ վազեն մեր արցունքներն  
Եւ վիշտ մեր վրայ տիրէ,  
Երբ իր իմաստութեամբը Տէրն  
Իրենը ետ կանչէ :

Չէ՞ որ հաւատացեալներուն  
Օգուտ է մահն անգամ .  
Կեանքն անվախճան և վառք կ'առնուն,  
Պըսակ ալ անթառամ :

Պատերազմին լըմնցուցին,  
Շնորհքով յաղթող ելան .  
Ալ ցաւ կամ աշխատանք չունին,  
Երկնից հանգիստն մխտան :

Աստուած իրենն իրեն կանչեց,  
Վիշտ չը տիրէ մեր վրայ .  
Այլ մեր սրտերն թող միշտ ըսեն,  
Քու կամբըդ, Հայր, ըլլայ :

Տէրո՞ջ հեք յաւիտեան

“Տէրո՞ջն հետ յաւիտեան” .  
Ի՛նչ մըխիթարութիւն,  
Իրեն խօսքերն ինձի կու տան  
Կեանք և անմահութիւն :



Մարմնոյս մէջ բանտարկուած  
Պանդխտութիւն կ'ընեմ:

Բայց հայրենեացըս մօտեցած,  
Միշտ վրաներս կը կանգնեմ:

Իմ Հօրըս տունը վերն,  
Հողւոյս բընակարան,  
Երբեմն անոր ոսկի դռներն  
Ի՛նչ մօտ ինձ կ'երևան:

Բընակարան սիրուն,  
Հողւով կը հառաչեմ,  
Տեսնել սրբոց ժառանգութիւնն  
Վերին Երուսաղէմ:

Բայց երբ իմ վրաս կ'ելլան  
Երկմտութեան ամպեր,  
Նոյեան ազաւնիին նըման  
Հանգիստ մը չեմ գտներ:

Դարձեալ երբ կը ցրուի  
Այն մէզը գիշերուան,  
Ուրախ սրտիս վրայ կը փայլի  
Ազեղն խաղաղութեան:


## ՎՐԻՊԱԿԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւ	Տող	Սխալ	Ուղիւ
17	11	մաճը	մահը
24	25	հետն	հետն
43	16	զայն	զայն
62	5	ազատել	ազատել
66	20	պարտարկանութիւնը	պարտականութիւնը
82	42	Քոյդ	Քոյդ
93	25	կ'զուշացնէր	կ'զուշացնէր
















« Ազգային գրադարան



NL0245980



